



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1558

22 86
7-30

50 y-5 nr 67
1/16

ՀԱՅՈՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱԳՈՎԱՆ-ՄԱՐԴՈՒԹՅԱՆԿԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՆ-ԳՐԱԴԱՐԱՆԻ

ԱՐԵԲԱՆԴՐ ՄԵԼԻք-ԱԶԱՐԵԱՆԻՑ

2

2010

$$\frac{280}{669-4}$$

Горбунов

ԱՍՏՎԱԾԱՇԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ

22

Հ Օ Ւ Խ Տ Ա Կ Ա Բ Ա Ն Ի

7-30

Օրս աւետարանիչներից հաւաքած:

T U B U L U

ԱՐԵՎԱՏՈՒՐ Ս. Ք. Օ.



1865

089
U-odd



ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ

21 Июня 1865 года. Тифлис.

2001

Բ ՈՎ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ւ Ն :

1. Յիսուսի քրիստոսի կարապետը — Գաբրիէլ հրեշտակապետի աւետիս տալը Զաքարիային և Մարիամ կուսին:
10. 2. Մարիամ կոյսը Եղիսաբեթի մօտ ։ Յովհաննու մկրտչի ծնունդը։
12. 3. Յիսուսի քրիստոսի ծնունդը, և հովիւների երկրպագութիւնը։
19. 4. Երեք մողերը Արեկելքից, և բեթղեհեմի մանկանց կոտորումը։
19. 5. Յիսուսի ընծայումը տաճարին և տաճներկու տարեկան տաճարումը գտնվելը։
22. 6. Յիսուսի մկրտիւմը և սատանայից փորձիւմը։
24. 7. Յիսուսի առաջին հրաշքը և տաճարից վաճառականներին արտաքսելը։
26. 8. Նիկողեմոս Հրէից իշխանը և Յովհաննու մկրտչի բանտարկւիւմ։
30. 9. Ասմարացի կինը, Յագաւորազնի որդու բժշկւիւմ և Յիսուսի քարոզութիւնները։
33. 10. Առաքելոց հրաշքով ձուկ բռնելը. ծովի ալեկոծութեան դադարիւմ. և Գերզեսացոց դիւանարներին բժշկելը։
11. Անդամալուծի բժշկելը. Մատթէոս առաքելոց կոչումը. Յայրոսի աղջկան և տեռատեսի բժշկելը։

- 34 12. Պրոպատիկէի անդամալուծի, ձեռքը չորացած մարդուն և ուրիշ հիւանդների բժշկելը :
13. Տամներկու առաքելոց ընտրութիւնը. բորոտին և հարիւրապիսի ծառային բժշկելը :
- 45 14. Նային քաղաքի մեռելի յարութիւնը. մնդաւոր կնկայ դարձը, ոերմնացանի առակը :
- 50 15. Յովհաննու մկրտչի գլխատումը, Յիսուսի հինգ հացով և երկու ձկնով հինգհազար հողի կշտացնելը, ծովի վրայ գնումը :
- 54 16. Յիսուսի վարդապետութիւնը կենաց հացի վրայ :
- 57 17. Քանանացւոյ կնոջ աղջկայ բժշկւիլը :
- 58 18. Յիսուսի եօթը հացով և քիչ ձկնով չորս հաղար հողի կշտացնելը, մեկ խուլ և համր մարդու, նմանապէս և կուրին բժշկելը :
- 59 19. Յիսուսի պայծառակերպութիւնը. լուսնոտի բըժշկելը, մանր տղի անց խոնարհութեան օրինակ բերելը :
- 63 20. Յիսուսի հրաշքով երկդրամնան հարկ տալը, փորձելը Յիսուսին կանանց արձակելու համար, և աղօթք սովորացնելը աշակերտաց :
- 65 21. Աշխարհասէր տղանի առակը :
- 67 22. Անողորմ պարտատէրի և ողորմած Սամարացւոյ առակները և տասը բորոտի բժշկելը :
- 71 23. Եօթանասուներկու աշակերտաց ընտրութիւնը, Մարթա և Մարիամ, ի ծնէ կուրին բժշկելը, Յիսուսի իր աստուածութիւնը յայտնի քարողելը :
- 76 24. Անառակ որդու առակը :
- 79 25. Տնտեսի և անողորմ մհծատան առակը :

- 82 26. Գաստառորի, Փալքուեցւոյ և մաքսաւորի առակները :
- 89 27. Հարուստ մարդու դուռար գնութեղ արքայութիւն, և մշտակների առակը :
- 33 28. Ղաղարոսի յարութիւնը :
- 77 29. Զաքէոսի դարձը, աղնուականի առակը և Սարիամի խւզով Յիսուսին օծելը :
- 94 30. Յիսուսի փառաւոր մանիլը Երուսաղէմ, և հասեղ հրաշքներ դործելը :
- 44 31. Յիսուսի նորմէկանց առակներով խրատելը և Հրէից ողապահնաձայնելը :
- 105 32. Յիսուսի վերջին վարդապետութիւնները և տասն կուսանաց սոռակը :
- 110 33. Յիսուսի մատնութիւնը, վերջին ընթրիքը և աղաւարագի խորհրդոյ հաստատութիւնները :
- 113 34. Յիսուսի կտակը, նրա սոլոթք անելը իր և աշակերտների համար :
- 115 35. Յիսուսի աղօթքը պարտէզումը, ըմբռնումը, դատապարտելը և Պետրոսի ուրանալը :
- 118 36. Յիսուսին Պիղատոսի մօտ տանելը, նրա չարչարանքը և դատապարտելը :
- 123 37. Յիսուսի խաչնելութիւնը և թաղումը :
- 128 38. Յիսուսի յարութիւնը, աշակերտաց երեսումը և համբարձումը :

25

25

25

25

25
25
25

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԱՐԱՊԵՏԵ :

Ճշմարիտ աստուածզիտութեան լոյսը հանդա
չումէր մարդկութեան օրտի մէջ և ընդհանրա-
պէս պատել էր աշխարհքիւ երեսն տվիտութեան
խաւարը : Մարդիկ մոռացել էին բնական օրէն-
քը և ճշմարտութեան շաւզից մոլորած փոխա-
նակ ճշմարիտ Աստծոն, սուտ աստուածներ էին
պաշտում : Թէպէտ ասկաւ ոմանք հեթանոսնե-
րից բնական լուսով և իրանց մոքի զօրութիւ-
նով խելամուտ էլան Աստուածածանօթութեանը,
բայց Ճանաչեցին իրանց մոքի տկարութիւնը և
ըստ կարացին դէմք կանգնել հասարակաց մոլոր-
թեանը :

Ամբարտաւանն չոռմը՝ Յդոստոս կայսեր ժա-
մանակը ոչինչ մեծ բան չը կարաց անել, բացի
արտաքին խաղաղութիւն գձելը իր հաղատակների-
մէջ : Հոռոմները և Յոյները, որ կըթւած էին
բարոյագիտութեան մէջ, ոչինչ պակաս չ'էլան
խարբարս աղղերից :

Մարդկային ազգը սաստիկ կռապաշտութեան
մէջ ընկղմած, հեռացած Աստուածանից և դրէ-


ւած երջանկութիւնից, զգալով իր թշւառութիւնը՝ վասկագումէր ազատութեանը :

Այս, Աստծանից հեռացածը՝ հեռացած է երջանկութիւնից . երջանկութիւնից զրկածը՝ թշւառ է և տարաբաղդ : Տարաբաղդը և թշւառը միշտ կարօտումէ մէկ օգնութեանը : Էսպէս և կարօտ էր մարդկային աղջը էնպիսի մէկին, որ կարող լինէր աղատել նրան էն թշւառութենից, կարօտ էր նա էնպիսի օքմնու, որ նրան կըկին մօտացնէր Աստծուն, եղ գարձնէր իրան սրբութիւնը և անմեղութիւնը, հաշուցնէր և միացնէր նրան Աստծու հետ :

Ահա էսպէս մինչեւ որ աշխարհքիս երեսին Աստուածպաշտութիւնը անշափ նուազած էր՝ և տիրապետումէր հեթանոսութիւնը, տեսաւ Աստուած մարդկային աղջի տառապանքը, յիշեց իւրա փրկութեան ուխտը և կամեցաւ ուղարկել աշխարհք յաւխտենական բանը—իր Միածին Որդին, որ վերածնի, նորողի, և մաքրի ապականւած մարդկային աղջը՝ և նոր Եկեղեցւոյ հիմը դնի : Բայց որովհեաև աշխարհքս անհաւատութեան և չարութեան խռուարով արտած էր և չ'էր կարող մարդս հեշտ տեսնել ամէն բանը, նոր բացւած կուրի աշքերի նման՝ և յանկարծ մոիկ տալ էն երկնային լուսին, էս պատճառաւ.

Աստուած առաջընթաց լավտեր—կարապետ ու-
ղարկեց, որ արուսակի պէս առաջ դուս եկաւ
Փրկչին—Յիսուսի Քրիստոսի, արդաբութեան ա-
րեգակին . որպէս զի մարդկային տկար միտքը, որ
դեռևս խաւարի և մահի շուաքի տակ ծած-
կւած էր, առաջին անգամը պատրաստի—ծա-
նօթացնի արշալուսի հետ, պատճառոր՝ երբ փա-
քատւի մեղքի և անհաւատութեան խաւարը
հեշտութեամբ կարողանան տեսնել երկնային լուսի
վայլմանքը:

~~~~~





Պ Ա Տ Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

## ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՅ

Ն Ո Ր Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ի

**Չորս աւետարանիշներից հաւաքած:**

Մ Ա Ս Խ Ա .

1. ԳԱԲԲԻԵԼ, ՀՐԵՇՏԱԿԱՎՊԵՏԻ ԱԼԵՏԻՍ ՏԱԼԸ, ԶԱՔԱՐԻՍՑԻՆ,

ԵՒ ՄԱՐԻԱՄ ԿՈՒՍԻՆ : Դ. ու կ Ա .

**Երբ որ Աստծանից նշանակւած Յիսուսի—  
աշխարքիս Փրկչի գալստեան ժամանակը հասաւ,  
ինչպէս մարդարէի բերանով շատ անդամ խոս-  
տացել էր, առաջ առաջ Աստուած կամեցաւ նրա  
կարապետը (առաջուց եկող, ճանապարհ պատ-  
րաստող) ուղարկել, էս կերպով։ Հերովդէսի  
թագաւորութեան ժամանակը։ Հրէաստան մէկ  
քահանայ կար Զաքարիա անունով, և նրա կին  
Եղիսաբէթը։ սրանք երկուան էլ սուրբ և արդար։**

ամուլ (ըրեր) էին՝ որ մինչև իրանց ծերութեան  
 ժամանակը որդի չ'ունեին։ Աէկ անգամ Զաքա-  
 րիէն երբ տաճարը մտաւ Աստծու առջեւը խըն-  
 կարկելու՝ հրեշտակը երեւցաւ նրան, և ասաց.  
 «Մի՛ վախենար, Զաքարիա, Աստուած լսեց քու-  
 աղօթքը, քու կին Եղիսարեթը որդի կը ծնի, և  
 նրա անունը Յովհաննէս կը դնես (որ նշանակում  
 է՝ Աստծու շնորհք), և էն զաւակը՝ քեզ և ու-  
 րիշ շատերին ուրախութեան պատճառ կը լինի։  
 և Աստծուն շատ սիրելի լինելով գեռես մօր  
 փորից Հոգւոյն Սրբոյ շնորհքով պէտք է լքցւի, որ  
 իսրայէլացիքից շատերին պիտի դարձնի դէպի իւ-  
 րանց Տէր Աստուածը, և նրա առջեւից գնալով  
 Եղիս մարգարէի պէս զառ զզացմոնքով կը քա-  
 րովի և ժողովրդոց սիրտը նրա հետ կը կապի։  
 Էս էլ ասաց հրեշտակը, նա Աստծու խտաւոր  
 լինելու համար՝ դինի և օղի չը խմի։ Զաքարիէն  
 երբոր էս լսեց, տարակուսեցաւ և ասաց. «Ե՞ս  
 ի՞նչ պէս կը լինի՝ որ ես ծերացել եմ, և իմ  
 կնկաս տարիքը անց է կացել։ Հրեշտակը նրան ա-  
 սաց. «Ես եմ Գաբրիէլ հրեշտակը, որ Աստուած  
 ուղարկեց ինձ էս բանը քեզ աւետիս տալու։ և  
 որպէս դու ասածս չ'ես հաւատում, համբ  
 միաս մինչև էնօր՝ որ օրը որ կտարւի ասած»։  
 Եւ իսկոյն Զաքարիայի լեզուն պապանձեցաւ.

յետոյ երբ գնաց տուն, մէկ քանի օրից Նղիսաւ  
բիթը յղացաւ, և փառք էր տալիս Աստծուն:

Սրանից յետոյ վեցերորդ ամսին Աստուածն ար  
մէկանց Գաբրիէլ հրեշտակապեախն ուղարկեց Գաւ-  
լիեայի Նազարեթ քաղաքը, ուր բնակւումէր Մա-  
րիամ կոյսը (որ նշանուած էր Յովեկայ հետ և  
նա էլ իր պէս Գաւիթ մարզարէի ցեղից էր), և  
Մարիամ կուսի մօտ եկաւ հրեշտակը, ողջոյն  
տւաւ և ասաց . Ուրախ լիր, բերկեալդ, Տէր  
ընդ քեզ, Մարիամ կոյսը էս որ լսեց՝ շփոթւե-  
ցաւ, սկսաւ ինքն իրան մսածել թէ ի՞նչ պէտք-  
է լինի էս ողջոյնը: Հրեշտակը նոր մէկանց ա-  
սաց . Մի վախենար, Մարիամ, դու Աստծուն  
էնքան սիրելի էլար՝ որ հորէս պիտի յղանաս ըրդի  
կը ծնես, և նրա անունը Յիսուս կը դնես, որ կը նրա-  
շանակի՝ Փրկիչ կամ Ապատիչ, նա մեծ պիտի լինի  
և Որդի Աստուածոյ պիտի կոչւի . և Աստուած  
էլ նրա հօր Գաւիթի աթոռը իրան պէտք է տայ,  
և յաւիտեան կը թագաւորի Յակոբայ՝ այսինքն  
իսրայելացւոց ազգի վրայ: Են ժամանակը Մա-  
րիամը հրեշտակին ասաց . «Ի՞նչպէս կը լինի ինձ  
էդ բանը, որ ես մարդ չ'եմ ճանաչում»: Հրեշ-  
տակը պատասխան տւաւ, «Հոգին Սուրբ կը գայ  
քեզ. և Աստուածային ամենակարողութիւնով  
էս բանը կը կատարի, որովհեաւ նա՝ որ քեզաւ

Նից ավետի ծնի, Որդի Աստծոյ կը կուլի, Եւ  
ահա քու ազգական Եղիսաբեթն էլ ամուլ էր,  
ծերռմեան ժամանակը նա էլ վեցերորդ ամիս է,  
որ յղի է (երկուհոգիս)։ որովհետեւ Աստծու առաջել  
անկարելի բան չը կայո։ Էն ժամանակը Մարիամը ասաց, «Ահա Աստծու աղախինն եմ, թողինձ  
ինձ էնպէս լինի, ինչպէս որ ասացիր»։ և էս  
խօսքը լսելու պէս՝ յղացաւ Յիսուս Քրիստոս նրա  
արդանդումը։ Եւ էնպէս հրեշտակը նրանից հեռացաւ գնաց։

2. ՄԱՐԻԱՄ ԿՈՒՍԻ ԱԶՔԱԼՈՅՍ ԳՆԱԼԲ ԵՊԻՍՍԵԹԻ ՄՕՏ,

ԵԽ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿԲՏԸ ԵՆՈՒՆԴԻ. : Դուկ + Ե.

**Մ**արիամ կոյսը աւովիս առնելուց յետոյ՝ նոյն օրն ըումը գնաց Յուղայի քաղաքը և մասւ Զաքարիայի տուն Եղիսաբեթին աչքալոյս։ Եւ երբ որ Եղիսաբեթը լսեց Մարիամի ողջոյնը, խաղաց նրա փորումը վեց ամսւայ յղացած երեխէն, և Եղիսաբեթը լքցւած չողւով սրբով՝ բարձր ձենով ասաց, «Օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո, և էս ի՞նչ պատիւ է ինձ, որ իմ Տիրոջ մայրը եկել է իմ մօտ։ և էս բանով իմանում եմ, որ քու բարովելու ձենը ինչպէս որ լսեցի/ուրախութիւնից իսկոյն փորումս խաղաց մանուկը, և երանի էն մարդուն որ Աստծու յայտնած խորհուրդներին կը հաւատայ՝ թէ

ժամանակով պիտի կատարւի : Մարիամ կոյսըն էլ  
էն ժամանակը շնորհակալութիւնով փառք տւաւ  
Աստծուն , և սկսաւ էն խորհրդաւոր օրհնեաւ  
թիւնը ասել . «Մեծացուսի անձն իմ զջեր , և  
այլն» . և երեք ամիս մնաց Եղիսաբեթի մօտ և  
յետոյ գնաց իր տուն :

Եղիսաբեթի ծնանելու ժամանակը երբոր հա-  
սաւ՝ ծնաւ որդի , նրա ազգականները ժողովե-  
ցան ուրախանումէին և փառք էին տալիս Աստծ-  
ուն , պատճառ որ Աստուած ողորմութիւն ա-  
րաւ նրանց . յետոյ ութերորդ օրը ինչպէս որ  
Մովսիսական օրէնքն էր , եկան երեխին թւպա-  
տելու , և կամենումէին հօր անունը զնել Զա-  
քարիա . մայրը Չէ , անաց , այլ Յովհաննէս  
դրէք . միւսները չէին ուզում , ասումէին թէ,  
Չի լինի , ձեր ազգի մէջ էդ անունը ըլ կայ .  
յետոյ նշաններով հօրը հարցըին , և նա տախ-  
տակ ուզեց , և գրեց . թէ Յովհաննէս է դրա ա-  
նունը , իսկոյն բացուեցաւ Զաքարիայի լեզուն , և  
Հոգւով սրբով լքցւած սկսաւ խօսիլ և օրհնել  
Աստծուն և մարդարէանալով էս օրհնութիւնը  
ասել Օրհնեալ Տէր Աստուած Խարայէլի , և այլն :  
Էս ամէն բաները , որոնք որ լսումէին՝ դարմանա-  
լով ասումէին «Արդեօք ի՞նչ պիտի լինի էս մա-  
նեւկը » իսկ մանուկն Յովհաննէս ածումէր և զօ-

Եպինում՝ Հոգւով սրբով, և երբ մեծացաւ՝ դնաց  
անապատը և մնաց էնտեղ, մինչև որ Աստուած  
ինքը ուղարկեց քարոզել ժողովրդեան ապաշխա-  
րութիւնը, երկնքի արքայութեան մօտենալը, և  
պատրաստել Մեսիայի ճանապարհը :

Յ. ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ, ԵՒ ՃԱՎԻԽՆԵՐԻ ԵՐԿՐ-  
ՊԱԳՈՒԹԻՒՆԲ : Մատ . Ա . - Ղուկ . Բ :

**Մ**արիամ կոյար երբոր Եղիսաբեթի մօտից Նա-  
զարէթ իր տուն եղ եկաւ, Յովսէփը նրա դրսի  
նշաններից տեսնելով որ յղացել է, և չիմա-  
նալով թէ Հոգւով սրբով է՝ շատ շփոթւեցաւ  
իր մոքումը, բայց ինքը բարի և արդար էր, և  
ըստ կամեցաւ խայտառակել նրան, այլ մասածեց,  
որ թագուն արձակի նրան Երբոր Յովսէփիր էս  
բանը էսպէս մոքումը դրած քնած էր, Աստծու  
հրեշտակը երեւեցաւ նրան և ասաց. Յովսէփի  
որդի Դաւթի, մի՛ վախենար, վեր առ քեզ  
մօտ քու կնոջ Մարիամին, որ յղացել է (երկու-  
հոգիս է) Հոգւով սրբով. կը ծնի որդի, և անունը  
կը դնես Յիսուս, և նա կ'ապատի իր ժողովուրդին  
իրանց մեղքերից : Եւ իմացիր որ նրա վրայ կը  
կատարւի Աստծու ասած էն խօսքը Եսայի մար-/  
դարէի բերանով թէ՝ Ահա կոյս յղասցի և ծնցի  
Որդի, և կոչեսցեն դանուն նորա կմմանուէլ,  
որ թարգմանի՝ ընդ մեղ Աստուած :

X

Կարանիս վրայ Յովսէ իր որ զարթեցաւ, սիրտը հանգա-  
տացած՝ էնալէս արաւ, ինչպէս որ հրեշտակը ասաց :

Երբոր Յիսուսի ծնւելու ժամանակը մօտացել  
էր, որն որ մարդարէից խօսքով աղետք է բեթա-  
ղեհէմումը լինէր, Էն օրերումը Օդոսոս Հռոմա-  
յեցւոց Կայսրը հրաման տւաւ աշխարհագիր ա-  
նել (ամենի անունը իրանց ցեղով և քաղաքներով  
գրել), որոնք նրա իշխանութեան տակն էին : Ես  
պատճառաւ Յովսէ իր ինքը բեթղեհէմացի Կաւ-  
թի ցեղեց լինելով՝ Նազարէթից կնաց բեթղե-  
հէմ Մարիամի հետ որ իր անունն էլ գրել տայ  
աշխարհագրումը : Խըբոր եկան հասան բեթղե-  
հէմ, տեսան, որ քաղաքը լին էր բազմութիւ-  
նով աշխարհագրի պատճառաւ, մինչև որ ըստ կար  
նրանց համար պատշաճաւոր տեղ, և ատխալեւ  
յան էն դիշերը վեր դաշ մեկ այրի մեջ, ուր  
հովիւները գիշերով և աւերօնքներին պահում  
էին իրանց ոջարները : Էն անդ կամեցաւ ծնաւ-  
նիլ Բանն Աստւած, Յիսուս Քրիստոս աշխարհի  
Փրկիչը, Հեթանոսաց յօյսը և բոլոր մարդարէից  
գուշակութիւնը աշխարհքիս ստեղծման չորս հա-  
զար թւին :

Հովիւները՝ որ բեթղեհէմի դաշտումը բաց  
պահպանումէին իրանց ոջարները՝ տեսան Աստւ-  
ածոյ հրեշտակը, և շատ վախեցան . Էն ժամանակը

Հրեշտակը նրանց սիրա տւառ և ասաց, մի՛ վա-  
 խենաք, ահա, մեծ ուրախութիւն եմ աչքա-  
 լուս անում ձեզ, որ ամէն ժողովրդի համար կը-  
 լինի, պատճառ որ, էսօր Փրկիչ ծնառ ձեզ հա-  
 մար, որ օծուած Տէր է Դաւթի քաղաքումը, և  
 էս ձեզ նշան լինի. կըգտնէք մանուկին բարուրումը  
 վաթթած և մնրի մէջ դրած : Եւ յանկարծ էն  
 հրեշտակի հետ անհամար հրեշտակներ երեւացին  
 որ օրհնում էին Աստծուն և ասում» Աստու-  
 ծուն փառք երինքումը, խաղաղութիւն երկրումը  
 և բարեհաճութիւն մարդկերանց մէջու : Եւ երբ  
 որ հրեշտակները նրանցից վերացան, հովհանները  
 գնացին բեթղեհէմ, և զտան Մարիամին և Յով-  
 սէփին՝ և մանուկն էլ մարի մէջ դրած, երկր-  
 պաղութիւն տւին, եղ դառան, փառարանում  
 և օրհնումէին Աստծուն էն ամէն բանի հա-  
 մար, ինչ որ տեսան ու լսեցին : Արանից յետոյ  
 ութերորդ օրը՝ Մոլմիսական օրէնքը կատարելով  
 մանուկին թլպասեցին, և անունը դրին Յիսուս,  
 ինչպէս որ հրեշտակը առաջուց ասել էր նրանց:  
 4. Երեք Մոգերը Արեհելքից, Եւ բեթղեհէմսի ՄԱՆ-  
 ԿԱՆՑ ԿՈՏՈՐՈՒՄԸ: Մաս . Բ:

Յիսուսի ծնած ժամանակը՝ երեք մող կամ  
 ինչպէս ասումէն աստղաբաշխ թաղաւորներ՝ առ  
 լիւրէլքից եկան երուսաղէմ, և հարցնումէին թէ

ուր է ին նոր ծնած Հրեց թաղաւորը որի  
աստղը տեսանք մենք երենքումը և եկանք եր-  
կրպագութիւն տալու։ Հերովդէս թաղաւորը էս  
որ լսեց՝ շատ վախեցաւ, և բոլոր Նրուսաղէմա-  
զիք էլ ամենքը շիտեւեցան։ Էս պատճառաւ  
Հերովդէսը կանչեց իր մօտ բոլոր Հրեց քահա-  
նայապետներին և կարգացովներին, հարցրոց նը-  
րանց թէ ին Քրիստոսը կամ գալու Սեսիէն ո՞ր  
տեղ պիտի ծնուի։ Նրանք էլ ասացին թէ՝ «Բե-  
թղէհէմ քաղաքումը ինչպէս որ Միքիա մար-  
դարէն դրում է»։

Ին ժամանակը Հերովդէսը ծածուկ կանչեց իր  
մօտ ին երեք մողերուն, և սայդ տեղեկացաւ  
նրանցից աստղը երեւելու ժամանակը՝ արձակեց  
նրանց, և չար մողավ զնացէք ասաց, ստովնի  
մացէք մանուկի համար, և երբոր կը գտնէք, ինձ  
իմաց արէք, որ ես էլ գամ նրան, երկրպագու-  
թիւն տամ։ Երբոր մողերը Հերովդէսի մօտից  
դուս եկան, ին աստղը նոր մէկանց երեւաց նրանց՝  
և առաջնորդելով տարաւ մինչև բեթղէհէմ, և  
իսկ և իսկ ին տեղի վրայ կանդնեց, որ տեղ  
որ Յիսուս մանուկն էր։ Նրանք հէնց որ տեսան  
աստղը, շատ ուրախացան և ներս մտան տուն,  
տեսան Յիսուսին իր մօր Մարիամի հետ, ընկան  
նրա առջեւը երկրպագութիւն տւին նրան, և

բայ արին իրանց գանձը, ոսկի, կնղըռուկ և զմուռ  
ուը ընծայ բերին: Եւ յետոյ էն գիշերը հրեշ  
տակից իմանալով Հերովդեսի չար միտքը՝ էլ նրա  
մօտ եղ չը զնացին, այլ մէկ ուրիշ ճամբով զնաւ-  
ցին իրանց երկիրը:

Հերովդէսը երբոր մեսաւ որ մնգերը էլ եղ  
չեկան, շատ բարկացաւ, և վախենալով՝ չը լինի  
թէ էն նորածին մանուկը մէկ օր խղի նրա ձեռքից  
թագաւորութիւնը՝ հրամայեց կոտորել բոլոր բեթ-  
ղեցէմի և նրա մօտ աեղերի մանդր երեխանցը՝  
երկու տարեկանից սկսած մինչև ծծի երեխեցը՝  
որ Յիսուսն էլ նրանց հետ սպանւի: Բայց խա-  
րեցաւ Հերովդէսը սկատճառոր Յովսէփը առա-  
ջուց հրեշտակից իմացաւ Հերովդեսի չար կամքը:  
Վեր առաւ Յիսուսին մօրը հետ, վախաւ Եգիալ-  
տոս, և էն տեղ մնաց մինչև Հերովդեսի մահը:  
Արանից յետոյ կրկին երեեցաւ հրեշտակը Յովսէ-  
փին և ատաց՝ որ եղ դառնայ Խարայէլացւոց եր-  
կիրը: Բայց Յովսէփը երբոր եկաւ տեսաւ որ Ար-  
քիզայս Հերովդեսի որդին է թագաւորում իր հօր  
տեղ՝ վախեցաւ Երուսաղէմ կամ Բեթղեշէմ զնալ,  
այլ հրեշտակի առաջնորդութեամբը զնաց Գաւ-  
լիեայի կողմերը և Նաղարէթ քաղաքումը բնակ-  
ւեցաւ, որ կատարւի մարդարէի խօսքը՝ թէ Նա-  
զուլուցի կը կոչւի:

5. ԵԿԱՐԴԱՐ ԸՆԴՈՅՈՒՄԸ ՏԱԶԱՐԻՆ, ԵՒ ՏԱՄՆԵՐԿՈՒ  
ՏԱՐԵԿԱՆ ՏԱՃԱՐՈՒՄԸ ԳՏՆԻՔԻԼ: Պուլ + Բ

Բնեթղեհէմի մանկանց կոտորելուց առաջ, ելքոր  
Յիսուս քառասուն օրւայ էլաւ, նրա ծնողը Առվա-  
սիսական օրէնքով՝ երկու տասնակի կամ երկու  
աշաւնու ձագ հետները վերառած՝ Յիսուսին  
Արուսաղէմի տաճարը տարան որ Աստծուն ըն-  
ծայեն: Են ժամանակը Երուսաղէմումը մէկ  
սուրբ և արգար ծերունի մարդ կար Սիմեոն առ-  
նունով, որ սպասում էր Մեսիային, և Հոգին  
սուրբ էլ յայտնել էր նրան թէ մինչև որ նրան  
չը տեսնի՝ չը պէտք է մեռնի լնքը: Են ժամա-  
նակը նա Աստծանից աղդւած՝ եկաւ տաճարը  
և ուրախութեամբ գիրկն առաւ Յիսուսին, և  
փառք տալով Աստծուն՝ ասաց. «Ճէր, ինչպէս որ  
ասացիր՝ այսուհետեւ թաղ որ դնայ Խաղաղու-  
թիւնով հանգատանայ քու ծառէդ. որովհետեւ  
էս աչքերս տեսան քու աշխարհք դաշ փրկելու,  
հեթանոսներին լուսաւորելով, և Խրոյէլացւոց  
որ քու ժողովուրդդ են՝ աւելի փառաւորելով»:  
Յետոյ եդ գարաւ դէպ'ի Կոյս Մարիամը, և մար-  
դարէանալով ասաց թէ. «Սա Խրոյէլացւոց շա-  
տին կործանման և շատին փրկութեան պատ-  
ճառ կը լնի, և սրա վրայ շատ ավագ միան  
ովիտի լնի, Էնքան որ՝ քու միշտ իւ որդիք թէ».



սրով աղիտի խոցւի էս բաների համար։ Էն ժամանակը Աննա մարդարկուհին, որ եօթը տարի մարդու հետ ապրելուց յետոյ, մինչեւ ուժուն ու չորս տարեկան որբերի էր, որ դիշեր ցերեկ սկս սկահելով և աղօթքով տաճարից չեր հեռանաւմ, և ուրախութեամբ փառք էր տալիս Աստծուն՝ և Յիսուսի մեսիա լինելն էր քարոզում նրանց, որ յուսով սպասում էին։ Եւ էս ամենը Աստծու օրէնքով կատարելուց յետոյ եղ գնացին իրանց Նազարէթ քաղաքը,

Յովաէփ և Մարիամ կոյսը սովորութիւն ունէին տարէնը մի անգամ զատկին՝ Երուսաղէմի տաճարը ուխտ գնալ. մէկ անգամ էլ երբ որ Յիսուս տամներիու տարեկան էր՝ նման նապէս վեր կացան գնացին ուխտ, էնտեղից եղ գալուց ինչպէս որ էլաւ առանց նրանց գիտութեան Յիսուսը մնաց Երուսաղէմումը, Բայց նրանք կարծում էին թէ միւս ճամբորդների հետ է գումա. սկիզբը ոչինչ միտք չ'արին. յետոյ երբ մէկ օրւայ Ճամբայ անց էին կացել՝ դէս ու դէն ողբառելով էլ չը գտան՝ և նոր մէկանց եղ դարսն Երուսաղէմ, և էնտեղ երեք օր պտում էին. վերածը գտան նրան տաճարումը, որ վարդապետների հետ նստած՝ լսում էր նրանցից, և նրանց բաներ էր հարցնում։ Զարմանում էին ամենքը նրան իմաստութեանը և չնորհալի պատասխանների

վրայ : Են ժամանակը նրա մայրը շատ զարմացած՝  
ասաց նրան . ալ բղեակ , ես ինչ բան արիր մեզ  
որ էնքան քեզ պոռելով նեղացանք : Յիսուս  
պատավան տւառ . Փի՞նչ էիք ինձ ուրիշ տեղ  
պառում , չէիք իմանում որ ես իմ հօրա տանը  
ալէտք է լինիմ : Յետոյ վեր կացաւ գնաց նրանց  
հետ Նաղարէթ , և հնաղանդ էր նրանց :

6. ՅԵՍՈՒՍԻ ՄԱՐՏՈՒԹԻՒՆԻ ԵՒ ՍԱՏԱՆԻՑ ՓՈՐՁԻՒԼԸ :

Առաջ + Գ . Գ . Դ . Պ . Կ . Գ .

Երբ Յիսուսի Քրիստոսի աշխարհքիս յայտ-  
նելու ժամանակը հասաւ՝ Յովհաննէս Մկրտիչը  
որ մինչև էն միջոցը անապատումը ճգնաւում էր,  
Աստծու հրամանաւ եկաւ . Յորդանան զետի կող-  
մերը , և սկսաւ ժողովրդոց ապաշխարութիւն  
քարովել և ասել թէ Ապաշխարեցէք , պատ-  
ճառ որ մօտացել է երկնքի ժագաւորութիւնը .  
Ու որ գնումէր Յովհաննէս Մկրտչի մօտ՝ ականջ  
էր գնում նրա քարովութեանը և զզջով ա-  
պաշխարում էր և խռառվանու ում էր իր մեկքերը ,  
և Յովհաննէսի մկրտելը ապաշխարութեան նշան  
էր : Յովոր ժողովուրդը տեսնելով նրա բարի վարքը՝  
իմացան թէ նա Աստծուց է ուղարկած . մինչև  
անդամ կարծիք տարան թէ նա ինքն լինի Մե-  
սիէն : Էս ողառճառաւ միւս Հրէայքը քահանաւ

ներ ուղարկեցին նրա մհա՛ որ հարցնեն թէ զու  
 նվ ես, Յովհաննէսը պատասխան տւառ թէ,  
 «Ես չեմ Մեսիէն, այլ նրա կարապետն (Ճա-  
 նապարհ պատրաստող) եմ, ինչպէս Եսայի մար-  
 դարէն ասել ե ինձ համար. Զայն բարբառոյ  
 յանապատի. որ դուս եմ եկել մեսիայի առջեից  
 գալիս եմ՝ ճամբէքը ուղղելու և պատրաստելու որ  
 իմ ետևիցս նա էլպէտք է հանի. և ես արժանի  
 չեմ նրա կօշիկները վերցնել: Ես ձեզ մլրառում  
 եմ միայն ջրով ապաշխարութեան նշան. բայց  
 նա պէտք է մլրաի ձեզ չոգւով սրբով՝ որ կրա-  
 կի պէս ձեր մեղքերը կէրի. Երբ որ Յովհաննէսը  
 էս աեսակ բարովումէր և մլրառում, Յիսուս էլ  
 իրը երեսուն տարեկան Նապարէթից զնաց Յոր-  
 դանան գետը, որ ինքն էլ մլրաւի: Յովհաննէսը  
 երբ որ աեսաւ նրան, հրաժարումէր և ասում,  
 «Ես պէտք է քեզանից մլրառեմ, դու ի նձ մօտ  
 ես գալիս մլրառելու»: Յիսուս պատասխան տւառ,  
 թող հիմի ու հիմի որ էսպէս լինի. որովհե-  
 աւ, ասաց, մեզ կը վայելի որ բոլոր արդարու-  
 թեան պարոքը կատարենք: Եւ երբոր Յիսուս  
 մլրտեցաւ, և ջրից դուս եկած՝ աղօթք եր ա-  
 նում, յանկարծ երկինքը բայցեցաւ՝ Հովին սուրբ  
 աղաւնուոյ կերպարանքով վեր եկաւ Յիսուսի վրայ.  
 երկնքից մէկ ձէն էլ լսեցաւ թէ զու ես իմ  
 սիրեկան Որդին՝ որ քեզ հաւան կացայ:

Ակրտուելուց յետոյ Յիսուս գնաց անապատը.  
 և էն տեղ քառասուն օր և քառասուն դիմք  
 ծում պահեց և յետոյ քաղցեցաւ . էն ժամա-  
 նակը սատանէն մօտ եկաւ որ փորձի Յիսուսին և  
 ասաց նրան « Եթէ դու Աստծու որդի ես՝ ասա  
 էս քարերին որ Հաց դարնան»: Յիսուս պատա-  
 խան տւաւ թէ « Ոչ թէ միայն Հացով մարդ  
 կ'ասլի , այլ բոլոր Աստծու տւած պատուիրանք-  
 ներով»: Յետոյ սատանէն տարաւ Յիսուսին Ե-  
 րուսաղէմ , և տաճարի բարձր աշտարակի վրայ  
 կանգնացրեց և ասաց . « Եթէ Աստծու Որդի ես,  
 ցած զձիր քեզ էս տեղից . պատճառ որ գրւած  
 է թէ Աստծուած քեզ Համար իր հրեշտակներին  
 պատուիրել է՝ որ քեզ ձեռքերի վրայ բռնած  
 պահեն , որ ոսոյ քարին չը դիպչի»: Յիսուս էլ  
 ասաց . « Գրւած է թէ՝ մի՛ փորձիր քու Տէր  
 Աստծուն»: Յետոյ էլի սատանէն մէկ բարձր լե-  
 րան վրայ տարաւ Յիսուսին , և էնտեղից մէկ  
 վայրկենումը ցոյց տւաւ նրան աշխարհքիս բոլոր  
 թագաւորութիւնները և փառքը , և ասաց .  
 « Ես ամենը քեզ կը տամ՝ եթէ ընկնես առջեւ և  
 ինձ երկրպագութիւն տաս »: Կն ժամանակը Յի-  
 սուս շուռ . եկաւ « Գնան , ասաց . Հեռացիր ին-  
 ձանից սահուանայ . գրւած է թէ՝ քու Տէր Աստ-  
 ծուդ երկրպագութիւն տաս , և նրան միայն

պաշտեաւ։ Յետոյ հետացաւ սատանէն և հըեշ  
տակները մօտ եկան և ծառայում էին նրան։  
Սրանից յետոյ դուս եկաւ Յիսուս՝ որ էլի յայտ  
նւի աշխարհքիս և նորմէկանց Յորդանան զետի  
կողմը անցկենալիս՝ երբ որ տեսաւ նրան Յովհաննէս  
Մկրտիչը, ցոյց տւառ իր աշակերտներին և ասաց  
«Ահա սա է իմ ձեզ քարողած Քրիստոսը Աստ  
ծու դառը, որ աշխարհքիս մեղքը պիտի վերցնի»։  
Կո որ լեցին՝ էն աշակերտներից երկուսը դուս  
եկան վեացին Յիսուսի ետելից։ և սրանից յետոյ  
ուրիշները։

7. ՅԵՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ՀՐԱԴՔԸ ԿՈՆԱԳԱԼՎԱԿՈՒՄԸ,  
ԵՒ ՏԱՃԱՐԻՑ ԱՐՏՈՒՐԵԼ ՎԱՃԱՌՈՊԼՆԵՐՈՒՆ։ Յով. Բ. Գ.

Գալիեայի կանաքաղաքումը հարսանիք կար  
ուր մեծրւած էր Յիսուսի մայրը և ինքը Յիս  
ուս իր աշակերտներով։ Երբ որ էս հարսնիքումը  
դինին պակսեցաւ՝ Մարիամ՝ Կոյսը եկաւ Յիսուս  
ովն ասաց թէ «Գինի չունինու Յիսուս եւ սկա-  
տավիան տւառ, մեզի՞նչ իմ ժամանակս էլ դեռ չէ  
հասել։ Բայց Մարիամ կոյսը իմանալով Յիսուսի  
միտքը՝ ծառաներին ասաց՝ թէ Յիսուս ինչ որ  
աօի՝ էնսկէս կատարեն։ Էն հարսնիքի սանը վեց  
քարե կուժեր կային որոց ամէն մէկումը մանումը  
էր երկու կամ երեք մար (չափ) Յիսուս  
հրամայեց նրանց ջրով լքյնել էն չափերը մինչև

բերան և տանել տաճարապետին (կարդաղըլիչ), երբ  
որ տաճարապետը խմեց՝ տեսաւ որ պատուական  
գինի էր. և չիմանալով թէ ի՞նչ տեղից է: (բայց  
ծառաները դիտեն, որ ջռորը իրանոք ածին),  
դարձաւ դէպ ի փեսայն և ասաց ողու չ'ես իւ-  
մանում սովորութիւնը՝ որ առաջ լսւ գինին կը-  
բերեն կը բաժանեն: և յետոյ երբ որ խմած հար-  
բած կը լինին, էն ժամանակը վատը կը բերեն:  
բայց դու լնոդհակառակը՝ մինչև հիմա պահե-  
ցիր էդ սկառուական դինին: Յիտուս էս հրաշ-  
քով յայտնեց իր մեծութիւնը և սրանով աշա-  
կերտեն էլ աւելի հառատացին նրան:

Արանից յետոյ Յիտուս գնաց կափառնառում  
իր մօրը և աշակերտների հետ, և մէկ քանի  
օրից յետոյ էն տեղից գնաց Երուսաղէմ՝ զատկի  
տօնի պատճառաւ: Երբոր տաճարը մասն տե-  
սու՝ որ էն տեղ ծախումէնին կով, ոչխար, աղաւ-  
նի, և շումայիովները (զառափներ) նատած ա-  
ռուտուր էնին անում: Յիտուս չուանից (թոկից)  
մէկ խարազան (մաթրախ) շինեց, և նրանց վրայ բար-  
կանալով սեղանները քամովեց, փողերը ցրուեց, և  
էնպէս ամէնին դուս արաւ քշեց, ասելով թէ,  
Տարէք, էս տեղից կօքցրէք, իմ հօր տունը առու-  
տուրի տուն մի՛ շինէք: էն ժամանակը Նը-  
րէաները շուռ եկան ասացին: Ի՞նչ նշանով կարաս

հաստատել դու մեզ՝ որ իրաւունք ունիս էդ  
բանը անելու», Յիսուս պատասխան տւառ  
աբանդեցէք ասաց, էդ տաճարը, և ես երեք օ-  
րումը կը շնեմ»։ Հրեաները ասացին թէ քա-  
ռասուն ու վեց տարումը շնուեցաւ էս տաճարը,  
դու երեք օրումը ի նշպես պիտի շնես ։ Բայց  
նրանք չիմացան որ Յիսուս իր մողովինը՝ տաճա-  
րին նմանացնելով ասաց էս բանը, որ պիտի մեռա-  
նէք, թաղւէք և երեք օրույ վրայ վեր կենար :  
Եւ երբոր Յիսուս յարութիւն առաւ՝ աշակերտ-  
ները միաը բերին էն բանը, և հաւատացին որ  
Ճշմարիտ է ըւել նրա խօսքը։ Էս պատկի տօնին շա-  
տերը աեմնելով Յիսուսի հրաշքները՝ հաւացա-  
ցին նրան :

8. Նիմո՞ւթե՛ս ՀրեաՅ Իշխաններ, ԵՒ ՅԱՆՀԱՆՆՈՒ ՄԿՐՏ-

ՉԻ ԲԱՆՏԱՐԿԻԵԼ : Յովհ. թ. գ.

Էս ժամանակը հաւատացողներից մէկն էլ  
Նիմոդեմոնն էր՝ որ ինքը իշխան էր և աղանդով  
փարիսեցի. աս ծածուկ զիշերով եկաւ Յիսուսի  
մօտ, որ Ճշմարիտ հաւատքի բանը լի և սովորի.  
և Յիսուսից իմացաւ թէ՝ մարդս կարող չէ  
երինքի արքայութիւնը գնալ մինչև որ մկրտե-  
լով նրա հողին նորմէկանց չը ծնւի. բաց ի սր-  
բանից սովորեցաւ և Յիսուսի մարդեղութեան  
խորհուրդը, և իմացաւ թէ էնշափ սիրեց մարդւ

կանց, որ չը խնայեց իր Միածին Որդին նրանց համար, և ուղարկեց որ գայ խաչւի և մեռնի և ով որ նրան հաւատայ՝ փրկւի, և ով չը հաւատայ՝ գատապարտւի :

Արանից յետոյ Յիսուս իր աշակերտների հետ Երուսաղեմից դուս եկաւ գնաց Յորդանանի կողմը և էստեղ քարոզումը և մլրտում։ Էստուր վրայ Յովհաննէսի աշակերտները նախանձւելով սկսան գանգատել Յիսուսի վրայ ։ Յովհաննէսը պատասխան տւառ նրանց և ասաց ։ «Ոչ ոք կարող չ'է իրանից բան անել, եթէ տւած չը լինի նրան երինքից ։ Նա պէտք է աճի մեծանայ և ես մեղմանամ պստկանամ։ Հայրը սիրումէ Որդուն, ամէն բանը տւառ նրա ձեռքին, Ով որ կը հաւատայ Որդուն, կընդունի յաւիտենակտն կրանքը։ Յովհաննէսը էսպիտի քաղղըր խօսքերով խըրբառումը ամենին, որ խստակ սրտով հաւատան ճշմարիտ Մեսիային և անտարատ վարքով հետեւն նրա Ճամբին։

Բայց սրանից յետոյ էլ շատ ժամանակ չ'անցաւ կացաւ որ Յովհաննէս Մկրտիչը Հերովդէս ըոր բորդապետին խրատնւու պատճառաւ բոնւեցաւ բանստումը :

9. ՍԱՄԱՐԱՑԻ ԿԻՆԸ, ԹԱԳԱՒՈՐԱԶՆԻ ՈՐԴՈՒՆ ԲԱԼԵ-  
ԿԵԼԸ, ԵՒ ՅԻՍՈՒՍԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ : Յովհաննես, Պատրիարք, Պատրիարք, Պա-

**Երբոր Յիսուս լսեց թէ Յովհաննես Մկրտչը**  
բանար ընկաւ, և տեսնելով Փարիսեցւոյ նաւ-  
խանձը իրա դէմ, թողաւ Հրէաստանը և միւսա-  
մնպամ գնաց Գալիլեա և Սամարիայով եկաւ  
Սիւքար քաղաքի մօտ : Ճանապարհին դադրած  
կէսօրւայ դէմ նստաւ մէկ ջրհորի մօտ, որ հան-  
գատանայ : Էն ժամանակը Սամարիայից մէկ կնիկ  
եկաւ. ջուր հանելու : Երբ Յիսուս նրանից խու-  
լու ջուր ուղեց, կինը ասաց նրան, «Դու Հրէայ  
ես, ինչի՞ ես ինձանից խմելու ջուր ուղում,  
պատճառ որ Հրէայք չ'են խառնակում Սամա-  
րացւոյ հետ :

**Էն ժամանակը Յիսուս զանապան խօսքերով**  
հասկացրեց նրան իրա Մեսիա լինելը : Էս որ լսեց  
կինը՝ թողաւ կուժը և վաղեց գնաց քաղաք  
քարոզումներ և ասում թէ՝ «Ենպէս մէկ մարդարէ  
մարդ կայ, եկէք տեսէք նրան, որ պատճեց ինձ  
ամենը, ինչ որ անց է կացել իմ գլխիս, երեխ  
թէ նա Քրիստոսն է»: Երբոր կնիկը Յիսուսի մօ-  
տից գնաց, աշակերտները տեսան որ Յիսուս մո-  
ռացել է կերակուրը և ուտելու բան չ' ուղում՝  
միտք բերին որ հաց ուտի : Յիսուս պատասխան  
տւաւ թէ՝ «Ես ուտելու կերակուր ունիմ, որն

որ դուք չեք իմանում։ Աշակերտները սկսան  
մէկ մէկու հարցնել թէ՝ ովք բերաւ նրան ուտեւ  
լու բան։ Են ժամանակը Յիսուսն էլ ասաց։ «Են  
է իւր կերակուրը՝ որ ինձ ուղարկողի կամքը կա-  
տարեմ»։ Երբոր էս խօսակցութեան մէջն էին,  
մէկ էլ աեսնեն որ էն կնիկը բաւական մարդկե-  
րանց հետը վերառած բերաւ Յիսուսի մօտ և  
լսելով Յիսուսի շնորհալի խօսքերը՝ հաւատացին  
նրան։ և յետոյ աղաւեցին և տարան Յիսուսին  
քաղաք և երկու օր պահեցին իրանց մօտ։

Են տեղ էլ նորմէկանց Յիսուսի քարոզները  
լսելով ուրիշ շատերն էլ հաւատացին էնսիս որ՝  
ասումէին էն կնկան թէ «Այսուհետեւ ոչ թէ  
քու խօսքիդ ենք հաւատուր, այլ մենք մեր ան-  
կաջով լսեցինք, և իմացանք որ Սա է բոլոր աշ-  
խարհիս ճշմարիտ Փրկիչը»։

**Ակրտութիւնից յետոյ վրայ երկրորդ տարին**  
սկսաւ Յիսուս համարձակ քարոզել Հրեաների  
ժողովարաններումը, և շատ ժողովուրդ լսումէր  
և հաւատում և փառաւորումէին նրան։

**Սա քարոզութեան գլխաւոր նպաստակն էն**  
էր, որ սովորացնի մեղաւորներին զղջալ և ապաշ-  
խարել առանց որոյ կարող չ'են փրկւիլ մեղաւոր-  
ները։ յորդորումէր Աստծու օրէնքները պահ-  
պանել, արհամարհել աշխարհիս անցաւոր մե-

ծութիւնը : Հրամայումէր սուրբ սիրով սիրել աշ  
մենին , առաւել թշնամիներուն . Ներել մէկ  
մեկու և ողօրմել աղքատներին . Հնազանդ լի-  
նել Տէրերին ինչպէս Աստծուն , փախչիլ Փարի-  
սեցւոց կեղծաւորութիւնից , որոնք երեսանց սուրբ  
էին երեւում մարդկանց , բայց ներսից լիքն էին  
ապականութիւնով . սովորացնումէր ամենին միշտ  
աղօթք անել և ամէն նեղութիւնումը Աստծուն  
դիմել , իսկ ամէն բանից աւել Աստծուն սիրել  
և նրանից վախենալ :

Ասպէս քարոզելով երբ Յիսուս Սամարիայից  
եկաւ Գալիլեա , և գնաց Կապարէթ . ուշ մե-  
ծացել էր , և շարաթ օրը մտաւ Հլէից ժողո-  
վարանը՝ տին նրան Եսայի մարդարէի զիքքը .  
և երբ վերկացաւ , որ կարդայ , բացւեցաւ հենց  
էն տեղը , ուր զբած էր . Աստծու հոգին իմ  
վէս է , էնդուր համար և օծեց ինձ , մեղաւոր-  
ներին քարոզելու ուղարկեց ինձ . Հողւով հի-  
ւա դներին բժշկելու և գերիներին թողութիւն  
քարոզելու : Ծածկեց զիքը և տւաւ սրաշտօննաւ-  
ներին և նատաւ՝ և ամէնքը որ ժողավրդանոցումն  
էին՝ նրան էին մտիկ տալիս և սպասումէին՝ թէ  
ինչ պէտք է ասի :

Քրիստոս ասաց . «Եսօր լսեցիք զուք էս զրի  
լսուքը , յայտնի բան է որ հիսի կամք դոք .  
բժիշկ , բժշկի՞ր քու անձդ առաջ :

Անչքան որ կավառնառւմ քաղաքումն արիր  
արա էս տեղ էլ քու քաղաքումդ . Բայց լաւ իս  
մայէք , որ մարդարէն իրա գաւառումը պատիւ  
չունի : Եղիսյի ժամանակը , երբ երկինքը երեք  
ապրի ու կէս կապեցաւ , շատ որբեւ ըիք կային .  
բայց Եղիէն միայն ուղարկեցաւ Սարեփիթա մէկ  
որբեւ ըրու կնկայ մօտ . Եղիսէի ժամանակն էլ  
Խարայէլացւոց մէջ շատ բորսաներ կային , բայց  
Եղիսէն միայն Նէման Ասորուն բժշկեց : Եւ երբ  
Յիսուս էս բանը իր վրայ մեկնեց , և նրանց կու-  
րութիւնը և ապերախտոթիւնը երեսներին տը-  
ւաւ . շատ բարկացան նրա վրայ և բռնեցին քա-  
ղաքից զուս տարան և ուզումին սարի ծէրից  
ցած զձեւ նրան , բայց նա անց կացաւ նրանց  
միջեց և գնաց :

Յետոյ Յիսուս միւսանդամ եկաւ կանա Գտա-  
լիկայ . ուր ջուրը գինի էր փոխել : Են տեղ կար  
մէկ մարդ Շագաւորազն , (Շագաւորական ցեղից)  
որի որդին մերձ ի մահ հիւանդ էր կավառնառու-  
մումը : Աս որ լսեց Փրկչի Հրաշքները եկաւ նրա  
մօտ և աղաչումիր , որ գնաց և բժշկի նրա որ-  
դուն Ասաց նրան Յիսուս , գնան . քու որդին  
կենդանի է , Թագաւորազն հաւատոց Յիսուսի  
խօսքին և գնաց : Երբոր նա մտնում! ը իրա քա-  
ղաքը , առաջ եկան նրա ծառաները և աչքա-

լուս արին՝ թէ քու որդին կենդանի է, և նա  
հարցրուց նրանց՝ թէ ո՞ր ժամուն ողջացաւ, Նը-  
րանք ասացին երեկ եօթներորդ ժամուն թռ-  
ղաւ ջերմը։ Նա խմացաւ, թէ էն ժամանակին  
է բժշկւել իր որդին, որ ժամանակը որ ասաց  
Յիսուս թէ՝ քու որդին կենդանի է, էն պատ-  
ճառաւ հաւասար ինքը իր բոլոր տնով տեղով։

10 • ԱՌԱՔԵԼՈՅ ՀՐԱՇԲՈՎ ԶՈՒԿ ԲՈՆԵԼԸ, ԾՈՎԻ ԱԼԵ-  
ԿՈՇՈՒԹԵԱՆ ԴԱԳԱՐԵԼԸ, ԵՒ ԳԵՐԳԵՍՈՑԻՈՑ ԳԻՒԱՀՈՐ-  
ՆԵՐԻՆ ԲԺՇԿԵԼ։ Դակ, Ե, Մաս, Է, Մարկ, Դ.

ԱԵԿ անգամ Յիսուս Գալիլեայումը՝ ԳԵՆՆԱՍԱ-  
ՐԵԺԻ փոքրիկ ծովի մօտ էր, և էն տեղ ժողով-  
վորոց բազմութենից նեղւած՝ տեսաւ դատարկ  
կանգնած երկու ձկնորսի նաւ. սրանցից մէկը  
Սիմոն Պետրոսինն էր, և միւսը Յակովոսի և Յով-  
հաննէսի Զեբեթեայ որդւոցը, Յիսուս մատ Սի-  
մոնի նաւը, և էն տեղից սկսաւ քարող ասլ  
ժողովրդոց։ Երբոր վերջացրեց քարոզը Յիսուս  
ասաց Սիմոնին որ՝ քաշեի գէպի ծովը և ուռիս-  
նը (թռող) գձի ձուկ բռնի։ Սիմոն Պետրոս  
սկսաւ գանգատ անել թէ ովարդապես, բոլոր  
կիշերը աշխատեցնք, և ոչինչ ըրբոնեցինք, բայց  
հիմա սասաց, կրլսենք խօսքդ։ և երբոր ուռ-  
իսնը գձեցին՝ էկան ձկներով լքցւեցաւ, ոք եթէ

մէկէլ նաւը վրայ չը հասնէր և չ'օգնէր՝ ուռիսնը  
 կտոր կտոր կը ինէր . Եւ էն մէկ անզամ դուս  
 քաշելով երկու նաւն էլ ձինով էնպէս լքցւե-  
 ցան՝ որ քիչէր մնում նաւերին ընկղմիլ (տակը  
 նառել): Երբոր Ամոն Պետրոսը էս հրաշքը տե-  
 սաւ, դողալով եկաւ Յիսուսի ոտը ընկաւ և ա-  
 սաց . Տէր, հեռացիր ինձանից . որովհետեւ ես  
 մէկ մէղաւոր մարդ եւ ։ , նմանասիս և շատ վա-  
 խեցան Յակոբոսը և Յովհաննէսը, որոնք որ Ար-  
 մանի հետ էին : Յիսուս էլ ասաց . «Սի վախենա-  
 այսուհետեւ ձուկ որսալու աեղ մարդիկ կ որսաս  
 դէս ի արքայութիւնը»: Յետոյ նաւը քաշեցին  
 ցամաքը . և ամէն բանը թողին՝ գնացին Յիսուսի  
 ետևից . Արանից յետոյ շատ ժամանակ չ'անց կա-  
 ցաւ որ մէկ օր էլ Յիսուս իր աշակերտների հետ  
 կամեցաւ նաւով Գալիլեայի ծովի էն կողմը Գեր-  
 գեսացոց երկիրը մնցկենայ . Երբոր մտան նաւը  
 և գնաւմէին . Յիսուս մէկ կողմը նաւի խէլքի  
 (գլխի) վրայ զլուխը բարձին դրաւ՝ և քնած  
 էր : Էն ժամանակը յանկարծ սաստիկ քամի վեր-  
 կացաւ և էնպէս ալէկոծեց ծովը՝ որ կարծումէին  
 թէ հորես նաւը կը ծածկւի ջրով : Ես որ տե-  
 սան աշակերտները՝ դող ընկաւ սրաներումը . և  
 Յիսուսին զարթայնելով ասումէին . «Վարդապետ  
 հորէս կօքումնէք, վեր կայ ազատիր մեղ» Յէ-

սուս զարթեցաւ և ասաց «ի՞նչէ, թերահաւատ  
 ներ, էդ ձեր հաւատքի պակասութիւնն է որ  
 էզչափ վախեցաք»: Եւ վերկացաւ հրամայեց ծու-  
 լին «Գտղարիր պապանձելիր», և խկոյն կարւե-  
 ցաւ քամին՝ և ծովի ալիքը գաղարեցան: Երբոր  
 նաւի մ.ջ ամէնքը տեսան էս հրաշքը, սարսա-  
 փելով սկան մէկմէկու մախկ աալ և, ասել թէ  
 «Աս ով պիտի լինի, որ քամին ու ծովն էլ շու-  
 առվ հնապանդւումեն սրա հրամանին»: Երբոր էն  
 կողմի ցամաքը Գերգեսացւոց երկիրը դռս և կան  
 յանկարծ զիմացը Գերեզմաններից երկու կատղած  
 զիւահարներ էին զալս: Էնապէս զարհուրելի էին  
 որ մարդ չէր կարող էն ճամփից անցկենալ, և  
 սրանք էս աեղեցքումը բնակւումին տկրու: Գիշեր  
 ցերեկ գորգուալով քարերով ծեծւումին, և մարդ  
 չէր կարում նրանց բռնել շղթայով կապել:  
 Էս դիւահարները հեռուից Յիսուսին որ աեսան՝  
 վաղեցին և կան Յիսուսի առջել ընկան, և ա-  
 զառում էին: Յիսուս, որդի Աստուծոյ, մենք  
 քեզ հետ ի՞նչ բան ունինք՝ որ ժամանակից ա-  
 ռաջ եկել ես մեզ տանջելու», պատճառ որ՝ Յի-  
 սուս հրամայումիր սատանին որ նրանցից դուս  
 դայ: Հաղորեց Յիսուս թէ «Ձեր անունն ի նչ է»,  
 նրանք սասցին: «Մենք Նեղեոն (խումբ) ենք կոչ-  
 ւում»: Յիսոյ, երբ սատանէքը պիտի դուս զա-

յին՝ աղաւեցին Յիսուսին որ նրանց դժոխքը չ'ու-  
զարկի, այլ էն կողմերումը խովեր էին արածում.  
Հրաման տայ իրանց որ էն խովերի մեջ մննեն.  
Յիսուս էլ հրամայեց էնպէս : Էն ժամանակը էս  
սատանէքը էն մարդկերանցից որ դուս եկան՝ խո-  
վերի մեջ մնան, խովերը՝ որ երկու հաղարի չափ  
կը լինէին, էնպէս դիւահարւեցան որ բարձր տե-  
ղից իրանց ծովը թափեցին և բոլորը խեղդւե-  
ցան . խովերի սրահապաններն էլ սարսափելով  
վախան գնացին քաղաք և պատմեցին էս բա-  
ները : Գաղաքի մարդիկը երբ որ եկան տեսան որ  
դիւահարներից մէկը խելօքացած Յիսուսի առ-  
ջեր նստած էր, պարմացած մնացին էս հրաշքի  
վրայ : Եւ վախենալով Յիսուսի զօրութիւնից՝ ա-  
զաշեցին որ հեռանայ դուս գնայ իր տեղը : Երբ  
Յիսուս էլի նաւ մօաւ որ եղ դառնայ, էս բր-  
ժշկւած դիւահարն էլ նրանից չ'էր ուզում բա-  
ժնւել, բայց Յիսուս չը թողաւ, այլ՝ գնա քու-  
տուն, ասաց, և պատմի՝ Աստծու ողորմութիւնը,  
որ արաւ քեզ:

41. ԱՆԴԱՄՆԱԼՈՒԹԻ ԲԺՇԿԵԼԻ, ՄԱՏԹԵՈՍ ԱՌԱԲԵԼՈՅ  
ԿՈՉՈՒՄԸ, ՅԱՅՐՈՍԻ ԱԴՐԱԿԱՆ ԵՒ ՏԵՌԱՑԵՍ ԿՆԱՅՆ ԲԺՇ-

ԿՅԱՅ: Պատկ. Ա. — Մատ. թ: — Մատ. թ. Յ:

Երբ Յիսուս գերգեսացւոց երկրից դուս եկաւ  
գալիսեա գնաց, և կախառնառում քաղաքումը

մէկ օր տան մէջ քարոզումէր Հրէից վարդապետա  
ների և կարգացողների առջելը, որ չորս կողմից  
նրա մօտ հաւաքւել էին լսելու, էն ժամանակը  
չօրս հողի մէկ անդամնալուծ իր մահիճով (դո-  
շակով) վելքաշած եկան որ Յիսուսի առջելը  
դնեն որ բժշկի : Բայց նրանք երբոր տեսան որ  
Էնքան ժողովրդոց բաղմութենից ճար չը կայ որ  
դռնից ներս տանեն, էն տան կտուրի վրայ վեր  
էլան և սուսատալը (օճոռք) քանդեցին բաց ա-  
րին, և էն տեղից մահիճով անդամնալուծին Յի-  
սուսի առջելը ցած թողին : Յիսուս տեսնելով նր-  
անց հաւատքը՝ ասաց անդամնալուծին . «Ո՛ր-  
դեակ, թողած լինին քեզ քու մեղքերդ» : Ես  
որ լսեցին գոլիրները (կարգացողները). սկսան  
իրանց մտքներումը դատել որպէս թէ Յիսուս  
հայհոյական բան է ասում, պատճառ որ՝ Ասո-  
ւած միայն կարայ մարդուս մեղաց թողութիւն  
տալ, Յիսուս հասկանալով նրանց ծուռը միտքը՝  
հարցրեց նրանց . «Եղ ի՞նչ է որ մտածումէք .  
ո՞րը հեշտ է ասել մէկ անդամնալուծին . թո-  
ղութիւն լինի քու մեղքերիդ, թէ ասելը՝ կան-  
գնիր վեր առ մահիճդ գնահ էս տեղից : Բայց դուք  
ասաց, էս էլ խմացէք որ՝ ես երկրի վրայ իշխա-  
նութիւն ունիս մեղքերին թողութիւն տալու,  
ահա հրամայում եմ քեզ (ասաց անդամնալու-

ծին) վեր կաց մահիճդդ վեր առ գնա քու տունս, իս որ ասաց Յիսուս, անդամալոյթը շուտով վեր-կացաւ կանգնեցաւ՝ վերառաւ իր մահիճը, և փառք տալով Աստծուն գնաց տուն։ Ես հը-րաշքը տեսնելով՝ ամենքը զարմացած մնացին, և իրանք էլ փառք տալով Աստծուն ասում էին թէ «Խսպէս բան ամեննեին տեմնած չէր»։

Սրանից յետոյ Յիսուս դուս եկաւ տնից, և քարովելով՝ մաքսատան կողմերը մանգալուց աեսաւ մէկ մարդ Մատթէոս անունով, որ մաքսաւոր (ասպրանկքի վրայ խարջ առնող էր). Յիսուս ասաց նրան, «Արի՛ իմ ետևիցա»։ Նա էլ շուտով ամեն բանը թողաւ՝ և Յիսուսի ետևից գնաց։ Յետոյ սա իր տուն ճաշի հրաւիրեց Յիսուսին իր աշակերտների հետ։ ուր կանչուած էին ուրիշ նրա բարեկամ մաքսաւորներ էլ։ Մաքսաւորու-թիւնը Հրէից մէջ անարդ անուն ունէր, և սիդի և ահօրէն համարելով մաքսաւորներին՝ Փարիսեցիք և կարդացողները երբ որ էս լսեցին, սկսան Յիսուսին և նրա աշակերտներին բամբասել թէ մաքսաւորների և մեղաւորների հետ է նստում, և նրանց հետ ուտումի և խմում։ Յիսուս էլ սպասասխան տւաւ «Առողջներին բժիշկ պէտք չէ, այլ՝ հիւանդներին. և ես էլ ոչ թէ արդարների այլ մեղաւորների համար եմ եկել»։

Արա վըայ մէկ խօսք էլ բացւեցաւ որ՝ Յով՝  
հաննէս Մկրտչի և Փարիսեցւոց աշակերտները  
շատ պաս են պահում՝ երկար աղօթք են ա-  
նում, իսկ Յիսուսի աշակերտները՝ ուտել խմելու  
հետ են: Յիսուս էս բանի վըայ առակով պա-  
տասխան տւաւ և ասաց, «Կը գայ ժամանակ որ՝  
իմ աշակերտներն էլ էդպէս պահեցողութիւններ  
կ'անեն և նեղութիւններ կը քաշեն: ~~Է~~

Երբոր Յիսուս էս բաներս էր խօսում, մէկ  
Հրէից իշխան Յայրոս անունով եկառ Յիսուսի ու-  
տերը ընկառ՝ աղաջում էր որ իր մէկ հատիկ  
տասներկու տարեկան աղջեկը որ մահուան դուռն  
էր հասել՝ շուտով գայ ձեռքը դնի նրա վըայ և  
բժշկի: Յիսուսն էլ երբ իր աշակերտներով վեր-  
կացաւ՝ որ գնայ հետը, ճամբին ժողովրդոց բազ-  
մութեան մէջ մէկ տեռատես կնիկ, (որ տասն-  
երկու տարի էս հիւանդութիւնով տանջւումէր,  
և բոլոր ունեցածը բժիշկներին էր տւել՝ բայց ցա-  
ւին ճար չէր էլած՝ այլ աւելցել էր) Յիսուսի  
բժշկութիւնները լսելով եկաւ և ջերմեռանդ հա-  
ւատով ետեից կամաց Յիսուսի շորերին դիսպաւ  
և խկոյն բժշկեցաւ: Են ժամանակը Յիսուս իր  
ամենապիտութիւնով էս բանը իմանեալով եղ շուռ  
եկաւ զէակ ի ժողովուրդը, և հարցրեց թէ «Ո՞վ  
դիսպաւ իմ շորերիս: Աշակերտները ասացին,

Վարդապետ, էսքան ժողովուրդի մէջ սխա-  
 մած ես, և հարցնումես թէ ովլինձ դիպաւու:  
 Յիսուս էլ ասաց . զիմանշում որ մէկը դիպաւ ինձ,  
 և զօրութիւն դուս եկաւ ինձանից . և նորմէս  
 կանց սկսաւ չորս կողմը մտիկ տայլ որ էն դիպա-  
 չողին գտնի: Էն ժամանակը երբ տեսաւ կնիկը  
 որ բանը էլ կարելի չ'է թաղցնել, աշ ու դո-  
 ղով ինքն իրան եկաւ Յիսուսի ոտերը ընկաւ, մէկ  
 մէկ պատմեց թէ հենց որ դիպաւ թէ չ'է, ի՞նչ-  
 պէս բժշկեցաւ: Յիսուս էլ ասաց նրան . «Աիր-  
 տըդ ղայիմ պահիր, իմ աղջիկ, քու հաւատ-  
 քը քեզ բժշկեց. զնա՛ խաղաղութիւնով»: Ես  
 բանիս վրայ մէկ էլ տեսնես Յայրոս իշխանի տնից  
 մարդիկ վրայ հասան, և հօրը ասացին թէ  
 «Աղջիկդ մեռաւ, էլ աշխատանք մի՛ տար վարդա-  
 պետին»: Երբոր Յիսուս լսեց, եդ դարաւ սիրտ տը-  
 ւաւ իշխանին որ չը վախենայ և ասաց . «Եթէ  
 որ հաստատ ունենաս հաւատքդ՝ նա կը ողջաւ-  
 նայ»: Արանից յետոյ Յիսուս երբոր գնաց հասաւ  
 նրա տունը՝ տեսաւ բազմութիւն հաւաքւած՝ որ  
 մէծ սուդ ու լաց ունէին (ինչպէս որ սովորու-  
 թիւն է Հրեից), ասաց «Ի՞նչ էք լաց ըլում  
 շփոթւած . աղջիկը մեռած չ'է, այլ քնած է»,  
 Յիսուսի խօսքի վրայ ծիծաղումէին նրանք, պատ-  
 ճառ որ՝ հաստատ մտքներումը դրելէին թէ մէս

ուածէ : Յետոյ Յիսուս վեր առաւ իր հետ միայն երեք աշակերտ . և աղջկայ հօրն ու մօրը՝ մօտ գնաց մեռելին , բռնեց նրա ձեռքից և ասաց : «Աղջիկ դու , քեզ եմ ասում , վեր կաց կանգնիր : Ես որ ասաց թէ չէ իսկոյն ողջացաւ աղջիկը . և վերիացաւ սկսաւ մանգալ : Յիսուս էլ էս հրաշքս հաստատ ցոյց տալու համար՝ հրաւ մայեց ծնողացը , որ աղջկան հաց տան ուստելու : Եւ էն աեղից որ դուս եկաւ Յիսուս՝ էլի ուրիշ հիւանդներ — կուլեր և դիւահարներ բժշկեց :

12. ՊՐՈՊԱՏԻԿԻ ԱՆԴԱՄԱԼՈՒՇԻ , ԶԵՐ-ՔԸ ԶՈՐԱՑԱՆ

ԱԱՐԴՈՒԽԻ , ԵՒ ՈՒՐԻՇ ՀԵՒԱՆԴՆԵՐԻՆ ԲԴՇԿԵԼԻ :

Յուլի . և . Ասաւ . ԺԲ : Ղուկ . ԺԳ :

**Մէկ անգամ՝ էլի Յիսուս զատկի տօնին գնաց երուսաղէմ , էն տեղ մէկ աւազան (հաւատղ) կար , որ կոչումէր Պրոպատիկէ կամ բեթհեղ դա (ողօրմութեան տուն) . էս աւազանի մօտ տեսակ տեսակ հիւանդներ սպառկած սպասումէին , որ երբ Աստծու հրեշտակը ցած դայ էն ջուրը խառնի՝ նրանց մէջը գձեն . և ով որ էն ջուրը խառնելու ժամանակը առաջ ինքը կընկնէր՝ նա միայն կը բժշկւէր բոլորովին , ինչ ցաւէլ որ ունենար : Ես տեղ Յիսուս մէկ մարդ տեսաւ , որն որ երեսունութը տարի էր որ էնպէս հիւանդ էր**

մնացել . մօտ գնաց հարցրեց նրան թէ «կա  
 մենումես ողջանալու նա էլ ասաց . «Տէր , ոչոք  
 չունի՞ որ ինձ իր ժամանակին բռնի աւաղանը  
 զձի . և մինչեւ իմ ժամ դալս՝ ուրիշը միշտ ա-  
 ռաջէ ընկնում և ես մնումեմ էսպէս : Ին ժա-  
 մանակը Յիսուս հենց որ ասաց թէ՝ «Վէր կաց  
 կանգնի վեր առ մահիճդ և դնա՛ , խկայն մար-  
 դը առողջացաւ , և իր մահիճը կռան տակը  
 դրած մանէր դալիս : Բայց էն օրը շաբաթ էր՝  
 և երբոր Հրէաները տեսան սկսան էն մարդու-  
 վայ բարկանալ առել թէ «ինչի՞ շաբաթ օրը ,  
 որ արգելւած է օրէնքով , մահիճդ (կողէնքդ) վեր ես  
 առել առնումեան : Առ էլ պատասխան տւառ նը-  
 րանց թէ՝ «Ովոր բժշկեց ինձ , նա ասաց որ վեր  
 առնեմ մահիճն և դնամ : Հրէաները հարցրին  
 թէ՝ «Ով է էն մարդը՝ որ քեզ էդպէս ասաց» .  
 բժշկւածն էլ չէր իմանում թէ ովէ . պատճառ  
 որ՝ Յիսուս շուտով գնաց հեռացաւ էն տեղից :  
 Բայց յետոյ տաճարումը պատահեցաւ Յիսուս էն  
 մարդուն և ասաց . «Ահա առողջացար , տես՝  
 ոյսուհետեւ էլ չը մեղանչես , որ աւելի վատ չը լինի  
 քեզ , Յետոյ նա էլ գնաց Հրէաներին պատմեց  
 թէ իրան բժշկողը Յիսուսին էր : Էս պատճառաւ  
 Հրէաները սկսան Յիսուսին հալածել , որ շաբաթ  
 օրը էնպէս բան էր արել : Յիսուս էլ պատասխան

տուաւ թէ ինչպէս իմ Հայրս միշտ գործումէ,  
նրա հետ ես էլ կը գործեմ»։ Եւ էստուր հա-  
մար աւելի կատղումէին Հրէաները և ուղումնին որ  
սպաննեն Յիսուսին ։ պատճառ որ՝ ոչ թէ միայն  
շաբաթ օրը չէր պահում, այլ և Աստծուն էլ  
իրա Հայր էր կոչում, և սրանով իրան հաւա-  
սարումէր Աստծու հետ։ Էն ժամանակը Յիսուս  
երկար վարդապետութիւնով նրանց կարծիքները  
հաստատեց թէ ինքը Հօր Աստուծոյ հաւասար՝  
Որդի Աստուծոյ է։

Արանից յետոյ մէկ անգամ էլ Յիսուս իր ա-  
շակերտների հետ շաբաթ օրը արտերի միջից  
անց կենալուց՝ աշակերտները քաղցելով՝ էն տեղից  
գարու կամ ցորենի հասկեր քաղցին, և ձեռի  
ավներումը (գուլումը) շփելով իստակեցին և կե-  
րան։ Արա վրայ էլ երբ Փարիսեցիք սկան տրան-  
ջալ թէ շաբաթ օրը սուրբ չեն պահում՝ Յի-  
սուս Դաւթի մարզարէի և քահանայից օրինակնե-  
րով նրանց պապանձեցրուց։ Բայց նրանք կուրա-  
ցած լինելով՝ մանաւանդ Փարիսեցիք։ Նորմէկանց  
մէկէլ շաբթին Յիսուս Ախնադովդայումը (ժողո-  
վարանումը) քարով տալուց՝ էն տեղ ժողո-  
վուրդի մէջ տեսաւ մէկ մարդ, որի աջ ձեռքը չորցել  
էր, Յիսուսի վրայ չարախօսութիւն անելու համար՝  
փորձելով հարցըն նրան թէ «Շաբաթ օրը բը-

ժշկութիւն անել կարելի՞ է։ Յիսուս նրանց չար  
միտքը հասկանալով՝ էն ձեռքը չորացած մարդուն  
մօտ կանչեց կանգնեցրուց առջել և շուռ եկաւ  
հարցրեց նրանց թէ «Յաբաթ օրը բարի բան ա-  
նելը լա՞ւ է թէ չարութիւն գործելը, կեանքը  
ապրեցնելը՝ ասայ, թէ թողնի որ կորչի։ ո՞րը  
լուէ է։ Էս էլ հարցրեց թէ «Չեզանից մեկը՝ եթէ  
մէկ ոչխար ունենայ, և էն ոչխարը եթէ շա-  
բաթ օրը գնայ փոսը ընկնի՛ չի՞ գնայ և էն ոչ-  
խարը փոսից չի հանի՛։ ապա մարդը՝ ասաց որ  
ոչխարից շատ աւելի պատուական է. պէտք չէ որ  
շաբաթ օրը բժշկուի։ Էս խօսքերով Յիսուս նոր-  
մէկանց պապանձեցնելով՝ հրամայեց էն մարդուն  
որ ձեռքը երկարացնի. նա էլ խօսոյն բժշկեցաւ,  
ձեռքը երկարացրեց, և միւս ձեռքի պէս առող-  
ջացաւ։

Խապէս էլի ուրիշ անդամ՝ Յիսուս շաբաթ օրը  
Սինագովդայումը քարոզելուց՝ տեսաւ էն ժողովուր  
դի մէջ մէկ ինիկ, որ տասնուութը տարի էր  
տատանէն կապել էր, և մէջքը ծռած բոնւած՝  
վերեւ չ'էր կարում մտիկ աալ։ Յիսուս մօտ կան-  
չեց էս կնիան, ձեռքը վրէն դրած՝ հենց որ ա-  
սաց թէ «Կին զու, հիւանդու խիւնիցդ ողջա-  
ցել ես», խօսոյն բժշկեցաւ դրատեցաւ, և փառք  
էր տալիս Աստծուն։ Սինագովդայի վերակացուն

էս որ տեսաւ, Յիսուսի վբայ չարանալով՝ սաստեց  
ժողովուրդին և ասաց . Շարաթւայ մէջ վից օր  
ունիք գործք կատարելու համար էն օրերումը  
եկէք բժշկւեցէք . և ոչ թէ շարաթ օրը . Յիսուս  
նրան պապանձեցրուց և ասաց . Շարաթ օրը  
եթէ օրէնքը տալիս է որ ամէն մարդ իր անտ-  
սունին ախոռից եղ անի տանի ջուր տայ՝ ապա,  
ասաց, էս կնիկը որ Աբրահամու կուսար է՝ և  
տանուութը տարի է որ սատանէն կապել է .  
պէտք չէ՞՝ շարաթ օրը արձակել ազատել սրան։

/ 13 . ՏԵՍՆԵՐԿԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԸՆՏԱՑԻՆ ԲԺՇԿԱՅ :

Դուկ . Զ . է . Մաս . Ե . Բ .

Յիսուս մէկ անդամ՝ գնաց լեառը (սար) առ-  
ուանձին աղօթք անելու, և էն բոլոր զիշերը էն  
տեղ անց կայրեց, և յետոյ ցած եկաւ առաւօտը  
մօա կանչեց իր հաւատացեալներին, և նրանցից  
տասներկու հոգի ընտրեց՝ և իրա առաքեալներ  
անուանեց, որ միշտ իր հետ լինին՝ և պէտք էլած  
ժամանակը դէսուդէն ուղարկի նրանց քարովելու  
և բժշկութիւն անելու . Աւ նրանց անուններն էին.  
ա. Աւման, որի անունը փոխեց Յիսուս՝ և Պետրոս  
Հրաւ . բ. Յակոբոս Գ. Յովհաննէս աւետարա-  
նիչը . սրանք երկու եղբայր Զեբեթիսյի որդիքն

էին, և սրանց անունն էլ վոլխց Յիսուս՝ բառներեգէս դրաւ . ոյ նշանակումէ Որդիք որոտման . Դ. Անդրէաս՝ Սիմոն Պետրոսի եղբայրը և Փիլիպոս . Զ. Բարդուղիմէոս . Է. Մատթէոս մաքսաւորը՝ որ աւետարանիչ էլաւ . Ը. Թովմաս . Թ. Յակոբոս փոքրը՝ Ալֆէոսի որդին . Ժ. Թարգէոս, որ Յուդա էլ էր կոչւում . ՃԱ. Սիմոն Կանանացի կամ Նախանձայոյզ . ՃԲ. Յուդա Խակարիովտացի, որ յետոյ մատնեց Յիսուսին :

Առաքելոց ընարութիւնից յետոյ Յիսուս խըրասներ տւաւ նրանց. և էն ժամանակը նըրոր շատ ժողովուրդ վըսյ եկան կիտւեցան. նստաւ Յիսուս մէկ տափարակ տեղ, աչք՚րը գձեց դէպի իր աշակերտները և սկսաւ քարովել և աւել . «Երանի հողւով աղքատներին, պատճառ որ՝ նըրանցն է երկնքի արքայութիւնը : Երանի հեղերուն՝ նրանք կը ժառանգեն երկիրը : Երանի, որ քաղցած և ծարաւ կը մնան արդարութեան համար՝ նրանք կը կշտանան : Երանի ողորմածներին՝ նրանց՝ որ սուրբ հն սրտով, նրանք Աստուած կը տեսնեն : Երանի խաղաղաբարներին՝ նրանք Աստծու որդիք կը կոչւին : Երանի որ հալածւած կը լինին արդարութեան համար՝ նրանցն է երկնքի արքայութիւնը : Երանի է ձեզ երբ (անարդում)

Նախատում՝ և հալածում՝ (չարչարում) լինին  
ձեղ և ամեն չար բան սուտ ասում լինեն ձեր վե-  
րայ իմ պատճառաւաւ : Աւրակս կացէք, պատճառ-  
որ՝ ձեր վարձքը շատ է երկնքումը՝ և էսպէս էին  
հալածում մարդարէից, որ ծեզանից առաջ էին :  
Յետոյ երբոր վերջացրեց քարոզր, ցած եկաւ Յի-  
սուս սարից, նրա առջելը պատահեցաւ մէկըո-  
րոտ (քոսոտ) մարդ, որ երկրպագութիւն էր ա-  
նում և ասում . ԵՇէր, եթէ կամենաս՝ կարող  
ես ինձ բժշկել : Յիսուս ոնցոր որ ասաց թէ՝ «Կա-  
մենումեմ» որ բժշկեսաւ իսկոյն նրա վրայից եղ  
գնաց իստկւեցաւ բորը (քոսը) . և յետոյ Յիսուս  
ասաց նրան, որ դէսուդէն ձէն չը դձի՝ և մայ-  
սիսական օրէնքով գնայ իրան անձը ցոյց տայ  
քահանային և էս բժշկութեան նշան՝ Ասո-  
ծուն պատարագ մատուցանի :

Արանից յետոյ Յիսուս գնաց կավառնառ մ՝  
և էնտեղ մէկ հարիւրապետ կար, որի սիրեկան  
ծառէն մէրձ ի մահ հիւանդ էր . սա այլազդ լի-  
նելով՝ ինքն իրան սիրտ չ'արաւ Յիսուսի մօտ գնալ  
այլ ուղարկեց Հրէից ծերերուն, և աղաչումէր  
որ՝ գայ Յիսուսը և բժշկի նրա ծառ տիմն : Եւ  
երբոր Յիսուս գնաց նրանց հետ և մօսացել էր  
նրա տանը, հարիւրապետը իր բարեկամներին  
ուղարկեց Յիսուսի դէմը և աղաչումէր, որ չ'աշ-

խառի տուն չը դայ, պատճառ որ՝ մինչև ան-  
գամ ևս անարժան եմ համարում ինձ, ասաց,  
ինքս դաշ և երեւալ քեզ, Բայց այնու ամենայ-  
նիւ երբոր տեսաւ որ Յիսուս մտիկ չէ անում  
առաջ է դալի, Էն ժամանակը հարիւրապետը  
վաղեց առաջ եկաւ Յիսուսին, և խոնարհութիւ-  
նով սկսաւ ասել. «Տէր, մի՛ աշխատիր ինձ մօտ  
դալու. Ես արժանի չեմ որ դու իմ տուն մտնես,  
այլ մէկ խօսք՝ միայն հերիք է իմ մարդուս  
բժշկելու»: Ես որ լսեց Յիսուս՝ շատ զարմացաւ,  
և հետը էլած մարդկերանց ասաց. «Ճշմարիտն  
եմ ասում ձեզ որ Խարայէլացւոց մէջն էլ էս-  
չափ հաւատք չեմ տեսել. և էս էլ զիտենաք  
որ արեւելքից և արեւմոքից կը դան և կը նստին  
Արահամի, Խասհակի և Յակոբի հետ արքայու-  
թեան մէջ. և արքայութեան որդիքը դուս յեր-  
թան գժոխքը»: Յետոյ հարիւրապետին էլ ասաց.  
«Գնա՞ տեղի և ինպէս որ հաւատացիր՝ էնպէս լի-  
նիո. Եւ էս խօսքը որ ասաց թէ չէ իսկոյն բժշ-  
կեցաւ հիւանդը»:

14. ՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԻ ՄԵՌԵԼԻՆ ԿԵՆԴՈՆԱՑՆԵԼԻ, ՄԵ-  
ՂԱԿՈՐ ԿԵԿԱՅ ԴԱՐՁԸ, ՍԵՐՄԱՆԱՅԱՆԻ ԱՌԱԿԸ:

Դուկ. Դ. Է. Մաս. Ժ.Ա. Ժ.Բ. Մարկ. Գ.

Արանից յետոյ միւս օրը Յիսուս իր աշակեր-  
տներով գնաց Նային քաղաքը, և երբոր մօտե-

յան քաղաքի դրանը, տեսան որ էնտեղից մէկ  
 մեռել էին դուս բերում, որ մէկ որբեւերի կըն-  
 կայ միակ որդի էր. և հետն էլ շատ ժողովուրդ  
 կային : Յիսուս երբոր տեսաւ մօր լացը՝ դութք  
 շարժեցաւ վըէն, Հրամայեց դադաղը վեր դնել  
 մօտ գնաց և մօրը ասաց «Մի լաց ըլիր, յետոյ  
 շուռ եկաւ մեռելին՝ և հենց որ ասաց թէ ։ Ով  
 պատանի, քեզ եմ ասում, վեր կաց», խսկոյն  
 մեռելը վերկացաւ նստաւ և սկսաւ խօսել. Էս որ  
 տեսան ժողովուրդը՝ զարմացած մնացին, և Ասո-  
 ծուն փառք տալով սկսան ասել՝ «Աստուած մէզ  
 ողորմութիւն է արել՝ որ մեր մէջ էսպէս մէծ  
 մարդարէ է դուս եկել»: Էս բանը Հրէաստանի  
 չորս կողմի տարածւեցաւ, մինչեւ բանտումը Յով-  
 հաննէս Մկրտչին գնացին պատմեցին թէ՝ Յի-  
 սուս էսպէս մեծամեծ հրաշագործութիւններ է  
 անում, նա էլ իր աշակերտներին Քրիստոսի հա-  
 ւատքի վրայ հաստատելու համար՝ նրանցից եր-  
 կուսին ուղարկեց Յիսուսին հարցնելու թէ «Գո՞ւ  
 ես գալու Մեսիէն՝ թէ ուրիշին սպասե՞ք : Են  
 ժամանակը Յիսուս նրանց առջեւը հիւանդներին  
 կուրերին և զիւահարներին բժշկեց» և Հրամա-  
 յեց նրանց ինչ որ տեսան՝ զնան պատուն Յով-  
 հաննէս Մկրտչին : Յետոյ Յիսուս սկսաւ ժողո-  
 վրդոց առջեւը Յովհաննէս Մկրտչի վրայ գովա-

սանքներ ասել, թէ նրա պէս մեծ մարդարէ աշ-  
խարհք չէ եկել, և վայ տւաւ Հրէից, որ էս-  
պիսի մարդու քարողութիւնով չը շարժւեցան՝  
իրանց մեղքերից եղ չը կացան :

**Արանից յետոյ մէկ օր Սիմոն անունով մէկ**  
Փարիսեցի իր տուն ճաշի հրաւիրեց Յիսուսին .  
և երբոր Յիսուս ճաշի վրայ նստած էր, Էն քա-  
ղաքումը մեկ յայտնի մեղաւոր կնիկ կար, սա որ  
լսեց թէ Յիսուս էն տեղէ՝ վերառաւ իր հետ  
անուշահու իւղ՝ եկաւ Յիսուսի ոտը ընկաւ . և  
էսպէս լաց էր լինում՝ որ արտասունքով Յիսուսի  
ոտերը թրջումէր, և զլսի մագերով սրբումէր,  
և ոտները համբուրելով էն եղը քսումէր :

**Սիմոնը էս տեսնելով ինքն իրան մտածումէր**  
թէ «Յիսուս եթէ մարդարէ լինէր, կը հասկա-  
նար թէ՝ էդ կնիկը ինչպէս մեղաւոր կնիկ էս:  
Յիսուս նրա միտքը իմանալով ասաց նրան . «Սի-  
մոն, մէկ բան պիտի հարցնեմ քեզ . մէկ մար-  
դու երկու հոգի պարտական էին, մէկը հինգ  
հարիւր գահեկան, և միւսը յիսուն, պարսա-  
տէրը տեսաւ որ սրանք կարողութիւն չունին՝ եր-  
կուսին էլ բաշխեց իրանց պարտքը . հիմի ի՞նչ  
էս ասում, ասաց, էս երկուսից ո՞րը աւելի է  
սիրում էն պարտքը բաշխողին»: Սիմոնը պատաս-  
խան տւաւ թէ «Ես էսպէս եմ կարծում որ նա՝

որ շատ պարտք ունէր : Յիսուս ասաց նրան . «Ուղիղ դատեցիլու , և յետոյ շուռ եկաւ դէպի կինը՝ նորմէկանց Ախմանին ասաց՝ «Տեսնումես էս կինը ի՞նչ արաւ . ես քու տուն եկայ՝ դու ջրով էլ ոտս ըլուացիր , սա իր տրուասունքով ոտներս թրջեց՝ և մազերով սրբեց . դու մէկ համբոյր էլ չը տւիր ինձ , բայց սա քանի որ նստած եմ՝ ոտերս համբուրելուց չի դադարում . իւղով դու իմ գլուխս չօծեցիր , բայց սա անուշահոտ իւղով օծեց . էստուր համար քեզ էս ասումեմ որ սրա անթիւ մեղքերին թողութիւն լինի , պատճառ որ՝ ինձ շատ սիրեց : Յետոյ կնիան ասաց . «Բոլոր մեղքերդ թողած լինիւ : Էս որ ասաց , էնտեղ նորմէկանց ուրիշները սկսան իրանց մոքներումը դատելթէ՝ սվէտ սա՝ որ մարդու մեղքերը թողնումէ : Էն ժամանակը Յիսուս կրկին ասաց . «Քու հաւատքդ քեզ փրկեց , խաղաղութիւնով վեր կաց գնա տեղդ :

Արանից յետոյ Յիսուս իր տաներկու աշաւիերաներով ման էր գալիս քաղաքները և գեղերը ։ և գանազան առաներով ժողովրդոց քարոզումէր Աստծու արքայութիւնը . Եւ երբ զանազան քաղաքներից շատ ժողովուրդ հաւաքւեցան նրա մօտ , ասաց Յիսուս էս առակը թէ՝ Մէկ սերմանացան , երբ որ ցանումէր իր արտը՝ էն սերմէրից մէկը

մասը ընկաւ ճամբի վրայ, ոտնակոխ էլաւ՝ և  
 թռչունները կերան : Միւսը ընկաւ ապառաժ  
 տեղերումը որ հողումը արմատ չունենալով ծլ-  
 ւեցաւ թէ չէ արեգակի տաքութիւնից չորա-  
 ցաւ . և մկելը ընկաւ փշերի մէջ, և նրա հետ  
 դուս եկան փուշերը և խեղդւեցաւ պտուղը տւաւ,  
 բայց էն սերմը. որ լաւ և պարարտ հողումը  
 ընկաւ՝ դուս եկաւ աճեց առատ պտուղ տւաւ,  
 էնպէս որ նրանցից ոմանք՝ մէկին երեսուն, ոմանք՝  
 վաթսուն, և ոմանք էլ հարիւր տւին : Աշա-  
 կերանները լաւ չը հասկացան էս առակը, յետոյ  
 հարցրին Յիսուսին չնա էլ մեկնեց նրանց . Սեր-  
 մը, ասայ, Աստծու խօսքն է . Ճամբէն : որ տեղ  
 որ սերմը ընկաւ՝ էն լսողներն են, որ շուտով  
 գալիս է սատանէն՝ նրանց մաքից Աստծու խօսքը  
 հանումի, որ չիցէ թէ, հաւասան և փրկւին :  
 Ապառաժ երկիրը նրանք են, որ երբ Աստծու  
 խօսքը լսումնեն, և թէպէտ առաջի անդամը  
 շուտ ընդունումն ուրախութեամբ, բայց արմատ  
 չեն գձում, փոքր ժամանակ հաւատում են, և  
 յետոյ երբ մէկ փորձութիւն կամ նեղութիւն  
 է վրայ համեմում, յաղթւումն և թուլանում:  
 Փշերի մէջ ընկած սերմը նրանք են, որ թէպէտ  
 Աստծու խօսքը լսումնեն, բայց աշխարհքիս հոգ-  
 սերով կամ հարստութիւններով և ուրիշ բանե-

ըով խեղդւած՝ պտուղ չեն տալիս : Իսկ պարարտ  
երկրումը ընկած սերմը նրանք են, որ բարի պրտով  
Աստծու խօսքը ընդունումեն և պահում, և  
համբերութիւնով պտուղ են տալիս, մէկին հա-  
րիւր՝ կամ վաժառն՝ կամ երեսուն:

15. ՅՈՎ.ՀԱՅՆԴԻ ՄԿՐՏՉԻ ԴԼԻԱՏՈՒՄԸ, ՅԻՍՈՒԽԻ ՀԵՆԳ  
ՀԱՅՈՎ, ԵՒ ԵՐԿՈՒ ԶԿԲՈՎ ՀԻՆԳ ՀԱՅՈՐ ՀՈԳԻ ԿՇՏԱՑՆԵԼ,

ԵՒ ԵՐԱՎԻ ՎՐԱՅ ԳՆՍԼԻ :

Մատ . ԺԴ . Մարկ . Զ . Ղուկ . Թ . Յովհ . Զ :

Հերովդէս չորրորդապետը երկար ժամանակ-  
ամնից Յովհաննէս Մկրտչին բանտն էր զձել տւել  
պատճառ որ յանդիմանութեր և խրատումէր նը-  
րան իր եղբօր կնոջ Հերովդիայի մասին, որին  
ինքը կին էր առել: Էս բանի համար թէպէտ՝  
Հերովդէսը ուղղումէր Յովհաննէսին սպանել: բայց  
վախենումէր ժողովուրդից . որովհետեւ ամէնքը  
մեծ մարդարէ էին համարում Յովհաննէսին:  
Այնու ամենայիւ երբոր Հերովդեսի ծննդեան օրն  
էր, էն ժամանակը նա իր իշխաններին հրաւիրելէր  
ճաշին, և երբ նրանց առջեւը Հերովդիայի աղ-  
ջեկը պար եկաւ, Հերովդէսը էնպէս հաւանեց  
նրա պար գալը, մինչեւ որ երդւեցաւ՝ աղջկան  
ասաց թէ «ի՞նչ որ ուղես կը տամ, մինչեւ իմ  
թագաւորութեան կէսն էլ»: Էս բանի համար աղ-

Ձեկը առաջուց խրատւած էր իր մօրից ։ ձեռին  
մէկ սկուտեղ (սինի) բունած չերովդեսից խնդրեց  
որ Յովհաննու Մկրտչի գլուխը նրա վրայ դրած  
տայ իրան։ չերովդեսին առաջին անգամը դժուար  
թւաց, բայց յետոյ երդման պատճառաւ՝ ուշ  
դարից բանտը զլսատել տւաւ, և սկուտեղի  
վրայ դրած բերին աւին աղջկան։ նա էլ տաւ  
րաւ իր չերովդիս մօրը տւաւ։ Յետոյ Յովհանն  
նու Մկրտչի աշակերտները եկան վեր առնան նրա  
մարմինը թաղեցին, և գնացին պատմեցին էս  
բանը Յիսուսին։

Եւ երբոր լսեց Յիսուս չերովդեսի չորութիւնը  
և իմացաւ. թէ իրան էլ պտռումէ որ տեսնի ի-  
մանայ թէ ովէ Յիսուսը՝ նա դուս եկաւ էն  
տեղից, աշակերտներով մտաւ նաւը և գնաց Բեթ-  
սայիդա։ Ֆողովաւրդը երբոր իմացաւ՝ չորս կող-  
մից հաւաքւեցան նրա մօտ, և նա նրանց հետ  
գնաց Բեթսայիդայի անտապասով մէկ սարի վրայ  
և էն աեղ քարոզումէր և բժշկումէր նրանց հիւ-  
ւանդներին։ Երկար քաշեց նրա քարոզութիւնը, և  
երբ եկաւ հասաւ հացի ժամանակը՝ Յիսուսի  
դութը շարժեցաւ ժողովրդոց վրայ, և փորձե-  
լով հարցրեց Փիլիստպոսին թէ՝ «Էս քան մարդուս  
ի՞նչ տեղից պիտի հաց տանք որ ուտեն»։ Նա էլ  
պատասխան տւաւ թէ ։ Երկու հարիւր դահե-

կանի հացը հերիք չէ սրանց՝ եթէ մէկ կտոր էլ  
 ուտելու լինին։ Սրանից յետոյ շուտով առաքեալ  
 ները Յիսուսին ասացին թէ՝ «Ահա երեկոյ էլաւ .  
 թող ժողովուրդը ամենքը գնան իրանց տեղը և  
 իրանց հացը ուտեն։ Յիսուս ասաց նրանց .  
 «Զպէտք է գնան, դոք տեքք դրանց ուտելու։  
 Անդրէասը ասաց թէ՝ Անք մօտներս ոչինչ չու-  
 նինք, այլ էս տեղ մէկ տղայ կայ՝ որ միայն հինգ  
 դարէ հաց և երկու ձուկն ունի, բայց էն ի՞նչ  
 հերիք կը լինի էնքան մարդոց։ Յիսուս բե-  
 րել տւաւ էն հացը, և հրամայեց որ ժողո-  
 վուրդը կարդ կարդ հարիւր հարիւր յիսուն յի-  
 սուն խոտերի վրայ նատացնեն . և էն հինգ հա-  
 ցը և երկու ձուկը վերառաւ ձեռին օրհնեց, և  
 կտրանելով աշակերտներին տւաւ՝ որ նրանցը բաժ-  
 նեն . և նրանք մօտ հինգ հազար հոգի էին  
 բաց ի կնկուերանց և տղերանց։ Կերան կշտացան  
 ամենքը և տամներկու լիքը սակառի (քթոց) կը-  
 տորտանք ժողովեցին։ Ժողովուրդը որ սեսաւ էս  
 հրաշքը՝ շատ սէր գցեցին Յիսուսի վրայ, և ըս-  
 կան ասել թէ «Սա է ճշմարիտ մեսին», և խոր-  
 հուրդ արին իրանց մէջ, որ գնան վերանեն  
 նրան՝ և իրանց վրայ թագաւոր կարգեն։ Բայց  
 Յիսուս էս բանը որ իմացաւ՝ մէնակ առանձնա-  
 ցաւ գնաց կրկին լեառը, և աշակերտաց ասաց

որ՝ նրանք նաւով ծովի էն ափը անցկենան . մինչեւ  
որ ինքն էլ ցամաքով գնայ հասնի նրանց : Երբ-  
որ աշակերտները մտան նաւը՝ քաշւեցան , և  
դիշելն էլ որ վրայ հասաւ՝ մէկ սաստիկ քամի  
վեր կացաւ , և երբ էնպէս ալէկոծելով գնում  
էին , մէկ էլ տեսնեն որ էն կողմից ալիքների  
վրայ մանգալով գալիս էր դէպի նրանց : Էն ժա-  
մանակը նրանք շփոթւած սկսան ձէն տալ . Յի-  
սուս սիրտ տւաւ նրանց և ասաց թէ՝ «Ես եմ ,  
մի՛ վախենաք»: Պետրոսը շուտ վեր թռաւ ասաց  
«Ճէր , եթէ դու ես՝ հրաման տուր ինձ որ ջրի  
վրայ դամ քեզ մօտ»: Յիսուս հենց որ ասաց թէ  
«Արի , Պետրոսը դուս եկաւ նաւից . և գնաց  
ծովի վրայ դէպի ի Յիսուսը , և երբ մօտենումիք  
նրան , սաստիկ ալիքներից՝ ահ ընկաւ Պետրոսի  
սրտումը՝ և սկսաւ ջրումը թաղւիլ և ձէն տալ  
թէ «Ճէր , ազատիր ինձ»: Յիսուս էլ շուտ ձեռ-  
քը երկարացրեց բռնեց , «Թերահաւատ , ասաց ,  
ինչի՞ տարակուսեցար»: Յետոյ Յիսուս մտաւ նաւը  
և իսկոյն հանդարտւեցաւ նստաւ քամին : Եւ  
նրանք ամէնքը որ նաւումն էին՝ տեսան էս հր-  
րաշքը , մօտ եկան երկրագութիւն տւին Յի-  
սուսին ասելով թէ «Ճշմարիտ որ դու Աստծու  
Որդի ես»:

16. ՅԵՍՈՒՍԻՆԱԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԿԵՆԸՑ ՀԱՅԻ ՎԵՐԱՑ :

Յովէ . Զ.

Արանից յետոյ միւս օրը ժողովուրդը տեսաւ  
որ էլ ուրիշ նաւ չը կար ծովի էն կողմը բաց  
ի մէկը, որի մէջ մտան Յիսուսի աշակերտները  
միայն . և Յիսուս էլ չէր մտել նաւը, այլ մի-  
այն նրա աշակերտները մտան վնացին : Բայց ու-  
րիշ նաւեր եկան Տիբերիայից էնտեղ մօտ, ուր հա-  
ցը կերան : Եւ երբոր ժողովուրդը տեսաւ որ՝ ոչ  
Յիսուսն է էնտեղ և ոչ նրա աշակերտները,  
մտան նրանք էն նաւերը և եկան կափառնառմ  
որ պտուեն Յիսուսին : Եւ երբ գտան նրան ծովի  
էն կողմը՝ ասացին . «Վարդապետ, ե՞րբ եկար  
էստեղ : Յիսուս պատասխան տւաւ նրանց «ՃՐՇ-  
մարիտն եմ ասում ձեզ . դուք պտուումէք ինձ,  
ոչ թէ էնդուր համար՝ որ մէկ նշան տեսաք, այլ  
որ՝ էն հացիցը կերակաք և կշուցաք»: Գնացէք  
ոչ թէ կորատական կերակուրը աշխատեցէք, այլ  
էն կերակուրը, որ կը մնայ յաւիտենական կեան-  
քումը, որն որ մարդոյ որդին կը տայ ձեզ : Նը-  
րանք ասացին «Ի՞նչ պիտի անենք՝ որ Աստծու  
դործքերքը գործենք», Յիսուս պատասխան տւաւ .  
«Ես է Աստծու դործը՝ որ հաւատաք նրան՝ որ  
նա ուղարկեց ինձ»: Նրանք ասացին «Ի՞նչ նշան  
ցոյց կը տաս մեզ՝ որ տեսնենք և հաւատանք,

ի՞նչ կ'անես . «Մեր հերերը անապատումը մանաւ  
 նայ կերան . ի՞ չպէս որ զրած է թէ Երկնքիցը  
 հայ տւաւ նրանց ուտել։ Յիսուս ասաց նրանց .  
 «Ճշմարիան եմ ասում ձեզ , թէ Մովսէսը չը-  
 տւաւ ձեզ էն հացը երկնքից , այլ իմ հայրս եր-  
 կնքից Ճշմարիտ հացը կը տայ ձեզ . պատճառոր  
 Աստծանից հացն էն է , որ երկնքիցն է վեր դալիս .  
 և աշխարհքին կեանք է տալիս» . «Նրանք ասա-  
 ցին . «Տ՛ր , ամէն ժամանակ տուր մեզ էն հա-  
 ցը» : Յիսուս պատասխան տւաւ . «Ես եմ կենաց  
 հացը , ով որ իմ մօտ է դալիս՝ չի քաղցի . և  
 ով որ կը հաւասայ ինձ՝ ոչ մէկ ժամանակ չի ծա-  
 րաւի» . «Բայց ասացի ձեզ՝ թէ տեսաք ինձ և  
 չէք հաւատում» . պատճառ որ՝ ես չեկայ երկն-  
 քից՝ որ իմ կամքս կատարեմ , այլ նրա կամքը՝  
 որ ինձ ուղարկեց» . «Ես է իմ հօր կամքը . որ  
 ամէնքը ով որ տեսնի որդուն՝ հաւասայ նրան .  
 յաւիտենական կեանքը ընդունի» . Հրեաները տըր-  
 անջում, ին նրա վրայ , որ ասաց . թէ ես եմ եր-  
 կնքից վեր եկած հացը բայց Յիսուս ասաց նր-  
 անց «Մի տրանջաք (քրմնջաք) մէկ մէկու հետ» .  
 «Ճշմարիան եմ ասում ձեզ . թէ ով ինձ կը  
 հաւասայ՝ յաւիտենական կեանքը կընդունի .  
 այս եմ կենաց հացը . ձեր հերերը կերան մա-  
 նանէն անապատումը և մեռան ; Ես էն հացն է

որ երկնքիցն է վեր եկել, որ եթէ մէկը սրանից  
 ուտի՝ չի մեռնի»։ Ես եմ կենդանի հացը, որ  
 երկնքիցն է վեր եկած։ եթէ մէկը ուտի էս հա-  
 ցից՝ յաւիտեան կ'ապրի։ և հացը՝ որ ես կը  
 տամ՝ իմ մարմինս է, որ ես աշխարհքի կե-  
 նաց համար կը տամ»։ Հրեաները կռւումին  
 մէկ մէկու հետ և ասում «Սա ի՞նչպէս կա-  
 րող է տալ մեզ իր մարմինը ուտելու»։ «Յիսուս  
 ասաց նրանց . «Ճշմարիտն եմ ասում ձեզ, եթէ  
 որ Որդոյ մարդոյ մարմինը չ'ուտէք և նրա ա-  
 րիւնը չը խմեք, կեանք չ'ունիք ձեր անձին մէջ»։  
 Ով որ ուտի իմ մարմինը և իմ արիւնը խմի՞նա-  
 ունի յաւիտենական կեանքը։ Պատճառոր՝ իմ  
 մարմինս ճշմարիտ կերակուր է, և իմ արիւնս  
 ճշմարիտ ըմբելի (խմելիք)։ Ով որ ուտի իմ մար-  
 մինը և խմի իմ արիւնը՝ նա ինձանումը կըքնա-  
 կւի, և ես նրանումը։ Ինչպէս որ կենդանի հայ-  
 րը ողարկեց ինձ, և ես կենդանի եմ հօր հա-  
 մար, էնակէս էլ նա՝ որ ինձ ուտումէ, կեն-  
 դանի կը լինի ինձ համար»։ Էս բանը ժողովա-  
 րանումն ասաց՝ երբոր կափառասումաւմը սով-  
 րացնումիր, աշակերտներից շատերը էս որ լը-  
 սեցին՝ ասումէին «Գժուար է էդ բանը, ով կա-  
 րայ լւել դրան»։ Յիսուս հասկացաւ նրանց տըր-  
 տունջը և ասաց «Ե՞ղ է գայթակղեցնում ձեզ».

Հոգին է կենդանացնող, մարմինը ոչ ինչ օգուտ  
չէ տալիս, էն բանը՝ որ ես ձեզ հետ խօսեցայ՝  
հոգի է և կեանք . և ով որ կը հաւասայ ինձ՝  
յաւիտենական կեանքը կընդունի»:

— 17. ՔԱՆԱԿԱՑԻՈՅ ԿՆՈՉ ԱՂՋԱԿԱՆ ԲԺՇԿԵԼԻ :

Մաս . ԺԵ : Մարկ . Է :

ՄԵԿ անդամը Յիսուս իր նախանձոտ թշնաւ-  
միքից փոքր ինչ ժամանակ հեռանալու պատճա-  
ռաւ դուս եկաւ Հրէաստանից և գնաց Տիւրուի  
և Ախունի կողմերը : Են տեղ նրա առաջ մէկ  
Քանանացի կնիկ դուս եկաւ աղաջումիր նրան և  
տում . «Տէր, որդի Դաւթի, ողորմիր ինձ՝ պատ-  
ճառոր աղջիկս սատանից բռնւած տանջւում»:  
Առաջին անդամը Յիսուս պատասխան չը տւաւ՝  
յետոյ երբ աշակերտները աղաջեցին՝ էն ժամա-  
նակը Յիսուս ասաց նրանց թէ «Ես ոչ թէ ու-  
րիշի, այլ Խրայէլայւոյ կորցրած ոչխարների հա-  
մար եմ ուղարկւած»: Բայց կինը անդադար ա-  
ղաջումիր . «Տէր, օվնիր ինձ»: Յիսուս նոր մէ-  
կանց պատասխան տւաւ թէ «Թող առաջ երե-  
խերքը կշտանան. լաւ չէ որ երեխանց առջելից  
հայր վեր առնեի՝ և շների առջելը զցւի»: Եւ  
նա ասաց «Տէր, Ճշնարիտ է . բայց շներն էլ ի-  
րանց տիրոջ սեղանից թափւած փշրանքներն են  
ուտում»: Են ժամանակը Յիսուս ասաց նրան .

Ալին դու , մեծ է քու հաւատքդ . Էնդուր հաւ  
մար՝ ինչպէս որ ուզում ես Էնպէս լինի» . եւ  
Յիսուս հենց որ էս ասաց՝ իսկոյն բժշկւեցաւ նրա  
դիւահար աղջիկը :

(8 . ՅԻՍՈՒՍԻ ԵՅԹԸ ՀԱՅԱՎ, ԵԽ ՔԻՉ ԶԿՆՈՎ, ԶՈՐՄ ՀԱՅԱՅ  
ՀՈԴԻ ԿՇՏԱՑՆԵԼԸ . ՄԵԿ ԽՈԽԸ ԵԽ ՀԱՄԲ ՄԱՐԴՈՒՆ, ՆԲ-  
ՄԱՆԱՊԵՍ ՆԻԿՈՒՐԻՆ ԲԺՇԿԵԼԸ : Մատ • ԺԵ • Մարկ • Ե • Ը :

Տիւրոսից և Ախղոնից Յիսուս գնաց Գալիլեայի  
ծովի ափը և էն տեղ մէկ անապատ տեղ շատ  
ժողովուրդ հաւաքւեցան Յիսուսի մօտ և երեք  
օր լսումէին նրա քարոզութիւնը : Յիսուս կան-  
չց աշակերտներին և ասաց . «Խղճամ եմ էս  
ժողովուրդին, պատճառ որ՝ ահա երեք օր է որ  
իմ մօտ են, և չեմ կամենում անօթի (քաղ-  
ցած) թողնել դրանց . չը լինի թէ ճանհապար-  
հին քաղցածութիւնից թուլանան : Աշակերտ-  
ները ասացին . «Ուր է մեղ մօտ էնքան հաց՝ որ  
կշտացնենք էսքան ժողովուրդին», Յիսուս ասաց .  
քանի հաց ունիք» . նրանք ասացին . «Եսօթը հաց  
և քիչ ձուկն», ին ժամանակը Յիսուս հրամա-  
ցեց ժողովուրդին գետնի վրայ կարդ կարդ նատել  
և ինքը վեր առաւ հացը և քիչ ձուկը, որ հենց  
և տւառ աշակերտներին որ տան ժողովուրդին .  
Զորս հավար հոգի, բաց ի կանանց և երեխանց

կերան կշատրան . և եօթը քթոց լիքը կտորտանք  
հաւաքեցին :

Սրանից յետոյ էն տեղերանքումը Յիսուսի առ-  
ջելը բերին մէկ խուլ և համը (մռնջ) որ բը-  
ժշկի նրան և նրանց հրամայեց որ ոչ ոքի չ'ա-  
սեն . բայց ընդ հակառակը նրանք աւելի քա-  
րոզումէին և փառաւորումէին նրան : Յետոյ երբ  
Յիսուս Բեթսայիդա եկաւ , նրա մօտ բերին մէկ  
կոյր և նա բժշկեց նրան՝ և զարմացած մնացին  
ամէնքը : Սրանից յետոյ Յիսուս սկսաւ իր աշա-  
կերաներին յայտնել թէ ինքը ինչպէս շատ չար-  
շարանքներ պիտի քավ Հրէից քահանայապետ-  
ներից և կարդացողներից , և թէ պիտի սպանւի ,  
բայց երեք օրից յետոյ յարութիւն պիտի առնի :

19. ՅԻՍՈՒՍԻ ՊԱՅՆԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ . ՄԵԿ ԼՈՒՄՆՈՏԻ  
ԲԺՇԿԵԼԻ . ՄԱՆՐ ՏՂԵՐԱՆՑ ԽՈՆԱՐՀՈՒԹԵՍՆ ՕՐԻՆԱԿ ԲԵ-  
ՐԵԼԻ : Մաս - ԺԶ . ԺԷ . ԺԾ . Մարկ . Թ . Ղաւկ . Թ :

Հրէաստանի ամէն կողմերը քարոզելուց յետոյ  
Յիսուս գնաց Կեսարիա քաղաքի կողմը . հարց-  
նումէր աշակերտներին թէ մարդիկ՝ ի՞նչ են կար-  
ծում ինձ համար թէ ով եմ » . նրանք պատաս-  
խան տւին . «Մէկն ասումէ թէ Յովհաննէն ես  
միւսը թէ Եղիա . մէկ քանիսը՝ թէ Երեմիա .  
կէսն էլ ասումէ՝ թէ մարդարէից մէկն ես» :

«Եսկ դուք ի՞նչ էք կարծում թէ՝ ով եմ ես՝  
ասաց Յիսուս»։ պատասխան տւառ Պետրոսը։  
«Դու ես Քրիստոս՝ Աստծու Որդին»։ Սրանից յետոյ Յիսուս վեր առաւ իր հետ աշակերտներից  
միայն Պետրոսին, Յակոբոսին և Յովաննեսին՝  
դնաց Թափոր լեառը, և էնտեղ երբ ազօթք էր  
անում Յիսուսի կերպարանքը բոլորովին փոխեցաւ,  
էնակս որ նրա երեսը արեի պէս լուսաւ-  
որւեցաւ, և շորերը փայլումէին ձիւնի պէս։  
Եւ էն ժամանակը երեւեցան Մովսէս և Եղիա  
մարգարէքը։ և սկսան Յիսուսի հետ խօսել՝ նրա  
չարչարանքի և մահուան վրաց, որ Երուսաղէմումը  
պիտի պատահէր։ Աշակերտները, որ էն ժա-  
մանակը թմբրած քնած էին՝ կարթեցան տեսան  
էս բանը՝ և գարմացած մասյին։ հետոյ երբ որ  
տեսան որ Մովսէսը և Եղիէն էլ չ'երեւացին, Պետրոսը  
շիռթւած՝ իր ասածը ինքը չը հասկանալով, սկսաւ  
Յիսուսին աղաչել թէ՝ «Վարդապետ լսու կը լի-  
նէր որ մենք էլ էս տեղ մնայինք, և երեք տա-  
ղաւար (չատր) շինենք, մեկը քեզ, մեկը Մով-  
սէսին, և մէկն էլ Եղիային»։ Էս խօսելուց՝ յան-  
կարծ մէկ լուսաւոր ամպ վրայ եկաւ ծածկեց  
նրանց, և էն ամսվից մէկ ձէն էլ եկաւ թէ՝  
«Սա է իմ սիրեկան Որդին՝ որին ես հաւան  
կացայ, սրան լսեցէք»։ Աշակերտները էս ձէնը որ

լսեցին թէ չէ՝ վախիցը էնտեղնւէտ լնկան երես-  
ների վրայ : Յետոյ Յիսուս ոտի վրայ կանգնա-  
ցրեց սիրտ տւառ նրանց և ասաց, որ էս տեսիլ-  
քը ոչ ոքի չը պատմեն՝ մինչև որ ինքը յարու-  
թիւն առնի :

**Ս**իւս օրը երբոր Յիսուս լեառնից (աարից) ցած  
եկաւ, տեսաւ որ՝ իր միւս աշակերտների մօտ  
շատ ժողովուրդ մէկ մէկու հետ կպած (տաք տաք)  
խօսում ու վիճում էին : Յիսուս երբ սրա պատ-  
ճառը հարցրեց՝ էն ժամանակը մէկը եկաւ Յիս-  
ուսի առջեր լնկաւ՝ և ասաց . «Վարդապետ, ես  
մէկ հասիկ երեխայ ունիմ», որին սատանէն բռո-  
նել դէսուդէն՝ երբեմն կրակը՝ երբեմն ջուրն է  
զձում . և փրփրեցնումէ՝ և սաստիկ տանջումէ  
էն ողորմելուն . բերի քու աշակերտների մօտ  
որ բժշկին, բայց չը կարացին»: Յիսուս նրան  
շարացած պատասխան տւառ . «Ով ազգ անհա-  
ւատ, ասաց, մինչև երբ լինիմ ձեզ հետ և ձեզ  
համբերեմ . բերէք առջես, ասաց, տեսնեմ»:  
Երբոր բերին, և դիւահարը Յիսուսին որ տեսաւ  
աւելի կատղեցաւ իրան գեանին խփեց, և բեր-  
նից փրփռեներ էր վազում : Յիսուս տեսնելով հօր  
հաւատքը՝ դութը շարժեցաւ նրա վրայ, և ա-  
սաց . «Պիղծ սատանայ, հրամայումեմ քեզ,  
դուս արի դրանից, և էլ չը մսնես էտեղ»: Էն

Ժամանակը շուտ գոռալով դեղ էնպէս սասակի  
տանջեց երեխին և մեռելի պէս գետնին զձեց .  
որ տեսնողները ասումէին թէ՝ մեռաւ ողորմելին :  
Բայց Յիսուս ձեռքից բռնեց վեր կացրեց , և ողջ  
ողջ հօր ձեռը տւառ , և ամենքը զարմացած մը-  
նացին էս մէծ հրաշքի վրայ : Յետոյ երբ աշա-  
կերտները եղ տուն եկան էնտեղ առանձին հար-  
ցրին Յիսուսին թէ Մենք ինչի՞ չը կարացինք  
բժշկել էս դիւահարինո : Յիսուս առաց . «Ձեր  
թերահաւատութեան համար . Ճշմարիտն եմ ա-  
սում ձեզ . եթէ մանանելի (խարդար) հառիկի  
չափ փոքր կամ քիչ հաւատով էլ ասէք էս դի-  
մացի լերին՝ (սարին) որ էն կողմը գնայ . հաւա-  
տով ասածներդ կը կատարւի , և ձեր առջեր  
անկարելի բան չի լինի : Բայց էս էլ իմացէք որ՝  
էսպիսի սատանէն ոչ ինչ բանով չի դուս դայ ,  
եթէ ոչ աղօթքով և պասով :

Արանից յետոյ մէկ անգամ Յիսուս ճամբին  
դնալուց՝ աշակերտների մէջ վէճ բացւեցաւ՝ թէ  
Յիսուս՝ երբ որ (ինչպէս իրանք կարծումէին) թա-  
գաւոր նստի , իրանցից մեծը ո՞րը պիտի լինի :  
Էսպէս խօսելով երբ տուն հասան , Յիսուս հար-  
ցրեց նրանց թէ՝ «Ի՞նչ էիք խօսում ճամբին .  
աշակերտները ամօթից էլ պատասխան չը կարա-  
ցին տալ . և յետոյ նորից հարցրին Յիսուսին

թէ «Երկնքի արքայութիւնումը՝ մեր միջից մեծը  
ո՞վ պիտի լինի»։ Յիսուս էլ էսպէս պատասխան  
տւառ . «Ով որ ձեզանից ուզումի, որ առաջինն ու  
մեծը լինի, առենից յետինը՝ և ամենին ծառ  
ուայ լինի»։ Եւ էս բանը Յիսուս օրինակով էլ  
կամեցաւ ցոյց տալ . էս պատճառ առ իր մօտ մէկ  
պստիկ երեխայ կանչեց, գիրկն առաւ (Խտտեց)  
և ասաց . «Ճշմարիտն եմ ասում ձեզ . թէ որ  
կարծիքներդ չը փոխէք . և էս պստիկ տղի պէս  
անմեղ և խոնարհ չը լինիք՝ երկնքի արքայութիւնը չէք մտնի»։ Ուրիշ անզամ էլ Յիսուսի  
առջեւը մանր տղերք բերին որ օրհնի նրանց :  
Էս բանի վրայ երբ աշակերտները բարկացան  
դուս արին երեխանցը՝ կարծելով թէ Յիսուսին  
նեղութիւն լինի, Յիսուս ասաց նրանց . «Թու  
զէք գան մօտս, ի՞նչ էք կարծում . Աստծու  
արքայութիւնը էդպէաներինն է» . և էսպէս գիրկն  
առաւ օրհնեց էն տղերանցը :

20. ՀՐԱՋՔՈՎ ԵՐԿԴՐՍՄԵԱՆ ՀԱՐԿ ՏԱԼԸ, ՓՈՒԶԵԼԸ ՑԵ-  
ՍՈՒՄԻՍԻՆ ԿԱՆԱՀՅ ԱՐՉԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՑԻՍՈՒՄԻ ԱՂՅԹՔ-

ՍՈՎՐԱՑՆԵԼԸ ԻՐ ԱՇԱԿԵՐՏԱՅ :

Մատ . Զ : Ժէ . ԺԹ : Ղ. Պ. Ի . ԺԱ .

Արանից յետոյ Յիսուս իր աշակերտներով եւ  
կաւ կափառնաւում . եկան Պետրոսի մօտ և պա-

Հանջումեին երկրամեան հարկը . և մինչեւ որ  
Պետրոսը պէսք է յայտնէր Յիսուսին՝ նա ինքը  
հրաման տւառ Պետրոսին թէ՝ «Գնած ծովի ափը՝  
և գձիր կարթը (շանգալ), և առաջին ձուկը  
որ դուս դայ՝ վեր առ բաց արա նրա բերանը և  
մէկ սատեր կը գտնես, և էն առ տուր նրանց  
ինձ համար և քեզ համար :

Արանից յետոյ երբոր Յիսուս դուս եկաւ գալիլ  
եայից և գնաց Յորդանանու էն կողմը . շատ  
ժողովուրդ գնացին նրա ետևից՝ և Յիսուս բժշ  
կեց նրանց հիւանդներին : Էն ժամանակը Փաւ  
րիսեցիք եկան և փորձելով հարցնումին թէ  
«Արժան է մարդուն որ իր կինը արձակի»: Յի-  
սուս պատասխան տւառ թէ՝ «Մովսէս ինչ հրա-  
մայեց ձեզ՝ նրանք ասացին թէ՝ «Մովսէս հրա-  
ման տւառ արձակման գիր տալ և թողնել»: Յի-  
սուս ասաց . «Մովսէսը ձեր չարասրտութեան հա-  
մար տւառ ձեզ էն օրէնքը»: «Բայց աշխարհիս  
սկզբից Աստուած արու և էդ ստեղծեց, և օր  
հնեց . և ասաց, մարդ թողնի իր հօրը և մօրը  
և գնայ իր կնոջ հետ և երկուսը մէկ մարմին  
լինին . և երբոր Աստուած միաւորեց՝ մարդկե-  
րանցից ոչ ոք չը բաժնի»:

**Մէկ** անգամ Յիսուս կանգնեցաւ մէկ տեղ  
և աղօթք էր անում . երբ վերջացրեց աղօթքը՝

իր աշակերտներից մէկը ասաց նրան, «Տէր, ա-  
զօթք անել սովորացրու մեզ, ինչպէս Յովհաննէս Մկրտիչը սովորացրեց իր աշակերտներին, Յիսուս  
ասաց նրանց. Երբ աղօթք ընէք անում, ասա-  
ցէք, Հայր մեր՝ որ Երկնքումն ես. սուրբ լինի քու-  
անունը. գայ քու թափառորութիւնը, քու կամ-  
քը կատարեի՝ ինչպէս Երկնքումը, Էնպէս էլ էս  
Երկրումը. մեր ամէն օրւայ հացը տուր մեզ էսօր  
էլ: Թող մեզ մեր պարտքերը. ինչպէս որ մենք  
էլ թողնումենք մեր պարտատէրներին: Այս գձիր  
մեզ փորձանքի մէջ. այլ աղատիր մեզ չարից,  
Յետոյ սրա վրայ ասաց, «Զեզանից մէկը, որ բա-  
րեկամ ունենայ, և կէս զիշերին գնայ նրա մօտ  
և ասի նրան, բարեկամ, Երեք հաց փոխ տուր  
ինձ, պատճառոր՝ իմ բարեկամս եկաւ իմ մօտ  
ճամբից, և ոչ ինչ չունիմ որ նրա առջելը  
դնեմ: Ասումեմ ձեզ, եթէ բարեկամութեան  
համար էլայ չը վերկենայ չը տա՞յ գոնէ էնքան  
աղաշանքի համար կը վերկենայ կը ասայ նրան ինչ  
որ պէտքն է, պատճառոր՝ ով որ կը խնդրի կառ-  
նի, ով որ կը պտուի՝ կը գտնի. ով որ դուռը կը  
ծեծի՝ կը բացւի նրան»:

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ԱԳԱՀԻ ԱԽԱԿԻ : Դակ : ԺԲ

Անգամ Յիսուս, երբ խրատումը իր աշակերտներին որ զգոյշ պահեն իրանց փարիսեա-

ցւոց կեղծաւորութիւնից, և ուրիշ շատ խրատ-  
 ներ խօսելոց յետոյ՝ ուր շատ ժողովուրդ էին  
 հաւաքւած՝ մէկը նրանցից ասաց. «Արդապետ,  
 ասա՛ եղբօրս որ ժառանգութիւնը բաժնի հետո»:  
 Յիսուս ասաց նրան. «Ով կարգեց ինձ ձեր վրայ  
 դատաւոր և բաժանարար»։ և յետոյ նրանց ա-  
 սաց՝ «Տեսէք զգոյշ կացէք ամեն ազահութենից,  
 սպատճառոր՝ երբէք մէկի կեանքը իր հաւաքած  
 ապրանքից չէ»։ Եստուր վրայ. ասաց էս առակը.  
 «Մէկ հարուստ մարդու արտելը առատ պտող  
 տւին՝ մտածումէր ինքն իրան. ի՞նչ անեմ՝ որ  
 տեղ չկայ ուր ժողովեմ իմ պատղներս։ Յետոյ  
 ասաց. «Գիտեմ ինչ կ'անեմ. կը քանդեմ իմ  
 ամբարներս և աւելի մեծ մեծը կը շնորհեմ, և  
 էնտեղ կը հաւաքեմ իմ ցորենս և ամեն բա-  
 րիքս. և ինձուինձ կ'ասեմ, ով անձն՝ շատ բա-  
 րիքներ ունիս շատ տարւայ համար հաւաքած,  
 հանդստացիր՝ կեր խմի և ուրախ կաց։ Աստուած  
 ասաց նրան. անմիտ, էս գեշեր քու հողիդ քե-  
 զանից եղ գուզեն, ապա էն որ սպատճառեցիր՝ ումը  
 կը լինի. էնպէս էլ նա՝ որ իրա համար գանձ (խափ-  
 նայ) հաւաքի, և Աստծովը հարստանայ մեծանայ»։

Եստուր համար եմ ասում ձեզ, ասաց  
 իր աշակերտաներին թէ՝ «Մի հոգաք ուրոյ  
 (կեանքի, մարմնու կերակրի) համար թէ»

լինչ պիտի ուտէք, և ոչ մարմնոյ համար  
թէ ինչ պիտի հազնէք։ Մարկ արէք աղռանե-  
րին, որ ոչ ցանումն և ոչ հնձում։ որ ոչ մա-  
ռաններ ունեն և ոչ ամբարներ։ Աստուած կե-  
րակրումէ նրանց՝ ապա որբան էլ աւելի ձեզ՝ որ  
թռչոններից լաւն էք։ Մարկ արէք շուշան  
ծաղկին՝ որ ինչպէս է մեծանում, ոչ աշխատում  
և ոչ մանում։ ասում.մ ձեզ՝ որ Սողովմոնն էլ  
իր ամէն փառքումը նրանցից մէկի նման չը հա-  
գաւ։ Եթէ խոսք՝ որ էսօր կանանչ է և էգուց  
հնոցը (փուռը) գձելու էրելու, Աստուած էն-  
պէս է հազնում, ապա որքան էլ աւելի ձեզ  
թերահաւաններ։ Կաք մի խնդրէք թէ ինչ տ-  
անէք կամ ինչ խմէք, և հոգս մի արէք։ ձեր  
հայրը գիտէ՝ որ էն ամէնը պէտք է ձեզ, խնդ-  
րեցէք Աստծու արքայութիւնը։ և էն ամէնը  
կ'աւելանայ ձեզ։

22. ԱՆՈՂՈՐՄ ՊՈ.ՌՏԱՏԵՐԻ ԵՒ ՈՂՈՐՄԱՆ ՄԱՐԱՐԱՅԻՑ

ԱԹԱԽԵՐԻ, ԵՒ ՏԱՄԲ ԲՈՐՈՏՆԵՐԻՆ ԸՃՆԿԵԼ.:

Մատ. ԺԲ. Դ. Ա. Ժ.:

Մէկ անգամ Յիսուս եղայրական յանդի-  
մանութեան վրայ քարոզ ասլով ասաց Եթէ  
եղայրդ եօթն անգամ մղանչի քու գէմ և  
եօթն անգամն էլ զղջայ քեզ մեղայ առի, թռ-

զութիւն տուր նրան : Էս բանի վրայ Պետրասը  
տարակուսեցաւ . և ուզեց իմանալ թէ էս եօթը  
համբանքից է կախւած թողութիւն տալը , երբ  
հարցըց Յիսուսին , նա էլ պատասխան տւառ  
թէ ոչ թէ միայն եօթն անգամ , այլ թէդուզ  
եօթն անգամ եօթանասուն էլ լինի , այսինքն ա-  
ռանց համբանքի՝ քանի անգամ էլ որ պա-  
տահի . էս բանի վրայ ասաց Յիսուս էս առակը .

«Ահեք թագաւոր , ասայ , հաշիւ պահանջեց  
(հետաք ուզեց) իր ծառաներից , և նրանցից մէկը  
թագաւորին պարտական մնաց տասը հաղար քան-  
քար : Սա երբոր չունէր որ էսքան փողը վր-  
ճարէր , թագաւորը հրամայեց որ նրան տնով  
տեղով ծախեն՝ և էնակէս պարտքը վճարի : Են  
ժամանակը էս պարտատէր ծառան թագաւորի  
ոտներն ընկու աղաչեց որ փոքր ինչ ժամանակ տայ  
նրան՝ թագաւորի գութը շարժեցաւ՝ բաշխեց  
նրան բոլոր պարաքը : Սա երբոր դուս եկաւ էն-  
տեղից՝ պատուհեցաւ իր ընկերներից մէկին . որ  
պարտական էր իրան հարիւր գահեկան (Հինդ շա-  
հանոց) գնաց բռնեց էն իր պարտատէրին՝ և խեղ-  
դումը թէ «Տնւր ինձ պարաքդ» : Նա խեղճը  
ընկաւ նրա ոտները աղաչումէր և ասում թէ  
«Փոքր ինչ համբելի՝ կը տամ» : Սա չէր լսում .  
էնքան որ՝ տարաւ նրան բանաը դձել տւառ , մինչ

չե որ պարտքը վճարի : Ես որ տեսան միւս ծառանները, ցաւելով գնացին պատմեցին թագաւորին . թագաւորն էլ նորմէկանց կանչեց նրան իր մօտ, և սաստիկ բարկացած ասաց . «Ծառայ չար, ես լսեցի քու աղաչանքի և ոլորմութիւն արի քեզ՝ բաշխեցի քեզ քու բոլոր պարտքդ . չ» որ դու էլ ինձանից օրինակ պիտի առնեիր՝ ողորմեիր քու ընկերոջդ»: Եւ Էնալէս նորից բռնեց՝ դահիձների ձեռքը գձեց նրան, որ չը թողնեն մինչեւ որ բոլոր պարտքը վճարին, Եսալէս էլ, ասաց, իմ երկնաւոր Հայրը կ'անի ձեզ՝ եթէ որ զուք էլ ձեր եղբօր մեղքերին սրտանց թողութիւն չը տաք»:

Ելի ուրիշ անգամ մէկ օրէնագէտ ուսուցիչ փորձելով Յիսուսին՝ Հարցրեց թէ «Ի՞նչ անեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ (արքայութիւն գնամ)»: Յիսուս ասաց նրան . «Ի՞նչ է դրած օրէնքումը»: «Նա էլ պատասխան տւառ . սրտանց սիրիր քու Տէր Աստծուն, և այն . և քու ընկերոջդ ինչպէս քու անձը»: Յիսուսասաց . «Լառ պատասխան տւիր՝ եթէ էդ ասածդ կատարես՝ կը փրկւիս»: «Նա էլ Հպարտութիւնով և պարձենալով Էնալէս էր ցոյց տալիս, որալէս թէ իրանից աւելի լաւ օրէնք պահող չը կայ»: Ել ուրիշ ովկ կը դտնւի ինձ ընկերու ասաց»: Են ժա-

մանակը Յիսուս նրան խրատելով՝ ասաց էս առակը . «Մէկ հրէայ , ասաց , Երուսաղեմից Երիքով քաղաք էր գնում՝ աւազակները վրայ թափեցան , ինչ ուներ ամէնը խլեցին և իրան էլ վերաւորեցին , և կիսամեռ . ճամբի վրայ ընկած թղղն գնացին : Էն ճամբից անցկացաւ մէկ քահանայ , և էն ողորմելուն էնտեղ տեմնելով՝ հոգսը տարաւ վանց արաւ , Էնպէս անցկացաւ գնացիր բանին : Նրանից յետոյ մէկ դեւտացի անց կացաւ էն տեղից , նա էլ դանց արաւ գնաց : Յետոյ մէկ սամարացի անց կացաւ . երրոր էս ողորմելի մարդուն տեսաւ՝ սիրտը ցաւեց նրա վրայ , վեր առաւ նրա խոյերի վրայ ձէթ ու գինի քսեց փաթթեց . և Էնպէս իր ձիու վրայ դրած՝ նրան մէկ պանդոկ (դուքան) տարաւ՝ որ գնայ հանգստանայ , և միւսը օրը որ պէտք է գնար էնտեղից , հանեց երկու դահեկան տւաւ պանդոկապետին՝ որ հոգս տանի նրան , և «Էլի ի՞նչ որ աւելի ծախս գնայ , ասաց , միւսանդամ գալուցը կը վճարեմ : Էս առակը պատմելուց յետոյ՝ Յիսուս հարցրեց էն մարդուն . «Հիմի ասաց , էս երեքից ո՞րը քեզ աւելի բարեկամ է երեւմ՝ էն ողորմելի մարդուն : Նա էլ պատասխան տւաւ թէ «Կա , որ էնպիսի ողորմութեան գործքեր արաւ» : Յիսուս էլ ասաց • «Գնա դու էլ էնպէս արաւ» :

Աէկ անգամ Յիսուս Գալիեայի և Սամա-  
րիայի միջից անց կենալուց՝ ճամբին տասը բո-  
րոտ (լսոցոտ քոռոտ) պատահեցան նրան, և հե-  
ռութից կանգնած ձէն էին տալի. «Յիսուս վար-  
դապետ ողորմիր մեզ, Յիսուս ասաց նրանց ·  
«Գնացէք քահանաներին ցոյց տւեք ձեզ, երբոր  
նրանք գնացին՝ շուտով ամէնքը բժշկուեցան : Նը-  
րանցից մէկը որ Սամարացի էր, երբոր բժշկուե-  
ցաւ, փառք տալով Աստծուն՝ շուտով եղ եկաւ  
Յիսուսի ոտեղը լնկաւ, և չնորհակալ էր լինում  
նրանից : Նրան որ տեսաւ Յիսուս ասաց · «Զէ՞ որ  
տասը հոգի էին բժշկողները · մէկէները իննը  
հոգին ուր են, ինչի՞ եղ չեկան Աստծուն փառք  
տալու, այլ միայն էս այլազգին արաւ» . և նր-  
ան ասաց · «Վերկաց գնա՛, քու հաւառքդ քեզ  
ապատեց» :

/23. Եօթ. Անծ. ՍՈՒՆՈՒԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԲՆՏՐՈՒԹԻՒՆՔ.

ՄԱՐԹՈ. ԵՒ ՄԱՐԻԱՄ. ԽԾՆԵ ԿՈՒՐԻՆ ԲԺՇԿԵԼ. • ՅԻՍՈՒ-  
ՍԻ ԻՐ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆԻ ՔԱՐՈՉԵԼ. :

Դուկ. Ժ. Յով. Թ. Ժ.

Պաց ի տամներկու առաքելոցը՝ Յիսուս ընարեց  
էլի եօթանասունուերկու աշակերտ, և նրանց  
խրատ տալով՝ թէ ինչպէս պիտի վարւեն ժողո-  
վուց հետ երկու երկու ուղարկեց Հրէաստանի

վանագան քաղաքները, որ իրանից առաջ գնան  
քարովն : Էս աշակերտները երբոր Յիսուսի հրա-  
մանը կատարեցին, և եդ եկան՝ սկսան ուրա-  
խոթեամբ պատմել Յիսուսին թէ «Տէր, դևերն  
էլ մեզ հնազնղումին՝ երբ քու անունը տա-  
լիս էինք», Յիսուս ասաց նրանց . «Ալ! զարմա-  
նաք էտուր վրայ . որովհետեւ տեղեմ ձեզ իշ-  
խանութիւն՝ որ նրանց ոտի տակը գձէք . այլ  
աւելի նրա վրայ ուրախացէք, որ ձեր անուն-  
ները գրւած են երկնքումը»: Կն ժամանակը Յի-  
սուսի սիրոն էլ ուրախութեամբ լքցւած՝ աչ-  
քերը գձեց դէպի երկնքը և ասաց, «Ով Հայր  
երկնի և երկրի Տէր, որ էս խուրհուրդը իմաս-  
տուններից և դիտուններից ծածկեցիր (պահե-  
ցիր), և միամիտ տղերանց յայսնեցիր»:

**Մէկ** անգամ բեթանիա դեղը գնաց Յիսուս  
և էստեղ Մարթա և Մարիամ՝ Ղաղարոսի քու-  
րերը Յիսուսին հրաւիրեցին իրանց տուն: Մար-  
թան շուտ վագեց գնաց կերակուր պատրաստելու,  
իսկ Մարիամը Յիսուսի առջեւ նստած՝ ականջ էր  
գնում նրա խօսքերին: Էս որ տեսաւ Մարթան,  
եկաւ Յիսուսին գանգատելով ասաց թէ «Տէս  
քոյր մենակ է թողել ինձ՝ որ աշխատումեմ,  
ասա որ գայ օգնի ինձ»: Յիսուս պատասխան տր-  
ւաւ, «Մարթա, դու, ասաց, շատ բաների եւ-

տեից ես ընկել ի զուր ես չարչարւում, պատ-  
ճառոր էսակեղ քիչ բանն ել է հերիք. Մարիամի  
ընորած (ջոկած) բաժինը աւելի լաւ է, որ  
միշտ կը մնայ»:

Արանից յետոյ Յիսուս մէկ անգամ շաբաթ-  
օրը Երուսաղէմ դնալուց Ճամբին մէկ մուրաց-  
իրանի (ողորմութիւն ուղղի) պատահեցաւ, որ  
կոյր էր երկու աչքով: Աշակերտները որ տեսան՝  
Յիսուսին հարցրին թէ «Արա կուրաթեան վեա-  
սը (մէղը) ումն է. հօրն ու մօր մեզն է՝ թէ իւ-  
րանը, որ էսպէս կոյր է ծնել»: Յիսուս ել ասաց  
թէ «Ոչ ոքի մեղ չէ, այլ Աստուած էսպէս է  
արել, որ յետոյ բժշկելով՝ ինքը աւելի փառ-  
ուաւորւթիւն: Յետոյ Յիսուս մօտ գնաց՝ թքաւ գետ-  
նին, նրանով կաւ (ցեխ) շինեց վերառաւ ծեւ  
փեց կուրի աչքերին, և հրամայեց զնալ Աելու-  
վամի աւաղանումը լուացւիլ: Կյրն ել երբ էն-  
պէս արաւ՝ իսկոյն բացւեցան աչքերը: Արա դրա-  
ցիք (հարևանները) և Ճանօթները երբ տեսան  
սրան, զարմացան, կասկածումէին թէ՝ աս էն  
մուրացկան կոյրն է միթէ, յետոյ իրան հար-  
ցըն՝ իմացան որ Յիսուսն է բժշկել: Բայց Փա-  
րիսեցիքը էս լսելով՝ սկսան Յիսուսի վրայ տրտն-  
ջալ թէ շաբաթ օրն է արել. և նորմէկանց  
ստուգելուց յետոյ՝ էն մարդուն կանչեցին իրանց

մօտ եւ ասացին . «Փառք տուր Աստծուն , ո՞ր ըլք  
ժշկեց քեզ . Յիսուսը մեղաւոր մարդէ , նա ի՞նչը  
պէս կարող է անել էդ բանը» : Նա էլ ասաց .  
«Ես նրա մեղաւոր լինելը ըստ գիտեմ . այլ միայն  
գիտեմ որ կոյր էի , նա ինձ բժշկեց , և հիմի  
տեսնումնեմ . բայց էս էլ գիտենք որ Աստուած մեւ  
զաւորների աղօթքը չի լսի , այլ սուրբ և արդար  
մարդկերանցը . և մինչև հիմի էլ լսւած չէ թէ  
մէկը ի ծնէ (մօրից ծնած) կուրի աչք բայց ու-  
րած լինի . եթէ նա Աստծանից եկած ըստ լինէր՝  
էս չէր կարող անել» : Փարիսեցւոց խիստ թւաց  
էս խօսքը , և ջգրւելով անսարդելով նրան՝ ասաւ  
ցին . «Դու բոլորովին մեղքի մէջ ես ծնած , հիմի  
եկել դու մեզ վարդապետութիւնն ես անում»  
և էնպէս անսպատելով դուս արին : Յետոյ պա-  
տահեցաւ Յիսուս էն մարդուն , և յայտնեց թէ  
նա ինքը Աստծու Որդին է . նա էլ իսկոյն ասաց .  
«Հաւատումնեմ» Տէրու : և երկրագագութիւնն տը-  
ւաւ նրան :

Մէկ անգամ Յիսուս ձմեռ ժամանակը տաւ-  
ճարի նաւակատիքի տօնախմբութեան օրը՝ Էնուեղ  
սրահումը մանգալիս , Հրէաները վրայ թափւե-  
ցան , սկսան նրան ասել թէ՝ «Մինչև ե՞րբ տա-  
րակուսացնելով մեզ հոգիներս հանես . եթէ դու  
ես Քրիստոսը , սկարդ ասա որ գիտենանք» : Յի-

տւա պատասխան տւաւ թէ՝ «Զեզ ասել եմ, բայց  
 դուք ինձ չեք հաւատում։ Ենքան գործքեր որ  
 ես իմ Հօր անունով անումեմ։ Նրանք ինձ վկայ  
 եք լինին, և դուք չեք ուզում հաւատալ։ պատ-  
 ճառոր՝ դուք իմ ոչխարներիցս չեք։ Իմ ոչխար-  
 ներս իմ ձենս լսումեն, և ես նրանց ճանաչում  
 եմ։ գալիս են իմ ետևից, ես էլ նրանց յա-  
 շխանական կեանք եմ տալիս, և յաւիտեան-  
 ցն կորչեւ։ և ոչ ոք իմ ձեռքիցս պիտի չը յա-  
 փշտակի նրանց՝ որովհետեւ իմ Հայրը որ ինձ  
 տւել է ամեն բանից մեծ է, և ամենեւին ոչ  
 ոք իմ Հօր ձեռքից կարող չել յափշտակել (խել)։  
 էս էլ իմացեք որ՝ ես և իմ Հայրս մեկ ենք»։  
 Էս որ լսեցին Հրէաները, շուտովքար վերառուան  
 ձեռներին որ քարկոծեն նրան։ Յիսուս էլ ար-  
 ցրեց նրանց թէ՝ «Իմ ո՞ր բարի գործքերի հա-  
 մար էք ուզում ինձ քարգործել»։ Նրանք էլ  
 ասացին թէ՝ «Բարի գործքերիդ համար չենք ու-  
 զում քեզ քարգործել, այլ հայհոյութեանդ  
 համար, պատճառոր՝ դու մարդ ես, և քեզ  
 Աստծու տեղ ես դնում»։ Յիսուս էլ Աստուածա-  
 շունիցի խօսքերով պապանձեցրուց նրանց, և ցոյց  
 տւաւ թէ՝ ինքը Հօր Աստծու ծշմարիտ բրդին  
 Աստուած է, Հրէայք ուզումեին որ բռնեն Յի-  
 սուսին, բայց նա դնաց հեռացաւ նրանցից։

24. ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՌՅԱՅ ՍՈՒԱԿԻ: Դուկ! • ՃԵ:

Հըեից վարդապետները և ֆարխոեցիք տեսանելով որ Յիսուս մաքսաւորներին և մեղաւորներին իր մօտ ժողոված քարոզումէք նրանց արքանցումէին թէ Յիսուս ինչի<sup>0</sup> համար է էնապէս մարդկերանցը ընդունում։ Են ժամանակը Յիսուս նրանց սպատասխան տւառ էս առակով։ «Զեղանից մէկը, ասայ, եթէ հարիւր ոչխար ունենայ, և թէ նրանցից մէկը կորցնի, էն ինսնսունուիննը կը թողնի անապատումը, և կիրաժայ կը պտուտի ժն կորցրածը՝ մինչեւ որ գանի։ Եւ երբ գտնումէ դնումէ ուսի վրայ և խնդաշլով տանումէ տաւն։ կանչումէ իր բարեկամներին և դրացինելին (հարեւաններին) և ասում։ «Ուշրախացէք խնդացէք հետս, պատճառոր՝ կորած ոչխարս գտայ»։ «Ասումեմ ձեզ, որ էսպիսի ուշրախութիւնն է երկնքումը մէկ մեղաւորի համար՝ երբոր զղջայ ապաշխարի, քան թէ ինսնսունուիննը արդարների համար։ Կամ թէ Աէկ կնիկ եթէ որ տասը զբարունենայ, և տասնից մէկը կորցնի։ կը վառի ճրագը և կաւելի տունը և կը պտուի՝ մինչեւ որ գտնի կորած զբամը։ և երբ գտնումէ կանչումէ բարեկամներին և դրացիներին։ և ասում։ ուշրախացէք հետս։ պատճառոր՝ կորցրած զբամն (փողս) գտայ։ Էսպիսի ուշ-

77

ըախութիւն կը լինի երինքումը՝ մէկ մեղաւորի  
վրայ որ դառնայ ապաշխալի».

Յետոյ սրա վրայ առաց էւ առակը. «Մէկ մարդ  
երկու որդի ուներ սրանցից փոքրը՝ Հօրից ու-  
վեց առաւ իր ժառանգութեան բաժինը, և մէկ  
քանի օրից յետոյ վերկացաւ զնաց մէկ հեռու-  
երկիր. և էն տեղ շուայլ ապրելով բոլոր ունե-  
ցածը մվսեց փշացրեց. Յետոյ էն երկումը սաս-  
տիկ սով ընկաւ, էն ժամանակը սկսաւ էն ա-  
նառակ որդին բոլորովին աղքատանալ. էնպէս որ  
ձարը կտրած զնաց մէկ մարդու մօտ ծառայու-  
թենի մտաւ, նա էլ խողարած կարգելով նրան՝  
ուղարկեց անդը խողեր արածացնելու. էն ժա-  
մանակը նա քաղցածութիւնից՝ ցանկանումը որ  
էն խողերի կերակրից փորը կշացնի, բայց էն էլ  
չը կարանում ձեռք բերել Յանկարծ սրա միտն  
եկաւ թէ էն տեղ իր հօր տանը քանի՛ վարձ-  
կանիք (բանւոր) ծառաներ կան կերած կշացած՝  
և ինքը էս տեղ քաղցած մեռնումէ. «Խսպէս  
չի լինի, ասաց, արի կը վերկենամ կերթամ իմ  
հօր մօտ, և կ'ասեմ Հայր մեղայ յերկինս և  
առաջի քո՝ այսուհետեւ էս էլ արժանի չեմ որ  
քու որդի կոչւեմ, այլ քու ծառաներից մէկը  
համարիր ինձ»: Երբոր էնպէս վերկացաւ եկաւ իր  
հօր մօտ, Հայրն էլ հեռուից որ տեսաւ նրան՝ իս-

կոյն դեմ էլաւ որդուն , և վազեց զնաց զառ  
 թթւեցաւ և համբուրեց նրան : Որդին դեռ խօսա  
 քը ըլ վերջացրած՝ թէ «Հայր մեղյ յերկին» :  
 Հայրը շուտով հրամայեց ծառաներին , որ  
 նրա առաջւայ ապնիւ շորերը բերեն : մատանին  
 մատին դնեն , և կօշիկները ոտերին . և չաղա-  
 ցրած եղը բերեն մոլթեն՝ «Որ ուաենք , ասաց  
 և ուրախանանք էս ի՛ որդուս համար , որ մեռ-  
 ուած էր՝ և հիմա կենդանացաւ : կորած էր՝ և  
 գտնեցաւ» : Ես ուրախութեան ժամանակը՝ մեծ  
 որդին դրսից տուն էր գալիս . երբ լսեց խաղի և  
 պարի ձէնը , պատճառը չիմանալով՝ ինքն իրան  
 զարմանումը յետոյ երբ իմայաւ թէ իր անու-  
 ռակ եղքօր գալու համար է էն ուրախութիւնը՝  
 սաստիկ բարկութիւնից տուն չէր ուզում մանել :  
 Հայրը դուս եկաւ աղաւումը որ ներս մանի ,  
 իսկ նա հօրը պատասխան տւաւ . թէ «Եսկան  
 տարի է որ ես քեզ ծառայումեմ , և ամենելին  
 քու խօսքից չեմ դուս եկել . և մինչեւ հիմի  
 դու ինձ մէկ ուլ էլ ըլ տւիր , որ իմ բարեկամ՝  
 ներիս հետ ուրախանայի : և երբոր էն քու որ-  
 դիոդ եկաւ , որ վնասյել պոռնիկների հետ նաև լ  
 իր բոլոր ունեցածը կերել փչացրել է՝ դու չա-  
 ղացրած եղը նրա համար մոլթեցիր» : Հայրը ա-  
 սաց թէ «Ոլոդի , դու միշտ իմ հետս ես , և

բողոք ունեցածս քունն է . բայց էս ուրախուշ  
թիւնն էլ քու եղբօր համար պէտք է անել , որ  
մեռած էր՝ կենդանացաւ , կորած էր՝ դանեւ-  
ցաւ : Էս առակով Յիսուս ամաչացրեց Փարիսե-  
ցւոց , որ մեծ եղբօր պէս՝ չէին ուզում վայելել  
տալ փոքր եղբօրը՝ հօր գոթը որ չէր կամե-  
նում մեղաւորի մահը , այլ նրա դառնալը և  
սպիլը :

Հ 25 . ՏԱՏԵԱԽ , ԵՒ Ա.Ն.Յ.ՈՐԾ ՄԵԾԱՍՏԱՆ Ա.Ռ.Ա.ԽՆԵՐԸ :

Դակ \* ՃԶ :

Արանից յետոյ Յիսուս պատմեց իր աշակերտա-  
ներին էս առակը «Մեկ հարուստ մարդ ունէր  
մեկ անտես (կառավարիչ) . սրա համար լսեց թէ՝  
իրա կայքը միսելով վիշայնումէ : Նա էլ կանչեց  
էս տնտեսին և ասաց . «Էս ի՞նչ է որ լսումեմ  
քեզ համար՝ տուր քու տնտեսութեան հաշիւը,  
պատճառոր՝ էլ այսուհետեւ չես կարող ինձ ան-  
տես լինելու : Տնտեսը էն ժամանակը ինքն իրան  
մտածեց թէ ի՞նչ անի՝ որ այնուհետեւ կարու-  
ղանայ ապրել . «Որովհետեւ ասաց , աշխատել  
չեմ կարող , ողորմութիւն ու վելը ամաչումեմ» .  
Խորը միաք արաւ , յետոյ «Գուահմ ասաց ի՞նչ  
կ'անեմ . երբ էս տնտեսութենից զուս դամ որ  
մարդիկ իմ հետ բարեկամանալով ինձ ընդու-

նեն իրանց տներումը»։ Շուտով գնաց կանչեց մէկ մէկ իր տիրոջ պարտականներին ։ և հարցրեց առաջ մէկին ։ «Դու ի՞նչքան ես պարտ իմ տիրոջ»։ Նա էլ ասաց թէ Հարիւր մար (չափ) ձէթ։ Նստիր շուտ զրի յիսուն։ Յետոյ միւսին ասաց ։ «Դու ի՞նչքան ես պարտ»։ Նա էլ թէ Հարիւր քու (սոմար) ցորեն։ Նրան էլ ասաց, առ զիրդ (թամասոք), և զրի ութուն»։ Ես բանը որ լսեց տէրը՝ զովեց էն անիրաւ տնտեսին՝ որ խելքով բռնեց իր բանը»։ Ես առակով Յիսուս խրատ տւաւ ասելով թէ Էս երկրաւոր բարիքներով, որ անիրաւ մամոնայ (փող, հարսաւութիւն) կ'առի, քանիոր ձեր ձեռին է, նրանով ձեզ բարեկաներ ճարեցէք, որ ձեռքներիցդ զուս դնալուց յետոյ՝ նրանք օգնեն և ընդունեն ձեզ յաւիտենական թագաւորութիւնումը»։

Այսից յետոյ մէկ ուրիշ առակ էլ ասաց Յիսուս ։ «Մէկ մէծասուն (Հարուստ մարդ), որ ազնիւ և ծիրանի շորեր էր հագնում, և ամենօր սեղանը լիքը առատ առատ ուտում խմումը և ուրախութիւն էր անում։ Արա զրան մօտ ընկած Ղաղարոս անունով մէկ աղքատ կար՝ բոլոր մարմինը խոցոտած, և էն մէծասան սեղանի փշբանքին կարօտ էր. և շները գալիս լիզումէին նրա խոցերը։ Երբոր մեռաւ էն աղքար, հրեշտակ-

Ները եկան տարան նրան Աբրահամու պողը + չ'անցա  
 կացաւ շատ ժամանակ որ էն մեծատունն էլ մե-  
 ռաւ թաղւեցաւ , և դժոխքը զնաց տան ջանքի  
 մէջը՝ աչքը բաց արաւ հեռուից որ տեսաւ Ղա-  
 զարոսին Աբրահամի գողումը հանգստացած նրա-  
 տած է . ձեն տւաւ և ասաց Հայր Աբրահամ ,  
 ողորմիր ինձ , ուղարկիր Ղազարոսին , որ գոնէ  
 իր մատի ծէրը թաց անի ջրումը , և հովցնի իմ  
 լեզուն , որ էս սաստիկ տաքութիւնից պատակում  
 տանջւումն ։ Աբրահամը պատասխան տւաւ .  
 «Մեծ վիշ (փոթ) կայ մեր մէջ և ձեր մէջ . ոչ  
 էտեղից մարդ կարող է մեզ մօտ անցկենայ , և  
 ոչ էլ էս տեղից ձեզ մօտ։ «Միտք բեր , որ դու  
 աշխարհքումն վայելեցիր էն բարիքը . իսկ Ղա-  
 զարոսը համբերութիւնով քաշեց չարչարանքը .  
 Էնդուր համար հիմի սա էտեղ մխիթարուումէ ,  
 և դու էտեղ տան ջւռումն ։ Նա էլ ասաց . «Եթէ  
 էդպէս է , հայր , աղաջումն քեզ որ՝ Ղազա-  
 րոսին ուղարկես իմ հօր տուն . էտեղ ուրիշ  
 էլի հինգ եղբայր ունիմ , որ գնայ նրանց պատ-  
 մի քարտզի , որ չը լինի թէ նրանք էլ դան էս  
 տեղ և էս տան ջանքը քաշեն։ Աբրահամն էլ  
 ասաց . «Նրանք ունին Մօվսեսի և միւս մար-  
 դարէից գրքերը՝ թող նրանց ականջ դնեն։ Նա  
 կրկին պատասխան տւաւ . «Բնադէս չէ , ասաց ։

Հայր Աբրահամ. Եթէ մեռելներից մէկը գնայ  
նրանց մօտ, էն ժամանակը՝ կը հաւասան և կ'աւ-  
պաշխաքեն»: Աբրահամն էլ ասաց. «Եթէ Մով-  
ռեսին և ուրիշ մարդարէից չեն լսի, մեռելնե-  
րից էլ եթէ մէկը յարութիւն առնի գնայ՝ նրան  
էլ չեն հաւասայ»:

26. ԴԱՏԱԿԱՆԻՐԻ, ՓԱՐԻՍԵՑԻՈՅ ԵՒ ՄԱՔՍԱՆՈՐԻ ԱՌԱՎ-

ՆԵՐԻ: Դուկ. ԺՈ:

Ուրիշ անդամ՝ էլ Յիսուս մէկ առակ պատ-  
մեց էն բանի վրայ թէ՝ աղօթքից պէտք չէ ձան-  
ձրանալ (բեղարիլ). այլ միշտ պէտք է աղօթք ա-  
նել. «Ինչպէս, ասաց, մէկ դատաւոր կար մէկ  
քաղաքումը, որ Աստծուց չէր վախենումու մարդ-  
կերանցից էլ չէր ամաչում։ Էս քաղաքումը մէկ  
որբերի կնիկ էլ կար, որ անդադար գալիս էր  
էս դատաւորի մօտ և աղաչումէր՝ որ սրա դա-  
տաստանը կորի, և իրա ոստիսին (դաւաքարի) ձեռ-  
քից իրան սպասի. Դատաւորը երկար ժամանակ  
սրան անկանջ չէր անում. վերջը սրա ձեռքից  
ձանձրացած ինքն իրան մտածեց ասաց թէ «Իրաւ  
որ ես էնակես մէկ մարդ եմ որ Աստծուց չեմ վա-  
խենում և մարդկերանցից էլ չեմ ամաչում,  
բայց էս որբերու ձեռքից ազատւելու համար,  
որ միշտ գալիս դլուխս տանումէ, տեսնեմ կըտ-

ըեմ սրա դատաստանը»: Ես առակով Յիսուս սովորացրեց: «Եթէ որ ասաց, Էնպիսի մէկ անիւրաւ դատաւորը էսպէս արաւ, ասդա Աստուած արդար դատաւորի ինչպէս պիտի չը լսի տէր չը գառնայ՝ իրա, ծառաներին: որ գիշեր ցերեկ իրան դիմեն աղաքիր»:

Արա ետևից մեկ ուրիշ առակ էլ ասաց նրանց վրայ, որ պարտութիւնով պարծենում էին թէ իրանք արդար են, ուրիշներին արհամարհումեն և բանի օնել չեն դնում, «Երկու հոգի, ասաց տաճարը մտան աղօթք անելու. սրանցից մէկը Փարիսեցի էր (որ բարեպաշտ էր համարում Հրերէից մէջ), և միւսը՝ մաքսաւոր (հարկ առնող) որ էն ժամանակը մեղաւոր էր համարում»: Փարիսեցին սեղանի առաջը կանգնած՝ ինքն իրան սկսաւ էսպէս աղօթք անել «Աստուած իմ, Ճկորհակալ եմ քեզանից, որ ուրիշ մարդկերանց պէս յափշտակող, կամ անիրաւ, կամ շնացող չեմ, ինչպէս էս մաքսաւորը. այլ շաբաթը երակու անդամ պաս եմ պահում, և իմ բոլոր ունեցածից տասանորդը տալիս եմ աղքաներին»: Մաքսաւորնել մէկ կողմը քաշւած՝ ահից աչքերը վերև չերեւ կարում բարձրացնել, այլ գետնին մոխիկ տալով՝ կուրծքը ծեծումէր և ասում. «Աստուած, բաշխիր ինձ իմ մեղքելա»: Ես ա-

ուակը պատմելուց յետոյ ասաց Յիսուս» ։ Ճշմարիտն եմ ասում՝ որ՝ էս մաքաւագի շատ արդար դուս եկաւ տաճախց, քան թէ էս Փարիսեցին. պատճառոր՝ ով որ իրան վեր կրտ բաշի կը բարձրացնի, վերկընկնի կը ցածրանայ, և ով որ կը խռնարչի՝ կը բարձրանայ»։

27. ՀԱՐՈՒՍ ՄԱՐԴՈՒՆ ԳԺԵԼԱԲ ԳՅՈՒՅ ԱՐԲԱՅԻ

ԹԻՒՆԸ, ԵՒ ՄՆԱԿՆԵՐԻ ԱՌԱՋ

Մոռ . ԺՅ . Առքեւ

Աէկ անեղամ Յիսուս իր աշակերտանի հետ պնալիս՝ մէկ հարուատ մարդ զէմ եկաւ նրա առաջը չոքեց՝ և հացըրեց. «Վարդապետ բարի, ասաց, ի՞նչ բարի դործը անեմ որ արդայութիւն գնամ»։ Յիսուս պատասխան ու առ թէ օհնի ևս հարցնում բարեց համար ուստի իմանում որ բարին միայն Աստուած է առաջ եթէ ուզումես որ աղքայութիւն դնաս, օրոշի նրա պատուիրանքներ»։ Ես էլ հացըրեց թէ ո՞ր սպառուիրանքներ»։ Յիսուս ասաց. «Ա, չու աշանք, մի՛ սպանաներ, մի՛ շնար, մի՛ զնդանար»։ և այլն, Նա էլ ասաց. «Պատկռուցէւէտ էդ ամէնդ իստարել եմ. էլ ի՞նչ է պակաս ինձ»։ Էն ժամանակը Յիսուս էն մարդու հետ սէր գձելով ասաց նրան. «Աէկ բան էլ է պակաս քեզ, եթէ ու զումես

կատարեալ լինել՝ գնա՛ ինչ որ ունիս ծախի , և էն  
 փողը աղքատներին տուր . և էնպէս քու գանձգ  
 (խազինայ) երկնքումը լինի , և վեր կաց իմ հե-  
 տըս արին : Մեծատունը էս որ լսեց՝ որտմեցաւ  
 երեսը խոժոռած հեռացաւ նրա մօտից գնաց ,  
 պատճառոր՝ ինքը շատ հարստութիւն ունէր :  
 Էն ժամանակը Յիսուս շուռ եկաւ տշակերտնե-  
 րին ասաց . «Տեսէք , որդիք , թէ ի՞նչը էս դժար է՝  
 հարուստին , որ իր հարստութեան հետ սիրող  
 կապւած՝ յոյսը դրելէ նրա վրայ , արքայութիւն  
 գնայ . աւելի հեշտ է որ ուղար ասեղի ծակից անց  
 կենայ , քանիթէ հարուստը Աստծու առքայութիւնը  
 մօնին : Աշակերտները էս բանի վրայ շատ զարմա-  
 ցան , և սկսան մէկ մէկու ասել թէ «Եթէ էսպէս է՝  
 էլով կարայ փրկւիլ : Յիսուս մտիկ տւաւ նրանց՝  
 և ասաց . «Եթէ բանը մարդուս վրայ լինի՝ զորդ  
 որ տնկարելի բան է , բայց Աստծու առջեւը ա-  
 մեն բանը կարելի է : Էն ժամանակը Պետրոսը  
 ասաց Յիսուսին . ապա մեզ ի՞նչ պիտի լինի , որ  
 ամեն բանը թողինք՝ և քու ետևից եկանք : Յիս-  
 ուս պատասխան տւաւ «Ճշմարիտն եմ ասում  
 ձեզ՝ երբոր միւսանդամ աշխարհք դամ , փառ-  
 քով աթոռի վրայ նստած դատաստան անեմ ,  
 դոք էլ որ իմ ետևից եկաք՝ պիտի իմ հետ  
 տասներկու աթոռի վրայ նստիք՝ տասներկու նա-  
 8

բայելացւոց ազգը դատելու։ Յետոյ Յիսուս էս էլ  
ասաց թէ էն վերջին դատաստանի օրը շատ մար-  
դիկ որ հիմի մեծացել առաջ են եկել եթէ  
բարի գործք չունենան, եղ կընկնեն վերջինը կը  
լինին, և եղ ընկածները՝ իրանց բարեգործու-  
թիւնով առաջինը կը լինին։

Յետոյ էստուր վրայ մէկ առակ էլ պատմեց  
Աստծու արքայութիւնը, ասաց, նման է մէկ  
տանուտէրի, որ առաւօտք վաղ դուս եկաւ իր  
այգու համար մշակներ բռնի և հետները օրը  
մէկ մէկ գահեկան բարշեցաւ և ուղարկեց իր  
այգին։ Յետոյ երեք ժամուն (սահաթին) նորմէ-  
կանց դուս եկաւ ուրիշ պարագ մշակներ տես-  
սաւ։ Նրանց էլ ասաց թէ «Դուք էլ գնացէք  
իմ այգին (բաղ) բանեցէք, և ինչ որ ձեք վար-  
ձն (հախը) է կը վճարեմ»։ Կսակէս էլ վեց ժա-  
մուն և տասնումէկ ժամուն դուս եկաւ և ինչ-  
քան որ պարագ մարդիկ տեսաւ՝ հարցրեց թէ՝  
«Ինչի՞ համար սաղ օր պարագ էք մնացել». Նը-  
րանց էլ միւսների պէս ուղարկեց այգին և խոս-  
տացաւ թէ «Ինչ որ վարձն է կըստանաք», Երբ-  
որ իրիգնապահ էլաւ, տանուտէրը իր գաւառաւ  
պետին (ծախսալարին) ասաց. «Մշակներին կան-  
չիր առաջ, և յետիններից սկսի կարգով մինչև  
առաջինը և իրանց օրականները վճարի։ Եկան

տամնութեղի ժաման բռնած մշակները՝ և մէկ  
մէկ դահեկան ստացան . նրանցից յետոյ առաջ-  
այ բռնած մշակները՝ որ մնդներումը զբել էին  
թէ աւելի կառնեն , և երբոր տեսան թէ իրանց  
էլ էն միւսների պէս մէկ մէկ դահեկան տւաւ .  
պկան տանուտէրի վրայ տրտնջալ թէ « իս լոնչ  
օրէնք է որ՝ նրանք միայն մէկ ժամ (աահաթ)՝  
բանեցան , և նրանց էլ մեզ հետ հաւասար վարձ  
տւիր , որ մենք բոլոր օրը էն շոքին աշխատել  
ենք : Տանուտէրը պատասխան տւաւ նրանցից մէս  
կին . « Եղբայր , ասաց , լոնչ եմ զրկել քեզ , մէկ  
դահեկան չը բարշեցար հետս , առ փողդ՝ և  
գնա՛ բանիգ , ես չեմ իմ փողիս տէրը՝ ինչպէս  
որ ուղեմ էնպէս կ'անեմ : ինչի՞ ես նախանձում  
էն մէկիներին արած բարերարութեամս վրայ »:  
Էսպէս էլ ասաց Յիսուս . յետինները՝ առաջինը  
կը լինին , և առաջինները՝ յետին . պատճառը  
կանչւածները շատ են , բայց ընտրւածները  
սակաւ :

28. ԴԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ : Յովհ . Ժ.Ա :

Յիսուսի բարեկամ՝ Կազարոս անունով մէկ  
մարդ կար , որ ունէր երկու քոյր՝ Մարթայ և  
Մարիամ , և բնակւումէին միասին Բեթանիա գե-  
ղումը : Երբոր Կազարոսը հիւանդացաւ . նրա

քուրերը ուղարկեցին Յիսուսի մօտ թէ՝ «Քու<sup>1</sup>  
 սիրեկան Ղազարոսը հիւանդ է»։ Են ժամանակը  
 Յիսուս Հրէաստանից հեռացել էր, պատճառոր  
 նախանձոտ Հրէաները ուղումէին քարկոծել սպա-  
 նել նրան։ Ես որ լսեց Յիսուս, երկու օր էլի  
 ուշացաւ մնաց էն տեղ, և յետոյ աշակերտնե-  
 րին ասաց թէ «Գնանք նորմէկանց Հրէաստան»։  
 Աշակերտները ընդդիմանալով ասումէին . «Շատ  
 ժամանակ չէ որ Հրէաները քեզ ուղումէին քար-  
 կոծել, հիմա էլի ի՞նչպէս ես էնտեղ գնում»։  
 Յիսուս նրանց առակով ասաց թէ «Մեր բարե-  
 կամ Ղազարոսը քննել է, գնումեմ որ զարթացնեմ»։  
 «Նրանք չը հասկացան բանը՝ և զարմանում  
 էին թէ ի՞նչ է ասում։ Յետոյ բաց ասաց  
 Յիսուս . «Ղազարոսը մեռաւ . բայց ես ուրախ  
 եմ որ ձեր հաւատքը սրանով աւելի պէտք է  
 հաստատի իմ վրէս»։ Եւ երբ Յիսուս եկաւ  
 հասաւ Բեթանիա . Ղազարոսը չորսօրւայ մե-  
 ռած գերեզմանումն էր դրած . Մարթան որ իւ-  
 մացաւ թէ Յիսուսը գալիս է՝ դուս եկաւ առաջ վա-  
 զեց և ասաց . «Տէր, եթէ դու էս տեղ լինէիր՝ եղ-  
 բայրս չէր մեռնի . բայց հաւատումեմ՝ որ ինչ  
 Աստծանից խնդրես . նա կըտայ քեզ»։ Յիսուսը  
 ասաց . «Մի վախենա՝ եղբայրդ յարութիւն կ'առ-  
 նի» . և էն տեղ Մարթայի միտքը հաստատեւ

լով հաւատացրուց նրան թէ ինքը Քրիստոս Աստը  
 ծու Որդի է : Յետոյ երբ Մարթան գնաց՝ իր քբոջ  
 Մարիամին Յիսուսի մօտ կանչելու . էն ժամառ  
 նակը բոլոր սգաւորները և բարեկամներն էլ հետ  
 առ եկան՝ Յիսուսի վրայ թափւեցան, և ամէնքը  
 մեռելի վրայ լաց էին լինում : Յիսուսի գութը  
 շարժեցաւ, հարցրուց թէ՝ ուր է նրա գերեզ  
 մանը, և երբ գնաց գերեզմանի մօտ՝ լացը եկաւ  
 և հրամայեց վրէն զրած քարը վերցնեն : Մարտ  
 թան ասաց . «Տէր, չորս օրու այ մեռելէ, հիմա  
 հոտած կը լինի» : Յիսուսն էլ ասաց . «Զասացի՞  
 քեզ որ՝ եթէ հաւատաս՝ Աստծու հրաշքը կը  
 տեսնես» : Քարը գձել տւաւ մէկ կողմը, աղօթք  
 արաւ՝ և երբ բարձր ձէնով կանչեց . «Ղազարոս,  
 վեր կաց դուս արի», իսկոյն մեռելը, որի ոտնեւ-  
 րըն ու ձեռները պատանքով փաթթած կապած  
 էին, կանգնեցաւ, և Յիսուս հրամայեց եղ առ  
 նեն թռնեն որ գնայ մանդայ : Էս տեսնողներից  
 շատը հաւատացին Յիսուսին, և ոմանք էլ դը-  
 նացին պատմեցին Փալ իսեցւոց, որ Յիսուսին շատ  
 թշնամի էին : Էս պատճառաւ քահանայալետ-  
 ները և Փարիսեցիք հաւաքւեցան ժողովք արին  
 և նախանձով կուրացած էս պատճառը բերին թէ  
 «Յիսուսին էսպէս որ թռնենք . իր հրաշքնե-  
 րով բոլոր ժողովուրդին դէպի իրան կը քաշ

Հաւատացեալ կը դարձնի . և էն ժամանակը Հը-  
ռովմայեցիք կը զան քարուքանդ կ'անեն» . Էն-  
դուր համար կայիալիա քահանայապետը խոր-  
հուրդ տւառ ասաց . «Լաւ է որ մէկ հոգի մե-  
ռնի՝ քան թէ մեր բոլոր ազգը կորչի» . և էնպէս  
իրանց մէջ խօսք կապեցին որ Յիսուսին բռնեն  
սպանեն : Յիսուսն էլ էս լսելով , կրկին հեռա-  
ցաւ փոքր ինչ ժամանակ գնաց Եփրայիմ՝ զեղը և  
էնաեղ մնաց :

✓ 29 . ԶԱ.ՔԵՌՍԻ ԴԱՐՁԸ , Ա.ԶՈՒԱԿԱՆԻ ԱՌԱԿՆԻ . ԵՒ ՄԱ-

ՐԻԱՄԻ ԻՒԳԱՎ , ՅԻՍՈՒՍԻՆ ՅՆԵԼԸ :

Մատ . Ի . ԷԶ . Ղ.Ա.Կ . ԺԹ . Մարկ . Ժ.Դ . : Յով . ԺԲ :

**Ե**րբ զատկի աօնը մօտեցաւ , էնտեղից դուս ե-  
կաւ Յիսուս որ կրկին Երուսաղէմ գնայ , և ճամ-  
բին աշակերտաց յայտնեց թէ էս աօնին մար-  
դարէից գրւածները իմ վրէս պիտի Երուսաղէ-  
մումը կատարւի , իրան պիտի չարչարեն՝ խաչեն ,  
սպանեն . բայց ինքը ելեք օրից յետոյ յարու-  
թիւն պիտի առնի : Էն ժամանակը Զերեղիայի  
որդիւը Յակոբոսը և Յովհաննէսը , և իրանց մայ-  
րը՝ Յիսուսից խնդրեցին ելքոր՝ ինքը թագաւոր  
նստի , նրանցից մէկին իր աջ կողմը՝ միւսին ձախ  
կողմը՝ նստացնի : Յիսուս ասաց նրանց թէ «իմ

թագաւորութիւնս աշխարհքիս թագաւոլների  
 պէս չէ, որ հպարտութիւնով մեծութեան եսեից  
 ընկնելով լինի, այլ խոնարհութիւնով և համ-  
 բերութիւնով»: Յետոյ երբ Յիսուս Նրիքով քա-  
 ղաքին մօտեցաւ, Ճամբի վրայ մէկ աղքատ կոյր  
 բժշկեց: Էս քաղաքումը մէկ հայուստ մաքսա-  
 պետ կար՝ Զաքէսս անունով, սա Յիսուսի անունը  
 լսելով՝ ցանկանումէր տեսմել նրան. և երբ Յի-  
 սուս մտաւ Նրիքով, և բաղմութիւնը վրէն հա-  
 ւաքւած հետը զնումէին, Զաքէսը կարճահա-  
 սակ լինելով՝ մէկ ժանտաթվենու ծառի վրայ վեր  
 էլլաւ, որ Յիսուսին լլաւ տեսնի: Յիսուս նրա առ-  
 ջեից անցկենալոց մօիկ արաւ և տասց ։ Զա-  
 քէ, շուտ ցած արի. Էսօր ես քու տանիդ պէտք  
 է վեր գամ»: Նա էլ շուտով ցած եկաւ ուրախ  
 սրտով ընդունեց Յիսուսին իր տանը. Էստուր վրայ  
 ժողովուրդը սկսաւ տրանջալ թէ՝ ի՞նչպէս մե-  
 զաւոր մարդու մօտ վեր եկաւ: Բայց Զաքէսը  
 Յիսուսի առջեւը կանգնեցաւ տասց ։ «Տէր, ահա  
 իմ բոլոր ունեցածիս կէսը աղքատներին կը տամ,  
 և ում որ զըկել եմ՝ չորս անգամ աւել կը հա-  
 տուցանեմ նրան (կըտամ)»: Են ժամանակը Յի-  
 սուս տասց ։ «Էսօր փրկւեցաւ էս տունս, որ սա  
 էլ Աբրահամու զաւակ էր. և ես էնդուր հա-  
 մար եկայ որ կորածներին պառեմ, և փրկեմ»

(աղատեմ) »; Յետոյ Յիսուս մէկ առակ ասաց իր  
Երուսաղէմ պնալու վրայ, որ իրա թագաւորու-  
թիւնը յայտնի . «Մէկ աղնուական մէկ հեռու եր-  
կիր պիտի զնայ որ էն տեղի մեծից առնի իրա  
թագաւորական իշխանութիւնը՝ և եդ գառնայ :  
Սա կանչեց իր ծառաներին . և մարդագլուխ՝  
տասը տասը մնաս (քիսա փող) տւառ, և ասաց որ՝  
Էն փողերը բանեցնեն մինչեւ իր եդ գալը : Երբոր  
վերկացաւ զնաց, իրա քաղաքի մարդիկը որ նրան  
չէին սիրում՝ ետեից ուղարկեցին էն մեծին  
հասկացնելու թէ «Դրան մենք չենք ուզում որ  
մեր վրէն թագաւոր լինի»: Բայց նա երբ թա-  
գաւորութիւնը վերառած եդ եկաւ, կանչեց էն  
ծառաներին՝ որ իմանայ տեսնի թէ ով ի՞նչքան  
է շահեցրել: Նրանցից առաջինը եկաւ ասաց թէ  
«Տէր, քու տւած տասը մնասիդ վրայ տասը  
շահեցրի»: Նա էլ գովեց և ասաց . «Բարի ծա-  
ռայ, որովհետեւ էս քիչ բանի վրայ հաւատա-  
րիմ էլար, քեզ տասը քաղաքի վրայ իշխան կը  
կարգեմ»: Միւսը եկաւ ասաց . «Հինգ մնասիդ  
վրայ՝ հինգ էլ շահեցրի»: Նրան էլ հինգ քա-  
ղաքի վրայ կարգեց : Յետոյ երբորդը եկաւ՝ և ա-  
սաց . «Տէր, էս վախենալով որ դու էնպէս մէկ  
խիստ մարդ էս, որ ձեռքովիդ չը դրած բանը՝ վեր  
ես առնում», և չը ցանածդ հնձումես, էնդուր

համար ահա առ քու մնասդ որ փաթթած պաշելից; Են ժամանակը Տէրը բարկացած ասաց , «Քու խօսքերով քեզ կը դատապարտեմ , ով անհաւաս ծառայ , եթէ դու գիտէիր որ ես էն պէս մարդ եմ , ինչի՞ իմ փողս սեղանաւորին (զառափի) չը տւիր , որ ես հիմի դայի նրանից շահով ստանայի»; Ես պատճառաւ հըրամայեց շուտով էն փողը առնեն , տասնի վրայ տասը շահեցնողին տան , և ասաց թէ «Ով ունի արժան է նրան աւելով տւայ , և չունեցողից էն քիչ ունեցածն էլ եղ առնեի»;  
Այսուհետեւ իրա թշնամիքը , որ նրան թագաւոր լինել չէին ուզում , կանչեց նրանց իր առջեր սպանել տւաւ»:

Արանից յետոյ Յիսուս որ Երիքովից դուս եկաւ և Երոսաղէմ էր գնում՝ ճամբին նորմէկանց բեթանիա մտաւ . Էնտեղ Յիմոն անունով բորսոր նրան ճաշե հրաւիրեց , և էս սեղանի վրայ ծառայում էր Մարթան , և նրա եղբայր Ղազարոսն էլ էն սեղանի վրայ նստողներից մէկն էր , ին ժամանակը սրանց քոյր Մարիամը ամանով մէկ լիտր (քաշի անուն) անուշահոտ իւղ բերաւ Յիսուսի ոտերը լուաց՝ և իր գլսի մազերով սրբեց . յետոյ էն ամանն էլ բաց արաւ՝ Յիսուսի զլուխը և ոտները օծեց էն իւղով՝ և բոլոր տունը

Նրա անուշ հոսով լքցւաւ : Են տեղ նատողները՝  
սկսան տրանջալ . «Ախան , ասացին , էդ եղին՝  
ու երեք հարիւր գենարից (շայից) աւելի կը ծախ-  
ւէր , և աղքատներին կը բաժնւէր»: Յիշուսի ա-  
շակերտներից Յուդան աւելի ախտաց , պատ-  
ճառոր՝ աղքատների զանձանակը նա էր պա-  
հում , և երբ ուզումէր ինքը էնտեղից գողա-  
նում էլ էր : Բայց Յիշուս կնկան պաշտպանելով  
զովեց , «Դա մէկ բարի գործ արաւ ինձ իմ  
մահուան օրւայ համար . աղքատները ամէն ժա-  
մանակ ձեր հետն են , երբոր ուզէք՝ նրանց կա-  
բաք ողորմութիւն անել . բայց ես միշտ ձեր հետ  
չեմ . դրա իւղ ածելը իմ մարմնուա՝ ինձ թա-  
ղելը նշանակեց»:

— 30 . Յասոյսի Փօրսիոր ՄՏՆԵԼԻ Երահսաղէմ , ԵԽ ԷԿ-

ՏԵՊ ՀՐԱԵՔՆԵՐ ԳՈՐԾԵԼԻ :

Մաս . ԻԱ . Մարկ . ԺԱ . Ղակ . ԺԹ :

Արա մեկէլ օրը կիրակի , Յիշուս բեթանիայից  
գուս եկաւ և ուզում էր որ Երուսաղէմ զնայ .  
և երբ Զիթենեաց լերան տակը հասաւ՝ աշա-  
կերտներից երկուսին ուզարկեց դիմացի գեղը և  
ասաց , «Ենտեղ գուսը մէկ էշ իր քուռակով կա-  
պած կը գտնէք , որի վրայ գեռ ոչ ոք չէ նրա-  
տել , եդ արէք և բերէք ինձ , և եթէ հարց-

նող լինի՝ ասէք թէ «իրան տիրոջը պէտք է»:  
 Աշակերտները գնացին ինչպէս որ Յիսուս ասաց,  
 դասն էն էշը, և իր քուռակով բերին Յիսուսին.  
 և յետոյ իրանց շորերը փռեցին նրանց վրայ և  
 Յիսուսին նստացրած, եկան դէպի Երուսաղէմը:  
 Երբ Երուսաղէմի ժողովուրդը լսեց որ Յիսուսը  
 դալիս է՝ դուս թափւեցան ամէնքը նրա առա-  
 ջը, և ձեռներին արմաւենոյ և ձիթենու կա-  
 նանչ Ճիւղեր բռնած՝ էնպէս մեծ ուրախութիւն-  
 նով Յիսուսի առջեւը ընկած՝ թագաւորի պէս  
 բերում էին նրան: Նրանցից ոմանք վրայի շո-  
 րերը ոտի տակ գետնին էին փռում, ոմանք ծա-  
 ռերի ճուղերով ճամբէքը զարդարումէին, և ա-  
 մէնքը միաբերան աշակերտների հետ ուրախ ու-  
 րախ երգումէին, օրհնութիւն որդւոյ Դաւթի,  
 օրհնեալ եկալ յանուն ծեառն, օրհնութիւն ի  
 բարձունս. և սրանով կատարեցաւ Զաքարիա  
 մարդարէլ խօսքը թէ՝ «Ասացէք Սիոնի (աղջկան)  
 դասեր, ահա քու թագաւորը դալիս է քեզ  
 մօտ, նատած էշ և աւանակի վրայ»: Փարիսե-  
 ցիքը և կարդացողները որ թշնամիք էին Յիսու-  
 սին, երբ էս բաները տեսան՝ սաստիկ նախան-  
 ձից չին իմանում ինչ անեն. մանաւանդ երբ  
 լսումէին էն օրհնութեան ձէները, որ մեծ ու-  
 փոքրը ձէն էին տալիս, օրհնեալ որ դայ թա-

դաւորդ յանուն Տետոն . Էս պատճառաւ եկան  
ասացին Յիսուսին որ՝ սաստի նրանց որ էսպէս  
ձէն չը հանեն : Յիսուս նրանց պատասխան տրւ-  
ւաւ . «Եթէ դբանք ձէն չը տան՝ քարերը կա-  
ղաղակեն»: Յետոյ Յիսուս երբ քաղաքին մօտեցաւ,  
մտիկ արաւ և արտասունք թափելով սկսաւ ասել .  
«Գոնէ հիմի խելքի դայիր և զգուշանայիր . ե-  
թէ ոչ խմացի որ քու թշնամիքը վրայ կը թափ-  
ւեն , և քեզ կը պաշարեն և էնպէս քարու-  
քանդ կանեն որ քարը քարի վրայ չը մնայ . ու-  
րովհետեւ դու չը ճանչցար Աստծու ողորմութեան  
ժամանակը որ դառնայիր դէպի նրան»: Էսպիսի  
փառքով թագաւորի պէս Յիսուս Երուսաղէմ  
մտնելուց յետոյ՝ գնաց տաճարը . և էնտեղ՝ տե-  
սաւ որ նստել առուտուր էին անում մարդիկ ,  
բարկացաւ նրանց վրայ և ամէնին դուս արաւ  
էնտեղից , և ասաց թէ «Ասոուած մարդարէից  
բերանով հրամայում» որ՝ իր տունը աղօթքի  
տուն լինի , և դուք աւապահների բուն էք արել»:  
Եւ էն տեղ տաճարումը էլի կուրեր և կաղեր բժշ-  
կեց . և իրինապահը քաղաքից դուս եկաւ , ա-  
շակերտաց հետ էնտեղ մօտ բեթանիա գնաց և  
հանգստացաւ :

**Միւս օրը առաւօտուն Յիսուս իր աշակերտ-  
ների հետ նորմեկանց Երուսաղէմ գնալուց՝**

քաղցեցաւ . և ճամբի վրայ մէկ թվենու . ծառ  
տեսաւ տերևներով լքցւած , երբ մօտ գնաց մտիկ  
արաւ որ ամենելին պառող չուներ ասաց . «Ել  
այսուհետեւ քեզանից ոչ ոք պառող չուտի» . և  
էս որ ասաց՝ իսկոյն թվենին չորացաւ : Միւս օրը  
Յիսուս իր աշակերտներով էնտեղից անցկենալոց՝  
աշակերտները զարմացած Յիսուսին ցոյց տւին  
«Մտիկ արա ինչպէս ողջ արմատից չորացել է  
ծառը» : Յիսուս նրանց պատասխան տւաւ . «Ճըշ  
մարիան եմ ասում ձեղ . եթէ կատարեալ հա-  
ւատքով չէ թէ միայն թվենուն , այլ էդ լերանն  
էլ ասէք թէ վերկաց ծովը ընկիր . էնպէս կը լի-  
նի . և ինչ որ հաւատով ձեր աղօթքի մէջ խըն-  
զրէք՝ կ'առնեք» :

31 . ՅԻՍՈՒՍԻ ՆՈՐՄԵԿԱՆՅՑ ԱՌԱԿԱՆԵՐԾՎ . ԽԲԱՏԵԼԸ , ԵՒ

ՀՐԵՒՑ ՊԱՊԱԿՉԱՅՆԵԼԸ :

Մատ . ԻՈ . Դուկ . Ի :

Երկու օրից յետոյ երբ Յիսուս նորմէկանց  
գնաց տաճարը , զանաղան հարցմանքներով սկսան  
քահանացավեաները և կարդացողները փորձել  
նրան : Յիսուսն էլ էսպիսի առակներով յանդի-  
մանեց նրանց . «Մէկ մարդ , ասաց , երկու որդի  
ուներ . սա մէկին ասաց թէ «Որդի , էսօր այզին  
գնայ բանի» : Նա էլ «Լաւ կ'երթամ» ասաց , և

ը գնաց : ԵՐԲ տեսաւ . որ նա ը գնաց , յետոյ  
 մէկէլ տղին ասաց որ նա գնայ : Նա էլ առաջ  
 ասաց լժէ զէմ գնայ» . Բայց յետոյ պղջացաւ  
 գնաց այդին բանեցաւ : Յետոյ Յիսուս հարցրեց  
 թէ « Կո երկու սից ո՞րը կատարեց իր հօր կամքը .  
 Նրանք ասացին լժէ յետինը : Յիսուս էլ ասաց ,  
 « Ճշմարիխն եմ ասում որ՝ էապէս էլ մաքսաւոր  
 ներն ու պոռնիկները ձեզ մէկ կողմէ կը թողնեն .  
 և իրանք արքայութիւնը կ'երթան» : Արա ետեից  
 Յիսուս « Կո առակս էլ լսեցէք , ասաց » . Մէկ տա-  
 նուտէր այդի տնկեց , և բողոքիշուր ցանգով (չա-  
 փարով) պատեց՝ տռաւ մշակներին ևինքը գնաց  
 հեռու տեղ երկար ժամանակ : Երբոր այդին քա-  
 ղելու ժամանակը հասաւ , իր ծառաներին ու-  
 ղարկեց նրանց , որ այդու պոռւղը հաւաքեն վեր-  
 առնեն : Մշակները բռնեցին էս ծառաներին մէ-  
 կին տանջնեցին , մէկէլին սպանեցին , միւսին քար-  
 քոծեցին : Տանուտէրը նորմէկանց առաջւանից  
 շատ ուրիշ ծառաներ ուղարկեց , սրանց էլ էն-  
 պէս արին : Յետոյ տանուտէրը իր մէկ հատ սիւ-  
 րեկան որդուն ուղարկեց . « Կարելի է ասաց , մը-  
 շակները սրանից ամաչեն » : Բայց նրանք էն որ-  
 դուն որ տեսան , իրանց մէջ ասացին « Ահա սա  
 տանուտէրի ժառանգն է . սրան սպանենք և սը-  
 րա ժառանգութիւնը մեզ մնայ » . և էնպէս այդիից

դուս տարան և նրան էլ սպանեցին : «Հիմա ,  
ասաց Յիսուս , ի՞նչ էք կարծում , երբոր այգու  
տէրը եղ դայ՝ ի՞նչ կ'անի նրանց» : Ասողները պա-  
տասխան տվին թէ . Կն անօրէն մշակներին չա-  
րաչար կը սպանի , և այդին կ'առնի ուրիշ մշակ-  
ներին կը տայ , որ իր ժամանակին պտուղ տան  
իրան» : Յետոյ երբ Հրեայք իմացան էս առակի  
միտքը՝ որ իրանց վրայ է , «Քաւ լիցի , ասացին  
Աստուած ոչ անի որ էղպէս լինի» :

Աէկ ուրիշ առակ էլ պատմեց Յիսուս նրանց .  
«Երկնքի արքայութիւնը նման է մէկ թագաւորին  
որ իր որդուն ուզեց հարսանիք անել , և ծառա-  
ներ ուզարկեց որ հրաւիրւածներին կանչեն : Երբ-  
որ տեսաւ որ նրանք չուզեցին դալ , էլի ուրիշ  
ծառաներ ուզարկեց նրանց և ասաց թէ «Ամէն  
բանը պատրաստ է , եկէք հարսանիքը» : Բայց նր-  
անք ականջ չ'արին , այլ ծուլացած՝ ամէն մէկը  
գնացին . իրանց բանին , մէկը իր աւուտուրին ,  
միւսը իր արտը , ոմանք էլ բռնեցին անպատիւ-  
արին էս ծառաներին և սպանեցին : Էս որ լսեց  
թագաւորը սասափիկ բարկացաւ նրանց վրայ՝ զին-  
ուորներ ուզարկեց և կոսորել տւաւ էն սպա-  
նողներին . և նրանց քաղաքը էրէլ տւաւ : Յեւ  
տոյ ասաց իր ծառաներին . «Հարսանիքս պատ-  
քաստ էր , բայց հրաւիրածները արժանի չ'ելան .

ուրեմն դնացէք վողոցներից (քուչէքից) անցու-  
դարձ անողներից, ում որ գտնէք կանչեցէք հար-  
սանիքը»: «Երանէք էլ դուս եկան ում որ գտան  
լաւ ու վատ հաւաքեցին բերին . և էնպէս լքց-  
ւեցաւ տունը հրաւիրւածներով: Յետոյ երբ թա-  
գաւորը մնաւ նրանց մօտ տեսաւ, ոյ մէկը նրա-  
բանցից հարսանիքի շոր չ'ունէր հաքին . ասաց  
նրան, ընկեր, «Դու որ հարսանիքի շոր չ'ունէիր,  
ինչի՝ մտար էս տեղ»: «Աս պապանձւեցաւ՝ էլ  
չը կարաց պատասխան տալ: Թագաւորը շուտով  
հրամայեց նրա ուսները ձեռքերը կապեն բանտը  
դձեն: Որովհետեւ կանչւածները շոտ են, բայց  
ընտրուածները սակաւ են»:

Միւս օրը Փարփօնեցիք խօսք կանչեցին՝ որ Յի-  
սուսին թագաւորի ընդդէմ իր բերանով մեղա-  
ւոր հանեն և մատնեն դատաւորի մօտ: Էս պատ-  
ճառաւ կեղծաւորութիւնով եկան ասացին թէ  
ովարդապես, գիտենք որ դու ճշմարտախօս ես,  
և ոչ ոքի երես չես պահում ճշմարիսն ես խօ-  
սում: ասա մեզ, ի՞նչ ես կարծում, պէտք է  
կայսեր հարկ (խարշ) տալ՝ լժէ չէ»: Յիսուսի-  
մանալով նրանց սատանութիւնը՝ ասաց նրանց:  
«Կեղծաւորներ, ինչի՝ էք ուզում փորձել ինձ,  
ցոյց տւէք ինձ մէկ զսհեկան, և նրանք էլ հա-  
նեցին մէկ դահեկան ձեռքը տւին: Յիսուս հար-

յըեց նրանց : «Էս ում պատկերն է կամ ում  
 զիւր՝ նրանք ասացին և այսեր : Են ժամանակը  
 Յիսուս պատահվան տւառ նրանց . «Եթէ էղպէս  
 է , ասաց ; զնացէք կայսերը՝ կայսեր , և Աստա-  
 ծունք՝ Աստծուն տւէք» : Էս որ լսեցին՝ զարմաւ-  
 ցան , և պապանձւած թողին զնացին : Արանցից  
 յետոյ Ասդուկեցիք եկան Յիսուսի մօտ , և փոր-  
 ձելով՝ Վարդապետ , ասացին : Մովսէս մարդարէն  
 օրէնքումը դրել է . եթէ մէկ պսակւած մարդ  
 անորդի մեռնի . եղբայրը նրա որբենքուն առնի .  
 և նրանից իր եղբօրը որդի թաղնի . Մէկ ժաւ-  
 մանակ մեղմեռ մը ասացին եօթը եղբայր կային .  
 սրանցից առաջնը կին առաւ , և անորդի որ մե-  
 ռաւ : Էն կնոջը՝ երկրորդ եղբայրը առաւ , և  
 նա էլ նրանից որդի չունեցաւ , և ւնպէս էն եօ-  
 թը եղբայրն էլ մէկ մէկու ետևից էն կնկան ու-  
 զեցին և անորդի մեռան . նրանցից յետոյ էն  
 կնիկն էլ մեռաւ . Հիմի ասա , վերջին դատաս-  
 տանի օրը երբ ամենքը յա ութիւն կ'առնեն . Էս  
 եօթը եղբայրնե ից որի ն պիտի լինի էն կնիկը .  
 պատճառոր եօթն էլ նրա հետ պսակւած էին»:  
 Յիսուս պատասխան տւառ նրան թէ «Դուք մոլոր-  
 ւած էք , էնդուր համար չէք իմանում ի նչէ  
 զրած սուրբ գլքումը : Էս աշխարհքիս մարդիկը  
 ասաց , կնիկ կուզեն , բայց ով որ արժանի կը լինի

էն կեանքին՝ էնաեղ կնիկ ու զել չը կայ և մաշ  
էլ չը կայ. այլ հրեշտակների պէս առնքը Աստ-  
ծու որդի կը լինին : Զէք կարդացել Մովսեսի զիր-  
քը՝ որ ասումէ . Ես եմ Աստուած Աբրահամու-  
խահակայ և Յակովայ . Եթէ սրանք հոգւով  
կենդանի չը լինէին՝ էսպէս չէր ասի Աստուած .  
որովհետեւ ինքը ոչ թէ մեռած ոչնչացածների,  
այլ կենդանիների Աստուած է»:

32. ՅԵՊՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ . ԵԿ  
ԿՈՒՍՈՒՑ ԱՌԱԿԸ :

Մարկ . ԺԵ . ՂԱԿԻ . ԻԱ . Մատ . ԵԿ :

Երբոր Փարիսեցիքը լսեցին՝ թէ Յիսուս Աս-  
դուկեցւոց պատճառաց ել է, (խօսքով կապել)՝  
Հաւաքւեցան միասին . և նրանցից մէկը փորձե-  
լով ասաց . «Վարդապետ, ո՞ր պատիրանքն է, մեծ  
օրէնքներումը»: Յիսուս ասաց նրան, «Այրին քու  
Տէր Աստծոն բոլոր սրտանց էս է մեծ և ա-  
ռաջին պատուիրանքը: Եւ երկրորդ՝ սիրի քու  
ընկերոջդ քու անձիդ պէս . սրանցից էլ մեծ ու-  
րիշ պատուիրանք չը կայ»: Էն ժամանակը Յիսուս  
դանձանակի զէմը կանգնած՝ մտիկ էր տալլս թէ  
ինչպէս ժողովուրդը դանձանակումը փող գձե-  
ցին և աեսաւ որ՝ շատ հարուստ մարդիկ և կան՝  
առատ առուք գձեցին . յետոյ աեսաւ որ մէկ

որբեերի աղքատ կնիկ եկառ՝ երկու լումայ (ման -  
 զուլ) գձեց էն գանձանակումը : Կն ժամանակը  
 Յիսուս շոռ եկառ դեպի աշակեաները և ասաց  
 «Ճշմարիտն եմ ասում ձեզ որ էս աղքատ որ-  
 բեերին ամենից շատ գձեց գանձանակումը ինչի  
 որ՝ նրանք ամենքը իրանց աւելցած փողից Աստ-  
 ծուն ընծայ տւին . բայց էս կնիկը բոլոր իր ու-  
 նեցածը ինչ որ իր ապրուստն էր հանեց տւառ»:  
 Յետոյ երբ Յիսուս տաճարից դուսէր կալիս , ա-  
 շակերտները էն տաճարի գեղեցիկ շնչի վրայ  
 վարմանալով սկսան ցոյց տալ , Յիսուս էլ նրանց  
 պատասխան տւառ թէ «Կրգայ ժամանակ՝ որ  
 քարը քարի վրայ չը ֆեայ»: Արանից յետոյ երբ  
 գնացյն Զիթենեաց լետոր նստան՝ որ տաճարի  
 զիմացն էր , Յիսուս նորմեկանց էստոր վրայ  
 երկար խօսեցաւ՝ թէ ինչպէս սաստիկ պատերազ-  
 մներով երուսաղէմը սլիտի կործանւի . և իր հա-  
 ւատացեալները ի՞նչ նեղութիւններ սլիտի քա-  
 շն . և թէ աշխարհքիս վերջն ի՞նչպէս մարդիկ  
 սլիտի մէկ մէկու հետ ընկնին , և ինքը ինչպէս  
 փառքով սլիտի գայ՝ գատաստան անի : Էս տու-  
 րից յետոյ՝ էս առակը պատմեց . «Են ժամա-  
 նակը , ասաց , երկնքի արքայութիւնը նման էր  
 ինի տասը կուսանքերին , որ իրանց լապտերները  
 (Քանարներ) ձեռներին գնացյն փետայի և հարսի

առաջ : Արանցից հինգը յիմար էին . և հինգը  
 իմաստուն . Յիմարները լապտերները վառած ձեռւ  
 ներին՝ չը մտածեցին հետները ուրիշ եղ և վեր  
 առնել . բայց իմաստունները իրանց լապտերների  
 հետ ուրիշ ամսնով էր եղ վեր առան : Փեսէն  
 ուշացաւ , նրանց քունը տարաւ ամենքը քնեւ  
 ցան կ'ս զիշերին յանկարծ ձայն եկաւ թէ  
 «Ահա վեսէն գալիս է , շուտ արեք զուս եկէք  
 նրա առաջը» : Էն ժամանակը կուսանեքը վերիաւ  
 ցան՝ և սարքեցին լապտերները : Բայց յիմարները  
 տեսան որ իրանց պակառումէ եղը և հանգչելու վրայ  
 են իրանց լապտերները . իմաստուններին ասացին  
 «Տէք մեզ ձեր եղից . որ չը հանգչին մը ըլսող-  
 տերները» : Խնասունները պատասխան ունին .  
 «Եթէ մեր եղից տանք ձեզ՝ ոչ մեզ՝ և ոչ ձեզ  
 հերիք կ'սնի . դնացէք ձեզ համար փողոցից  
 (դոքաններից) եղ առեք» : Ելք որ նրանք առնե-  
 լու դնացին , էն ժամանակը վեսէն եկաւ , պատ-  
 րասանները նրա հետ տուն մտան հարսանիքը , և  
 զուռը փակւեցաւ : Յետոյ եկան յիմարները՝ և  
 զուռը ծեծելով ասումէին . «Տէք , Տէք բաց  
 մեզ զուռը» : Ներսից պատասխան ուաւ թէ  
 «Ճշմարիտն եմ ասում ձեզ՝ որ ես ձեզ չեմ ճա-  
 նաչում» : Յետոյ ասաց Յիսուս . «Արթուն և  
 պատրաստ կացէք միշտ . ինչի՞ որ չէք իմանում»

նրա գալու օրը և ժամանակը։ Արանից յետոյ  
 Ցիսուս սկսաւ ասել վերջին դատաստանի համար  
 թէ, «Երբ, ասաց, Որովին մարդոյ կը դայ փառ-  
 քով բոլոր հրեշտակները իր հետ, կը նստի փառ-  
 աց աթոռի վրայ դատիլու աշխարհը, և նրա  
 առջեր կրծողովին ամեն աղջիրը, և կը ջոկի  
 նրանց մէկ մէկոց, ինչպէս հավեւր՝ որ ջոկում  
 է ոչխարները այծերից, և կը կանգնեցնի ոչ-  
 խարներին աջ կողմը և այծերին ձախ կողմը,  
 Եւ կ'ասի թագաւորը ձախակող նաններին։ «Ե՛՛ք  
 իմ հօրից օր հնւածներ, վայելեցէք մահք ձեզ  
 համար պատրաստած արքայութիւնը ինչի որ՝ քաղ-  
 ցեցայ, տւիք ինձ ուտել, ծարաւեցայ, խմեցրիք  
 ինձ։ օտար էի, ընդունեցիք ինձ, տկլոր էի, հագ-  
 ցրիք ինձ։ Հիւանդ էի, տեսաք ինձ, բանտումն  
 էի, եկաք ինձ մօտ։ Են ժամանակը արդարները  
 պատասխան կը տան և կ'անեն։ «Տ՛ր, երբ տե-  
 սանք քեզ քաղցած՝ և կերակրեցինք։ կամ ծա-  
 րաւ», և այն։ Թագաւորը պատասխան կը տայ և  
 կ'ասի նրանց «Ճշմարիտն եմ ասում ձեզ, որով-  
 հեամ էս իմ եղայրներիցս մեկին արիք, ինձ  
 արիք»։ Յետոյ կ'ասի ձախակող նաններին, «ին-  
 ձանից գնացէք կորէք, անիծածներ, յաւիսե-  
 նական կրակը, որ պատրաստած է սատանայի և  
 նրա հրեշտակների համար։ ինչի որ՝ քաղցեցայ»

ը տւիք ինձ ուտել . ծարաւեցայ , ը խմեցրիք  
ինձ . » և այն : Են ժամանակը նրանիք էլ կ'ա-  
սեն . « Տէր , ե՞րբ տեսանիք քեզ քաղցած կամ  
ծարաւ , և ը պաշտեցինք քեզ : Նա պատաս-  
խան կը տայ նրանց և կ'ասի . « Որովհետեւ էս  
փոքրներից մէկին չարիք , և ոչ ինձ արիք » : Կը-  
րանք կ'ել թան յաւիտենական տանջանքը . և  
արդարները յաւիտենական կեանքը : Ես ամէնը  
քարոզելուց յետոյ՝ Յիառւս ասաց իր աշակերտ-  
ներին « Գիտեք , որ երկու օրից յետոյ զատիկ կը  
լինի . և Որդին մարդոյ կը մասնելի և խաչ կը  
հանելի :

33 . ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆԱԹԻՒՆԻ , ՎԵՐՋԻՆ ԸՆԹԲԻՔԻ ԵՒ  
ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒԹՈՑ ՀԱՅՏԱՏՈՒԹԻՒՆԻ :

Մաստ . ԵԶ . Մարկ . ԺԿ . Ղուկ . ԵՅ . Յով . ԺԳ :

Զատիկից երկու օր առաջ՝ Յիառւս երբ էս վե-  
րի բաները քարոզումէր . Հրէից քահանայապետ-  
ները և ուրիները են ժամանակը միասին ժո-  
ղովեցան Կայիսարա . քահանայապետի մօտ . և խօսք  
կապեցին որ՝ Յիառւսին բռնեն և սպանեն . բայց  
մտածումէին որ՝ Են տօնի օրը չ'անեն . ը լինի  
թէ ժողովրդի մէջ մէկ շփոթ ընկնի : Են ժա-  
մանակը Յիառւսի աշակերտներից մէկը . որ Յու-  
ղա իսկարիովացի էր կոչւում , սպասանին մտաւ

Նրա մէջ . և գնաց նրանց ասաց թէ «ինձ ի՞նչ  
կըտաք որ ես Յիսուսին ձեր ձեռքը մատնեմ»;  
Նրանք էլ շատ ուրախացան, և խոստացան ե-  
սուն արծաթ տալ : Յուդան սյնուհետեւ ազատ  
ժամանակ էր պառում որ ժողովուրդի մէջ ա-  
ռանց շիոթ ընկնելու՝ Յիսուսին մատնի նրանց  
ձեռք տայ : Բաղարջուիերաց առաջի օրը աշա-  
կերաները Յիսուսի մլոր բերելով հարցըն  
թէ «Ո՞ր տեղ ես ուզում որ գնանք պատ-  
րաստենք զատկական գառը ուտելու»: Էն ժա-  
մանակը Յիսուս Զիթենեաց արումը լինելով՝ Պե-  
տրոսին և Յովհաննեսին ուղարկեց, և ասաց .  
«Գնացէք Երուսաղէմ», և երբ քաղաք մտնէք՝ մէկ  
մարդ կը պատահի ձեզ կուժը ջրով ուսին դրած՝  
Նրա ետևից գնացէք , և որ տուն որ նա մտնի՝  
Էն տանտիրոջը ասացէք թէ «Վարդապետը մեզ  
ուղարկեց քեզ մօտ ասելու , թէ իմ ժամանակս  
հասել է , կամենում եմ քեզ մօտ անել զա-  
տիկը իմ աշակերտներովս . Նա էլ ձեզ մէկ մեծ  
զարդարած վերնատուն ցոյց կը տայ , և էնտեղ  
ասաց, պատրաստեցէք սեղանը : Նրանք էլ գնա-  
ցին էնպէս արին , ինչպէս որ ասաց՝ և ամէն  
բանը պատրաստեցին : Իրիգնապահը Յիսուս եկաւ  
էնտեղ , և երբ սեղան նստաւ տասներկու աշա-  
կերտաց հետ՝ Յիսուսի առաջի խօսքը էս էր .

• Ծատ ուղումէի սրառվ՝ ասաց. Էս կատիկը իշ  
չարչարանէից առաջ՝ ձեզ հետ ուտեմ»; Յետոյ  
ուտելու ժամանակը աշակերտներին ասաց թէ  
«Զեղանից մէկը ինձ պիտի մատնի»; Էս տուր վրայ  
ամէնքը շփոթւած սկսան մէկը միւսը հարցնել  
նրան «Միթէ ես իցեմ»; Յիսուս պատասխան  
տռաւ թէ «Եա է» որ իր ձեռքը իշ հետ սկա-  
ւառակումը (թէփշումը) դրաւ»; Ին ժամանակը  
Յուղան էլ իր ձեռքը երկարացնելուց՝ հարցրեց  
«Միթէ ես իցեմ, վարդապետ»; Յիսուս ասաց  
նրան «Դու ասացիր»; Երիկնահացը վերջացնելու  
ժամանակը՝ Յիսուս վեր առաւ հացը օրհնեց,  
գոհացաւ Աստծանից կոսորեց աշակերտացը բա-  
ժնելով ասաց. «Առէք կերէք, էս իմ մարմինս է  
որ տւռումէ ձեզ՝ յետոյ դուք էլ էսպէս արէք  
ինձ յիշելու համար»; Արա ետևից բաժակը (պի-  
նիով թասը) վեր առաւ օրհնեց բարձրացրեց և  
ասաց աշակերտներին թէ «Խմեցէք սրանից ա-  
մէնքդ, սա իմ արիւնս է՝ նոր ուխտի, որ ա-  
մենիդ մեղաց թողութեան համար պիտի թափ-  
ւի»; Արանով Յիսուս հաստատեց Պատարագի սուրբ  
խորհուրդը:

Երբոր ընթրիքը վերջացրին՝ Յիսուս հանեց  
վեր դրաւ շորը, և մէկ զենքակ (փեշտամալ) կա-  
պեց. և կոնքի (լաղանի) մլջ ջուրը ածաւ՝ և

սկսաւ աշակերտների ոտերը լուանալ, և զենջակավ սրբել: Երբ Պետրոսին հասաւ կարգը, նա եղ քաշւելով ասաց. «Տէր, էղ ի՞նչ է, դու իմ ոտը պիտի լուանաս, ոչ էղ բանը չեմ թողնի որ անես»: Յիսուս ասաց նրան, «Ես ինչ որ հիմի անումեմ» դու չես խմանում, բայց յետոյ կ'իւ մանաս . թէ ըստ լուանամ քեզ՝ իմ հետ մասը չես ունենաց»: Կն ժամանակը Պետրոսն էլ ասաց. «Տէր, եթէ էդպէս է՝ ոչ թէ միայն ոսու, այլ ձեռքս էլու գլուխս էլ լուան»: «Գլուխը վրէն լուացւած մարդուն՝ բաց ի ոտներից պէտք չէ ուրիշակը լուացւիլը, նրանով էլ կարող է բոլորովին մաքուր լինել»: Բոլոր աշակերտաց ոտը լուանալուց յետոյ՝ Յիսուս նորմէկանց շորը հագաւ նստեց, և ասաց նրանց, «Գիտէք ինչի՞ համար ձեզէդպէս արի . դրւք ինձ վարդապետ և Տէր էք կու շում. և ճշմարիտ էք ասում, ինչպէս որ եմ. ուրեմն եթէ որ ես ձեր Տէրն ու վարդապետը՝ ձեր ոտները լուացի, դուք էլ պէտք է մէկ մէկու ոտերը լուանաք, ինչպէս ոյ ձեզ օրինակ աւի»:

Արանից յետոյ Յիսուս քիչ էլ խօսեցաւ և յետոյ նորմէկանց ասաց. «Զեպանից մէկը ինձ պիտի մասնի»: Աշակերտները կրկնն սկսան շփոթվիլ և էնտեղ Յիսուսի մօտ նստած էր Յովհաննէսը իր սիրելի աշակերտը՝ Պետրոսը աչքով արաւ

նրան որ հարցնի թէ ով է էն մատնիը : Յիսուս  
պատասխան տռաւ . Որին ևս էս թաց պատառը  
տամ՝ նա է» . և տռաւ Յուդային . և էն ժա-  
մանակը սատանէն Յուդայի սրտումը աւելի հաս-  
տատեց՝ Յիսուսի դէմ ատելութիւնը , և իր ա-  
գահութեան ախտը : Կատուր համար Յիսուս էլ  
ասաց նրան թէ «ինչ որ անելու ես՝ արա շու-  
տով» , բայց էս խօսքի միտքը ոչ ոք նատողներից  
չը հասկացաւ , այլ կարծեցին թէ , էն տօնի օ-  
րերին ինչ որ պէտք է թող գնայ առնի : Յու-  
դան էս որ լսեց , շուտ դուս եկաւ և էն գի-  
շերը գնաց Յիսուսի թշնամիներու մօտ՝ որ մատ-  
նի Յիսուսին , ինչպէս որ նրանց հետ խօսք էր  
կազել :

34. ՅԻՍՈՒՍԻ ԿՏԱԿՐ , ՆՐԱ ԱՂՅԹՔ ԱՆԵԼԸ ԻՐ ԵՒ ԱՇԱ-

ԿԵՐՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ :

Յովէ . ԺԳ . ԺԳ . ԺԵ . ԺԶ . ԺԷ :

Երբ Յուդան դում եկաւ՝ Յիսուս սկսաւ աշ-  
սել , «Հիմա փառաւորւեցաւ Որդին մարդոյ . և  
Աստուած էլ փառաւորւեցաւ նրա մէջ : Որդեակք  
իմ , փոքր ինչ ժամանակ ձեզ հետ եմ , կը պըտ-  
ուէք ինձ , և ուր ես գնումեմ : Դուք չէք կա-  
րող դալ : Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ , որ  
մէկ մէկու սիրէք , ինչպէս ես ձեզ սիրեցի . էս-

արովլիմանան ամէնքը՝ որ դուք իմ աշակերտա  
 ներ էք, եթէ կը սիրէք մէկ մէկու»։ Կս խօսե-  
 լուց յետոյ՝ ասաց, «Կս գիշեր դուք կը ցրուէք  
 և ինձ մենակ կը թողնէք»։ Արա վրայ Պետրոսը  
 շուտ վրայ բերաւ թէ վէդ բանը եթէ ամենն էլ  
 անեն՝ ես չեմ անի + այլ պատրաստ եմ քեզհետ  
 մինչեւ անգամ մեռնիլ էլ»։ Յիսուս պատասխան  
 տւաւ «Ի՞նչ ես ասում ինձ համար մեռնիլ. Ճշ-  
 մարիսն եմ ասում քեզ. ոյ էս գիշեր դեռ  
 հաւը երկու անգամ չը խօսած՝ դու երեք ան-  
 գամ կուրանաս ինձ»։ Յետոյ էլի շարունակեց  
 Յիսուս «Եթէ սիրումէք ինձ, իմ պատուիրան-  
 ները պահեցէք, և ես կ'աղաւեմ ջօրը որ ուրիշ  
 մսիթարիչ տայ ձեզ, որ յաւիտեան ձեզ հետ  
 քնակուի . Ճշմարտութեան հոգին, որին աշխարհ-  
 քըս ընդունել կարող չէ, պատճառոր չէ տես-  
 նում նրան, և ոչ էլ ճանաչումէ նրան. բայց  
 դուք ճանաչումէք նրան և ձեզ հետ կը լինի .  
 Զիմ թողնի ձեզ որբ. փոքր ժամանակից յետոյ  
 էլաշխարհքըս չի տեսնի ինձ . բայց դուք կը տես-  
 նէք ինձ, ինչի որ ես կենդանի եմ և դուք կեն-  
 դանի կը լինիք : Իմ խաղաղութիւնը թողնում  
 եմ ձեզ, իմ խաղաղութիւնը տալիս եմ ձեզ .  
 չէ թէ ինչպէս աշխարհքս տալիս է ձեզ էնպէս եմ  
 բայլիս ես ձեզ, մի շվաթէք ձեր սիրաները և

մի վախենաք : Դուք իմ բարեկամներ էք, եթէ  
 կը կատարէք՝ ինչ որ պատուիրումեմ ձեզ : Եւ  
 ծառայ չեմ ասում ձեզ, այլ բարեկամ կոչեցի,  
 պատճառոր՝ ինչ որ լսեցի իմ Հօրիցս՝ ամէնը իւ  
 մաց արի ձեզ : Ահա կը գայ ժամանակ և արա  
 գէն եկել հասել է, որ կը ցրւիք ամէնքդ իր տես  
 ղը, և ինձ մենակ կը թողնէք՝ բայց չեմ մենակ,  
 ինչի որ Հայրը իմ հետս է : Ես խօսեցայ ձեզ  
 հետ, որ ինձ հետ խաղաղութիւն ունենաք, էս  
 տեղ աշխարհքումն նեղութիւն կունենաք . բայց  
 սիրտներդ պինդ պահեցէք, պատճառոր՝ ես յաղը  
 թեցի աշխարհքին»: Ես որ խօսեցաւ Յիսուս,  
 աչքերը գձեց երկինքը և ասաց . «Հայր, փառաւ  
 որիր քու Որդուդ, որ նա էլ քեզ փառաւորի,  
 ինչպէս տւիր նրան իշխանութիւն ամէն մարմնու  
 վրայ, որ ամենին յաւիտենական կեանք տայ : Ես  
 է յաւիտենական կեանքը, որ քեզ միայն ճաւ  
 նաշեն Ճշմարիտ Աստուած և Յիսուսին Քրիստոսին,  
 որին դու ուղարկեցիր : Ես քեզ փառաւորեցի էս  
 երկրում, գործքերը կատարեցի, որ տւիր ինձ  
 կատարելու : Հիմա փառաւորիր ինձ Հայր, քու  
 փառքովդ, որ էս աշխարհքիցս առաջ ունեի քե-  
 զանից . Հայր, յայտնեցի մարդկանց քու անունը.  
 որոնց տւիր ինձ աշխարհքիցս . քու խօսքը որ  
 տւիր ինձ, ես էլ տւի նրանց : քու խօսքը պատ

Հեցին և հաւատացին՝ որ դու ուղարկեցիր ինձ։  
 Հիմա նրանց համար եմ աղաջում։ Հայր սուրբ,  
 պահիր նրանց քու անունովդ, որ նրանք մէկ  
 լինին, ինչպէս որ մենք մէկ ենք։ Սուրբ պահիր  
 նրանց քու ծշմարտութիւնով։ ինչի որ՝ քու բանը  
 ծշմարտութիւն է։ Մենակ նրանց համար չեմ  
 աղաջում, այլ ամեն հաւատացելոց համար էլ  
 նրանց ինձ տւած խօսքով։

35. ՅԱՍՈՒՍԻ ԱՂՅԹ-ՔԸ ՊԱՐՏԷՉՈՒՄԸ, ԷՄԲՈՆՈՒՄԸ, ԴԱ-

ՏԱՊԱՐՏՈՒԽԵԼԸ, ԵՒ ՊԵՏՈՒՍԻ ՈՒՐԱՆԱԼԸ։

Մատ։ Ի՞՞ ։ Մարկ։ ԺԴ։ Ղուկ։ Ի՞ ։ Ցով։ Ժմ։

Արանից յետոյ՝ գիշերով դուս եկաւ Յիսուս  
 իր աշակերտներով գնաց դիպա Զիթենեաց լեառլ  
 և երբ անց կացաւ Կեդրոնի ձորից էն կողմբ և  
 մասու Գեթսեմանի զեղը, թողաւ էնտեղ աշա-  
 կերտներին, և նրանցից միայն վերառաւ իր հետ  
 Պետրոսին։ Յակոբոսին և Յովհաննէսին՝ և մտաւ  
 մէկ պարտէզ և ասաց աշակերտներին թէ «Տըր-  
 առումէ իմ անձս մինչեւ յմահ, արթուն կացէք  
 էս տեղ սպասեցէք ինձ», ինքը նրանցից քիչ ա-  
 ռաջ գնաց՝ ընկաւ երեսի վրայ, աղօթք արաւ  
 ասելով «Հայր, եթէ կարելի է աղատիր ինձ էս  
 շարչարանքից։ բայց ոչ թէ ես, այլ ինչպէս դու-  
 կա Անումես, և էն ժամանակը սաստիկ նեղու-

թիւնից սկսաւ արեան քրտինք թափւել և էն-  
 տեղ երկնքից մէկ հրեշտակ եկաւ նրա մօտ մը-  
 խիթարելու և սիրտ տալու : Յետոյ եկաւ տե-  
 սաւ որ՝ էն երեք աշակերտները ասատիկ տրտմու-  
 թիւնից ընկած քնած էին, զարթացրեց նրանց,  
 ասաց որ վերկենան աղօթք անեն որ փորձութեան  
 մէջ չընկնեն, և ինքն կրկին գնաց աղօթք ա-  
 նելու : Յետոյ մէկ էլ եղ եկաւ նրանց մօտ՝ վար-  
 թացրեց, և գնաց Երրորդ անգամ որ եկաւ «Ոյ-  
 սուհետեւ ասաց, պառկեցէք և հանգատացէք.  
 ահա հասաւ ժամանակը որ թշնամեաց ձեռքը  
 մատնեմ» : Ես ասելուց՝ մէկ էլ տեսնես բաւա-  
 կան մարդիկ՝ զինուորներ էլ հետները, Յուղան  
 առաջ ընկած, ջահերով (մաշլալէքով) զէնքով,  
 եկան Յիսուսին մօտ : Յուղան՝ ինչպէս որ նրանց  
 նշան էր տւել, գնաց . Յիսուսին համբուրելով  
 ասաց. ողջոյն քեզ վարդապետ, Յիսուս պատաս-  
 խան տւաւ. «Ինձ համբուրելով ես մատնում» :  
 Յետոյ էն բազմութեան առաջ եկաւ Յիսուս, և  
 նրանց հարցրեց. «Ո՞ւ մն էք ուզում» : Երբ Յիսուս  
 ասացին, «Յիսուս Նազովրեցուն» : Երբ Յիսուս  
 նրանց ասաց թէ «Ես եմ» . Յուղան և նրանք  
 ամէնքը սարսափելով եղ եղ գնացին և գեանի  
 վրայ թափւեցան : Էն ժամանակը Յիսուսին բրո-  
 նեցին կապեցին, բայց աշակերտները էստուըլ

չամբերելով՝ սկսան ընդդիմանալ, և Յիսուսից  
 հրաման ուզեցին սուր քաշել նրանց, և էն շփո-  
 թի մէջ Պետրոսը մէկի վրայ թռորը քաշեց և  
 աջ ականջը թռոցրեց, որ Մաղքոս անունով քա-  
 հանայապետի ծառաներից մէկն էր: Բայց Յի-  
 սուս էնտեղնէւտ վրայ հասաւ ականջը բժշկեց՝  
 և Պետրոսին ասաց «Թուրդ իր տեղը դիր, Հօր  
 Աստծու տւած չարչարանաց բաժակը մի՞ թէ  
 սիրտի ըլ խմեմ, ի՞նչ ես կարծում, ասաց, չե՞մ  
 կարող աղաւել Հօրս, որ հիմա եօթանասուն եր-  
 կու հաղարից աւել հրեշտակ ուղարկի՝ և ինձ  
 սրանց ձեռից աղասի: բայց էն ժամանակը, ա-  
 սաց, չէր կասարւի էն գրւած մարդարէտիւն-  
 ները, որ ասել են թէ էսպէս պէտք է լինի:,  
 Յետոյ Յիսուսին էնպէս կապած՝ առաջ տաշան  
 Աննա քահանայապետի մօտ, որ սկսաւ Յիսուսին  
 հարցուփորձ անել աշակերտների և իր քա-  
 րողութեան համար. Յիսուս պատասխան աւառ ։ Ես  
 ծածուկ (թագուն) չե՞մ խօսել ես յայտնի խօ-  
 սեցայ աշխարհքումն և սովորացրի ժողովուրդին  
 տաճարումը. ինձ ի՞նչ ես հարցնում: հարցրու  
 լսողներին: Ես որ ասաց Յիսուս, էն ժամանակը  
 քահանայապետի ծառաներից մէկը՝ ապտակ (սիլս  
 լսիեց) տւառ Յիսուսին: Եղալս ես պատասխան  
 տալիս քահանայապետին: Կա էլ ասաց նրան:

«Եթէ ծուռը բան ասացի՝ էն վկայիր իսկ եթէ  
Ճշմարիսն եմ խօսելը ինչի՞ ես խփում ինձ»:  
Յետոյ էնտեղից տարան կայիափա քահանայա-  
պետի մօտ և էնտեղէլ քահանաները և կարդա-  
ցողները միասին եկել էին՝ որ Յիսուսին քննեն.  
սրանք սկսան սուտ վկայ պտուել, որ նրանով դա-  
տապարտեն Յիսուսին և սպանեն. երկու սուտ  
վկաներ առաջ բերին, որ սուտ վկայութիւն էին  
տալիս և ասում «Մենք լսեցինք որ ասումէր թէ  
«Ես կարող եմ Աստծու տաճարը քանդել, և  
երեք օրումը նորմէկանց շինել»: Բայց էս երկու  
վկաների խօսքը մէկ մէկու նման չէր : Էն ժա-  
մանակը քահանայապետը ասաց Յիսուսին՝ ինչի՞  
էստուր պատասխան չես տալիս»: Յիսուս բոլորովին  
լուռ կացած բան չասաց : քահանայապետը նոր-  
մէկանց ասաց նրան . «Աստծու անունով երդւե-  
ցնումեմ քեզ որ ասես թէ՝ դու ես Քրիստոսը  
Աստծու որդին»: Յիսուս պատասխան տւառ թէ  
«Դու ես ասում որ ես եմ, և վերջին դատաս-  
տանի օրը Աստուածային զօրութիւնովն երկնքի  
ամպերի վրայ պիտի տեսնէք իմ գալ»: Էս որ  
լսեց քահանայապետը, կատղեցաւ վթի շորերը  
պատռակեց և ասաց . «Տեսէք սրա հայհոյանքը.  
այսուհետեւ վկայ էլ պէտք չէ, ամէնքդ լսեցիք .  
ինչպէս է երկեռում ձեզ»: Նրանք պատասխան աւելն

թէ «Ամհապարտ (մեռնելու արժան) է»։ և էնտեղ  
 մէկը միւսը սկսան անարդելով նրա երեսին թքել  
 խփել, և անչափ նախատինք տալ նրան . ոմանք  
 էլ երեսին քող գձեցին և էնտէս խփումէին և  
 ծաղը անելով հարցնումէին, «Եթէ Քրիստոն ես՝  
 մարդարէացիր թէ ո՞վ է, որ քեզ խփեց»։ Ես ժա-  
 մանակը Պետրոսը՝ որ Յիսուսի ետևից քահա-  
 նայալեաի տօնն էր մտել, երբ դուսը ծառ անե-  
 րի հետ կրակի մօտ նստել տաքնումէր, էնտեղ  
 քահանայապետի աղախինը եկաւ՝ մտիկ արաւ  
 և ասաց «Հա դու էլ Յիսուս Նազովրեցւոյ հետ-  
 քն էլոր»։ Պետրոսը պմենի առջեւ ուրացաւ ա-  
 սաց թէ «Ես չեմ ճանաչում նրան, չը դիտեմ  
 դու ի՞նչ ես ասում»։ Ես խօսքի վրայ իսկոյն  
 հաւը խօսեցաւ, Յետոյ էնտեղից դուս եկաւ Պետ-  
 րոսը, և որիշ մէկ կնիկ էլ տեսաւ նրան և մարդ-  
 կերանց առջեւը ասաց թէ «Աս էլ Յիսուսի հետն  
 էր»։ և նրանք էլ վրայ տալով որ հարցրին, նա  
 էլի ուրացաւ թէ «Չեմ ճանաչում նրան»։ Յե-  
 տոյ էլի քիչ անցկացաւ՝ մէկը որ Մաղքոս ծա-  
 ռայի աղդական էր, Պետրոսին որ տեսաւ թէ չէ՝  
 ասաց, «Դու նո չետ որ ես քեզ տեսայ պարտե-  
 զումը Յիսուսի հետ»։ Ես խօսքին ուրիշներն էլ  
 վկայելով ասացին «Իրաւ սա էլ Յիսուսի հետ է,  
 ինքը Գալիլեացի՝ ինչպէս իր լեզուն էլ ցոյց է

տալիս։ Բայց Պետրոսը երրորդ անգամն էլի նոյնը ասաց թէ «Ձեմ ճանաչում դրան»։ և խկոյն հաւը խօսեցաւ։ Են ժամանակը Յիսուս էն չարչարանքի մէջ՝ զլուխը բարձրացրեց մտիկ արաւ Պետրոսին՝ և սրանով նրա միտն եկաւ Յիսուսի ասածը. և շուտով վրայ ընկնելով՝ սաստիկ զղջացաւ. դուս եկաւ էնտեղից, և սկսաւ դառն արտասունքով լաց ըլել իր ու բացութեան վրայ։

36. ՅԻՍՈՒՍԻՆ ՊԵՂԱՏՈՍԻ ՄՈՏ ՏԱՆԵԼԸ, ՆՐԱ ԶԱՐՉԱՐԱՆՔԻ

ԵՒ ՊԱՏԱՊԱՐՏԵԼԸ

Մատ. ԽԵ. Մարկ. ԺԵ. Ղուկ. ԽԳ. Յով. ԺԹ. ԺԹ:

Հինգշարթի զիշերը չարչարեցին Յիսուսին և ուրբաթ առաւոտը վաղ նոր մեկանց բոլոր քահանաները և կարգացողները՝ խօսք կապեցին որ էլ չ'ուշացնեն շուտով սպանեն նրան։ Բայց Հրեաները իրանք չեն կարող էս բանը զլուխ բերել էս ողատճառաւ Յիսուսին տարան Պիղատոսի մօտ։ Են ժամանակը Յուդան տեսնելով որ Յիսուս դատապարտեցաւ և պէտք է մեռնի՝ զըդաց և իր առած երեսուն արծաթը տարաւ քահանայապեաներին եղ տւաւ և ասաց. «Մեղայ որ էսպէս արդար մարդու արեան մ.ջ խառնեցայ։ Կը անք էլ ասացին թէ «Մեղ ի՞նչ զուինքդ գնա մտածիր»։ Յուդան էն փողը տարաւ

տաճարը դճեց, և ինքը գնաց յուսահատութեա-  
նից կախ ընկաւ խեղդւեցաւ: Քահանայապետ-  
ներն էլ էն փողը արեան դին է ասելով՝ չը վեր  
առան, այլ խորհուրդ արին՝ և նրանով մէկ բրախ  
ագարակ գնեցին (առեցին) որ օստարականների (զա-  
րիբների) գերեզմանատուն լինի, և էս պատճա-  
ռաւ էնտեղը՝ Արեան Ագարակ առեցաւ:

**Եւ** երբոր Յիսուսին տարան Պիղատոսի մօտ,  
սկսան նրա վրայ սուտքաներ խօսել թէ ոչս մար-  
դը մոլորեցնումէ մեր ազգին, և չէ թողնում  
հարկ (խաղջ) տալ կայսերը, և ասումէ թէ ինքը  
Քրիստոսն է կամ Միսիան է և թագաւոր է կոշ-  
ում իրան: Պիղատոսը մօտ կանչեց Յիսուսին և  
առանձին հարցրեց թէ «Ի՞ն էս Հրէից թա-  
գաւորը»: Յիսուս պատասխան տւաւ «Ենպէս է՝  
ինչպէս որ ասացիր, բայց իմ թագաւորութիւնը  
էս աշխարհքիս վրայ չէ՝ բայց եթէ էնպէս լինէր՝  
իմ ծառաներս չեն թողնին որ էս Հրէաների  
ձեռը ընկնէի: այլ ես եկել եմ աշխարհք, որ ճըշ-  
մարտութիւն քարովեմ» Պիղատոսը նորմէ կանց  
Յիսուսին տարաւ էն Հրէաների առջեւը կանգնա-  
ցրեց, և ասաց թէ «Ես էս մարդուս մէջ մէկ  
վեաս (մեղք) չեմ գտնում, որ սրան սպանել  
տամ»: Էն ժամանակը նրանք նորմէ կանց կատ-  
ղեցան և սկսան զանազան բաներ ասել Յիսուսի

վրայ : Յիսուս ամենելին պատասխան չէր տալիս ,  
մինչև որ՝ Պիղատոսը զարմանու մէր որ նա իր բերանը չէր բաց անում և իր անմեղութիւնը չէր ցոյց տալիս : Յետոյ երբ Պիղատոսը իմացաւ որ Յիսուս Գալիլեացի է , և Հերովդեսի իշխանութեան տակն է՝ ուղարկեց նրան Հերովդեսի մօս ,  
որ Էնօրերումը Երուսաղէմումն էր : Նա երբոր տեսաւ Յիսուսին՝ ուրախացաւ , ինչի՞ որ վաղոց ցանկանումէր տեսնել նրան , որովհետեւ շատ բան էր լսել նրա համար և ուզումէր որ մէկ հրաշք էլ անի նրա առջեւը : Կս պատճառաւ շատ հարցու փորձ արաւ նրան . բայց Յիսուս ոչ ինչ ուստասիսան չը տւաւ : Յետոյ Հերովդէսն էլ անարգելով և ծաղրանելով՝ սպիտակ շուր գձել տւաւ վըէն և եգ դարձրեց Պիղատոսի մօս :

Էն ժամանակը Պիղատոսը Յիսուսի վրայ չարախօսողներին ասաց թէ « Դոք սրան ինձ մօս բերիք որպէս մէկ խռովար մարդ բայց ինչպէս դուք էլ տեսաք՝ ես քննեցի անսայ և սրա մէջ ոչ ինչ յանցանիք չը դտայ . նմանապէս և Հերովդէսը ոչ ինչ չը դտաւ սրա մէջ՝ որ մեռնելու արժանի ինի . ուրեմն խրատենք սրան թողնենք դնայ . պատճառոր՝ վատկին սովորութիւն ունէին մէկ բանտարկուած (բանած) աղատելլ : Էն ժամանակը բանտումը մէկ աւաղակ կար՝ Յեսու

բարարբար անունով. Երբոր Պիղատոսը էս ասաց՝  
 քահանայապետները, իշխանները և ժողովուրդը  
 յորդորեցին, էնպէս որ ամեջը միաբերան ձէն տը-  
 ւին թէ «Բարարբային արձակել», և Յիսուսին  
 խաչ հանել»։ Սրա վրայ Պիղատոսը լաւ հասկա-  
 նալով Յիսուսի անմեղութիւնը՝ և նրանց չարնաւ-  
 խանձը՝ ուզումէր Յիսուսին ազատել։ Էս պատ-  
 ճառաւ ուշացրեց բանը և նորմէ կանց հարցրեց  
 «Արա ի՞նչ անեմ ձեր Հրէից թագաւորին։ Ի՞նը-  
 րանք ձէն տւին թող խաչի»։ Նա էլ ասաց, «Ինչի՞,  
 ի՞նչ վատ բան է արել. Ես սրա մէջ սպանելու  
 մեղ չը տեսայ»։ Նրանք ամենքը աւելի կատղած  
 կանչումէին «Ուզումենք որ խաչես»։ Վերջապէս  
 Պիղատոսը ջուր ուզեց նրանց առջել լւաց ձեռ-  
 ները՝ և ասաց. «Ես իմ ձեռքս էդ անմեղ մար-  
 դու արեան մէջ չեմ շաղաղի, դուք դիտէքս։  
 Բոլոր ժողովուրդը պատասխան տւաւ «Թողլ մեր  
 վրայ՝ մեր որդւոց վրայ լինի դրա արիւնը»։ Էն  
 ժամանակը Պիղատոսն էլ իր զինուորներին տւաւ  
 որ չարչարեն նրան։ Նրանք էլ Յիսուսին լաւ ծե-  
 ծեցին. և յետոյ վրից շորերը հանեցին, և  
 ծաղը անելով մէկ կարմիր շոր հազցրին, փշեց  
 թագ կապեցին դրին նրա գլխին, և ձեռին եւ-  
 զեզը (զամիշի կտոր) տւին գաւազանի տեղ. առ-  
 ջել ծունը դնելով ծաղը էին անում և ասում,

« Աղջ լեր, թագաւոր Հրէից»։ և թքելով երեսին  
առնումէին ձեռից եղեգը՝ և խփումէին դլխին։  
և ոմանք էլ ապտակ (սիլա) էին տալիս երեսին։

Յետոյ Պիղատոսը Յիսուսին էսպէս ողորմելի  
կերպարանքով նորմէկանց Հրէաների առջեր զուս  
բերաւ և ասաց։ «Իմացէք որ ես սրա մէջ դա-  
տապարտելու բան չը գտայ։ ահա ձեր մարդը  
ձեղ, վեր առէք ինչպէս ուղումէք խաչեցէք»։  
Նրանք պատասխան տւին «Մեր օրէնքը ասումէ  
որ էդպիսի մարդը պիտի խաչւի։ ինչի որ՝ ինքն  
իրան Աստծու Որդի է կոչում»։ էս որ լսեց Պի-  
ղատոսը՝ ահ ընկառ նրա սրատումը, էս պատճա-  
ռաւ նորմէկանց Յիսուսին առանձին սկսաւ հարց-  
նել թէ «Դու ով ես, ի՞նչ աեղից ես եկել»։ Յի-  
սուս ամենեւին պատասխան չը տւաւ։ Պիղատոսը  
ասաց։ «Ի՞նչ է որ հետո չես ուզում խօսել։  
չես իմանում որ իմ ձեռիս է քեզ խաչելու կամ  
ազտտելու իշխանութիւնը»։ Յիսուս պատասխան  
տւաւ։ «Դու չէիր ունենայ իմ վրէս իշխանու-  
թիւն, եթէ տւած չը լինէր քեզ վերևից։ էս  
պատճառաւ էլ ով որ ինձ մատնեց քեզ մօտ՝ նա  
է մեղաւորը»։ Էս խօսքի վրայ Պիղատոսի խղճ-  
մտանքը աւելի տանջեց, ու զումէր որ Յիսուսին  
ազտի։ բայց Հրէայք նորմէկանց սկսան ձէն տալ  
և Պիղատոսին ասել «Եթէ դրան ազտես՝ էլ

բարեկամ՝ չես կայսեր»։ Են ժամանակը Պիղաւառուսը նորմէկանց Հրէից առջեւը դուս բերաւ Յիսուսին և ասաց . «Ո՞հա ձեր թագաւորը ձեզ»։ Նրանք էլի սկսան կանչել . «Վերցրու վերցրու մեր միջից գրան, և խաչ հանի»։ Պիղատոսը էլի հարցրեց «Ի՞նչ է ուզում էք որ ես ձեր թագաւորին խաչ հանեմ»։ Քահանայապետները ասացին «Մենք բաց ի կայսրը թագաւոր չունենք»։ Յետոյ երբ տեսաւ Պիղատոսը որ էլ ոչինչ չը կարաց օգնել վճռեց էն ուրբաթ օրը Հրէից զատակի տօնին կէսօրւայ ժամանակը և Յիսուսին տեսաւ նրանց ձեռքը որ տանեն խաչ հանեն և Յետու բարարբարին ազատեն .

37. ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԹԱՂՈՒՄԸ :

Մատ . Իէ . Մարկ . Ժէ . Ղուկ . ԻԳ . Յով . ԺԹ :

Են ժամանակը Պիղատոսի վինուորները բռնեցին Յիսուսին և նրա վրից հանեցին կարմիր և ծիրանի քղամիզը (վերարկու) և նորմէկանց հագցրին իր շորերը, և էնապէս խաչը ուսին դրած աանումէին դէպի Գողգոթա լեառը։ Ճամբին գընազուց մէկ մարդ գտան Ախման կիւրենացի առնունով . նրան բռնեցին որ Յիսուսի հետ տանի էն խաչախայտը։ Յիսուսի ետեից շատ ժողովուրդ էր զնում տղամարդիկ և կնանիք և սիրաները

յաւելով լաց էին լինում նրա վրայ : Յիսուս եղ  
 մտիկ տւառ և ասաց . «Երուսաղեմի դստեք , իմ  
 վրէս մի' լաց ըւէք , այլ ձեր վրայ և ձեր որդւոց  
 վրայ լաց ըւէք . կրգայ ժամանակ որ՝ կ'ասեն«Երնեկ  
 ամուներին (չը բեր) որ որդի չեն ծնել , և լեռ-  
 ներին՝ թէ՝ «Փուլ եկէք մեր վրայ ծածկեցէք  
 մեզ որ էս նեղութիւնները չը աեսնենք . եթէ  
 դալար (կանանց) ծառին էս են անում՝ ապա  
 չորին ի՞նչ կը լինի»: Երբար Գողգոթա լեառը  
 հասան , Յիսուսին լեզիով խառը դինի տւին . նա  
 էլ համը որ տեսաւ չուզեց խմել . Յետոյ շորերը  
 հանեցին և էնպէս մերկ (տկրոր) վեր քաշեցին  
 խաչի վրայ և մեխեցին . և երկու կողմիցն էլ  
 աջուձախ մէկ մէկ տւաղակ խաչեցին , անօրէնք-  
 ների հետ հաւասարելով : Էն ժամանակը Յիսուս  
 խաչի վրայ աղօթք արաւ և ասաց «Հայր , թոռ  
 դրանց իրանց մեղքը , պատճառոր՝ իրանք էլ չեն  
 իմանում թէ ի՞նչ են անում»: Պիղատոսը մէկ  
 տախտակի վրայ գրել տւառ՝ թէ Աս է Յիսուս  
 «Նաղովքեցի Հրէից թագաւորը . և էնպէս զնել  
 տւառ խաչի վրայ : Էս որ տեսան Հրէաները , խըն-  
 զրեցին Պիղատոսից թէ մի' դրի՝ թագաւոր Հր-  
 էից , այլ թէ՝ նա ինքը ասաց թէ թագաւոր եմ  
 Հրէից : Պիղատոսը պատասխան տւառ «Ինչ որ  
 գրեցի՝ գրեցի (գրածս էլ փոխել չել լինի)»: Էն

ժամանակը զինուորները վերկալան Յիսուսի շու  
 րերը չորս բաժին արին՝ և իրանց մէջ բաժնե-  
 ցին . եւ պատմուծաներ (կարէն) որ անկար էր՝  
 ավաստացին կորուել . վիճակ գձեցին և էնալէս  
 ընդուռ մէկին : Հրէից քահանացառեաները և իշ-  
 խանները իրանց ժողովութել Յիսուսի առջեր դա-  
 շով և նախառնելով առումէին . «Թէ Աստծո որ-  
 դի եօ՛ հիմա աղատիր քեզ, ցած արի էդ խա-  
 չից՝ որ քեզ հաւատանք . մտիկ տւէք սրան,  
 առումէին; որ ուրիշներին աղատեց, և ինքն իրան  
 չէ կարողանում աղատել . եթէ իր յոյսը Աստ-  
 ծու վրայ է դրել, թող Աստուած հիմի աղատի  
 սրան էստուրից»: Զինուորներն էլ նրանց տեսա-  
 նելով ծաղը էին անում և նախատումէին : Էս-  
 բաւական չէր, այլև էն խաչւած աւաղակներից  
 մէկը շուռ եկաւ դէպի Յիսուսը և ասաց . «Եթէ  
 դու Քրիստոն ես՝ աղատիր քեզ և մեզ»: Հն-  
 ժամանակը մէկէլ աւաղակը բարկացաւ նրան և  
 ասաց . «Դու չես վախենում Աստծանից, չէ՞ որ  
 դու էլ մի և նոյն պատիմէն ես քաշում . մենք,  
 ասաց, մեզ արժան պատիմէր կրումենք, բայց սա  
 մէկ վատ բան չէ արելու: Յիսուս ասաց Յիսուսին.  
 «Ճէր, յիշեր ինձ երբոր քու թաղաւորութիւնով  
 դալիս լինես»: Յիսուս պատասխան տւաւ թէ  
 «Ճշմարիան եմ ասում քեզ էսօրիմ հետ դրախ-

տումը կը լինես»։ Յիսուսի խաչելութեան ժամանակը իր աղջականներից էլ եկել էին մօտք սրբանց մէջ Յիսուս տեսնելով իր մօրը Մարիամ՝ Կուսին և սիրելի աշակերտ Յովհաննէսին, որին ցոյց տալով իր մօրը՝ ասաց «Ահա քու որդիդ» և մօրն էլ աշակերտին ցոյց տալով ասաց «Ահա քու մայրդ», և սրանից յետոյ Յովհաննէսը վեր առաւ Մարիամին իր մօտ։ Կէսօրւայ դէմը վեց ժամին Յիսուսին խաչի վրայ բեեռելուց՝ արեգակը խաւարեցաւ։ Բոլոր աշխարհը մընացաւ երեք ժամի (սահամթի) շափ, և ինն ժամուն՝ կէս օրից երեք ժամ անց կացած՝ Յիսուս բարձր ձէնով կանչեց, «Էլի Էլի լամասաբաքթանի, Աստուած իմ, Աստուած իմ, ինչի<sup>o</sup> թողիրինձ»։ Յետոյ Յիսուս ասաց «Ծարաւ իմ»։ շուտ վաղեց մէկը՝ սպոնզը թաթիսեց քացախումը՝ և եղեղի վրայ անցկացրած Յիսուսի բերնին երկարացրեց։ «Նա էլ երբ համը տեսաւ, ասաց, ամեն բանիը կատարեցաւ»։ և էլի բարձր ձէնով կանչեց։ «Հայր! Հոգիս աւանդումեմ քու ձեռքիդ»։ և էնակս գլուխը ծռեց՝ և հոգին առաւ։ Էն ժամանակը տաճարի վարագոյրը վերից ցած պատռեցաւ, գետինը ժաժ եկաւ և ապառաժ քարերը ճղքւեցան։ գերեզմանները բաց էլան, և շատ սուրբեր յարութիւն առան։ և Երուսաղէմումը

շատերին երեւացին : Էնտեղ հարիւրապետը և  
ուրիշները էս հրաշքները անմելով սարսափեցան  
և Յիսուսի համար ասացին թէ «Ճշմարիտ որ  
սա Աստծու որդի էր» : Նմանապէս ժողովուրդը,  
որ էն տեղ տեսան էն ամէնը, Յիսուսին խղճաւ  
լով կուրծքերը ծեծելով վերկացան եղ գնացին :  
Եւ երբոր երեկոյ էլաւ, Հրէաները խղճմտանք ա-  
նելով թէ օրէնքին ընդդէմ՝ չը լինի թէ նրանց  
մարմինները մինչեւ միւս օրը խաչի վրայ մնան .  
որովհետեւ էն շաբաթ օրը նրանց մեծ տօն էր,  
գնացին Պիղատոսից հրաման առան նրանց ծընկ-  
ները ջարդելու՝ որ շուտ մեռնեն, և էնտեղից  
վերկալան : Էս պատճառաւ եկան զինուորները  
առաջ էն երկու աւագակների ծնկները ջարդե-  
ցին, յետոյ երբ աեսան որ Յիսուս հոգին ա-  
ւանդել է՝ նրանը էլ չը ջարդեցին, այլ զինուոր-  
ներից մէկը ձեռի աէգով (մզրաղով) Յիսուսի  
կողը խոցեց. և խկոյն արիւն և ջուր դռւս ե-  
կաւ կողքից :

Էն ժամանակը Յովսէփի արեմալթացին, որ ինքը  
Հրէից իշխան էր. և ծածուկ Յիսուսի աշակերտ՝  
զնաց Պիղատոսից հրաման առաւ որ Յիսուսի  
մարմինը խաչից վեր բերի և գերեզմանումը դնի.  
Սա Նիկողիմոս իշխանի հետ միասին եկան խո-  
չից ցած բերին Յիսուսի մարմինը և պատով

պմւսեցին (անուշահաս խղավ օծեցին) և մաքուր  
կառառվ փաթթած՝ էն տեղ խաչելութեան տեղի  
մօտ մէկ պարտէզումը՝ նոր քարից փորած դե-  
րեզմանումը դրին և մէկ մեծ քար դրին զե-  
րեզմանի վրայ և գնացին։ Բայց շաբաթ առաւու  
առ քահանայապեսները և Փարիսեցիք նորմէ, կանց  
գնացին Պիղատոսի մօտ և ասացին թէ և Միտներս  
ենք բերում որ էն խաբեբան երբ սաղ էր՝ ասում  
էր թէ և երեք օրից յետոյ յարութիւն պիտի առ-  
նեմ։ Հրաման առ որ՝ գերեզմանի վրայ պահապան  
կանգնի, չը լինի թէ նրա աշակերտները գիշերով  
դան գողանան մարմինը, և ժողովուրդի մէջ ձէն  
գձեն թէ յարութիւն առաւ ։ և էստրով յե-  
տին մողորութիւնը վաս կը լինի առաջւանից։  
Պիղատոսն էլ ասաց թէ «Գնացէք ինչպէս որ ու-  
զումէք՝ էնալէս արէք»։ Նրանք էլ գնացին զե-  
րեզմանի քարը պնդացրին (դայմացրին) վրէն կնիք  
(մուհը) դրին ։ և էնալէս մօտը պահապաներ դրին։

38. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹՎԻՆԸ, ԱՇԱԿԵՐՏԱՅ ԵՐԵՒԱՆՄԸ

ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ։

Մատ. 10. • Մարկ. 39. • Ղուկ. 19. • Յով. 1. • ԻԱ.:

**Կ**արաթ երեկոյին խղաբեր կնանիքը Մարի-  
սմ Մադգաղենացի, Մարիսամ Յակոբայ, Յոհանն-  
նա և Սովորեց միասին եկան, խունկ և անու-

շահուս եղ պատրաստեցին որ դնան Յիսուսի մարք  
 մինը օծեն : Առաւոտը շատ վաղ Շամբին դնալուց՝  
 տարակուսումէին թէ գերեզմանի մեծ քարը ով  
 սկիտի գլորի : Բայց մինչև նրանց էնտեղ համելլը  
 յանկարծ մէկ գետնաշարժ էլաւ . և երկնքից ձխ-  
 նի պէս սպիտակ շորերով հրեշտակ վեր եկաւ, և  
 էն դրան քարը մէկ կողմը դրաւ . և նստաւ վրէն :  
 Էս բանիս վըայ էն պահապան զինուորները վա-  
 խից մեռելի պէս գետնին ընկան , և նրանցից  
 ոմանք էլ վազեցին քաղաքը և պատմեցին քա-  
 հանայապետներին էս հրաշքը . նրանք էլ միա-  
 սին խորհուրդ արին , և շատ փող տւին նրանց  
 որ բանք թագուն մնայ՝ ոչ ոքի չասեն . այլ էն  
 պէս ձէն գձեն թէ զիշերով իրանք որ քնած էին,  
 Յիսուսի աշակերտները եկել նրա մարմինը գողա-  
 ցել են . և թէ որ ձէնը դատաւորի անկածին էանի ,  
 մենք կրհամոզենք նրան ( կր հաւանա-  
 ցնենք ) և ձեզ ապահով ( անհոգ կանենք ): Էն իւ-  
 ղարեր կեանիքը երբ որ եկան գերեզմանի դուռը  
 բաց տեսան և ներս մտան, էլ Յիսուսի մարմինը  
 ըս գտան, այլ տեսան երկու լուսաւոր հրեշտակ,  
 և մէկը նրանցից ասաց նրանց . ԱՄի՛ վախենաք,  
 զիտեմ որ Յիսուսին էք պառում , բայց էստեղ  
 չէ յարութիւն է առել ինչպէս ձեզ առաջուց  
 ասել էր, և թէ գնացէք Յիսուսի աշակերտացք

աշտքալուս արեք էս բանը»; Բայց սրանցից Մարիամ Մագդաղենացին, երբ տեսաւ որ Յիսուսի  
 մարմինը գերեզմանի մէջ չէ՝ շուտով եկաւ Պետրոսին և Յովհաննէսին գտաւ և նրանց ասաց թէ  
 «Մեր տիրոջը գերեզմանից վեր են առել, չենք  
 իմանում» թէ որ տեղ են դրել նրանք էլ նրա  
 հետ գերեզմանը եկան՝ տեսան որ Յիսուսի մար-  
 մինը չըկայ. Մարիամին թողին էնտեղ, և իրանք եդ  
 եկան որ միւս աշակերտներին պատմեն: Են ժաման-  
 ակը Մարիամ Մագդաղենացին որ մէնակ գերեզ-  
 մանի մօտ կանդնած լաց եր ըլում: Էն հըեշտակները  
 նրան հարցըրին: Կին դու, ինչի՞ ես լաց ըլում:;  
 Նա ասաց թէ «Իմ տիրոջը գերեզմանից վեր են  
 առել, և չեմ խմանում ո՞ւր են տարել»: Ես  
 ասելուց՝ եդ մօիկ տւառ տեսաւ մէկ մարդ և  
 չը ճանաչեց որ Յիսուսն էր կարծեց թէ պար-  
 տիզապան (բազմանչի) է. Յիսուս հարցըրեց նրան:  
 «Կին դու, ինչի՞ ես լացը ըլում, ո՞ւ մն ես պտռում»:  
 Նա պատասխան տւառ թէ «Տէր եթէ դու ևս  
 վեր առել, ասա՞ ո՞ւր տարար դրիր, որ գնամ  
 էնտեղից վերառնեմ»: Են ժամանակը Յիսուս ձին  
 տւառ»: և նա շուտ իմացաւ, և նրան պատաս-  
 խան տւառ, «Բարբեւնի» (Վարդապետ). և վա-  
 գեց որ ուները լնենի, բայց Յիսուս չը թողաւ  
 որ անժամանակ իրան մօտենայ այլ ասաց որ դը

նայ աշակերտներին պատմի, և ասի թէ նա ինքը  
պիտի համբառնայ : Յետոյ Յիսուս էնտեղից որ  
աներեւոյթ էլաւ՝ Մարիամը շուտ դնաց էս բանը  
աշակերտներին պատմելու :

Ին օրը Յիսուսի աշակերտներից երկուսը՝ որ  
գնումէին Եմմաւուս զեղը էս բաների վրայ խօ-  
սելով, Յիսուսն էլ չը յայտնուելով հասաւ նրանց  
և գնումէր հետները . հարցրեց նրանց թէ «ին-  
չի՞ վրայ էք խօսում» և էդպէս տիրած էք զը-  
նում» : «Նրանցից մէկը որ կղէավաս էր կոչւում  
ասաց նրան թէ «Դու միայն ես մնացել Երու-  
սաղէմումը» որ էս օրերումն էնտեղ անցկացած  
բաները չես խմացել . թէ ինչպէս Յիսուս նա-  
զովրեցուն էն սուրբ և արդար մարդուն՝ մեր իշ-  
խանները բռնեցին խաչի վրայ սպանել տւին,  
որի վրայ մենք յոյս ունէինք թէ նա պիտի փրկի  
իսրայելացւոց» . և մէկ քանի կնանիք հրեշտակ-  
ներից լսելեն թէ Յիսուսը կենդանի է : Ես լսե-  
լով Յիսուսը երեմներին տւաւ թէ ի՞նչպէս միտ-  
ներ չեն բերում մարգարէից ասածները Քրիստո-  
սի վրայ՝ որ կատարւեցաւ . յետոյ մէկ մէկ մեկ-  
նում էր նրանց ամեն տնօրինական խորհուրդ-  
ները, երբոր իրիզնապահը Եմմաւուս զեղը հա-  
սան, Յիսուս էնպէս ցոյց տւաւ թէ ինքը աւելի  
հեռու տեղ պիտի գնայ . նրանք էլ երեկոյ է աշ-

սային և չը թողին՝ պահեցին իրանց մօտ : Եւ  
յետոյ երբ նրանց հետ իրիգնահացին նստաւ, Յիւ  
սուս հացը վեր առաւ օրհնեց . և կտրտելով  
նրանց որ տւաւ թէ չէ աչքները բաց էլուս, շուտ  
ճանաչեցին նրան . և ինքը իսկոյն աներեցիթ  
էլուս նրանց առջելից : Նրանք նորմիանց եղ  
պնացին Երուսաղէմ միւսների մօտ, և դեռ իւ  
րանք իրանց պատահած բանը չասած՝ տեսա  
նում են որ միւս առաքեալները նրանց պատ  
մում են թէ Յիսուս յարութիւն է առել և  
երեացել է Պետրոսին :

Երբ առտքեալք միասին հաւաքւած Հրեա-  
ների ահից դռները կողպած էս բաների վրայ  
խօսումէին, Յիսուս յանկարծ երեւեցաւ նրանց  
մէջ . «Ողջոյն ձեզ, ասաց, ես եմ՝ մի՛ վախե-  
նաք», Նրանք էնպէս որ շփոթւած և սիրտները  
տակնուվրայ էլած մնացել էին, Յիսուս «Եկէք,  
ասաց, բռնեցէք ձեռս ու ոտս որ իմանաք թէ  
ես եմ»; Յետոյ նրանցից ուտիլու բան ուզեց,  
և նրանք էլ քիչ խորված ձռէն և մեղք տւին  
Յիսուս վեր առաւ կերաւ նրանց առջել և մը-  
նացածը տւաւ իրանց : Եւ յետոյ ասաց նրանց  
զնապէս որ Հայրը ուղարկեց ինձ՝ ես էլ ուղար-  
կումեմ ձեզ» . վիշեց նրանց և ասաց . «Առէք  
Սուրբ Հոգին : Ում մեղքը որ թողնէք՝ թողած

լինի, ումը կապէք՝ կապած լինի»։ Ես ժամանակը  
Թովմաս առաքեալը էնտեղ չեր և յետոյ երբ եկաւ-  
նրանց մօտ և նրանցից լսեց թէ «Մենք հիմա  
տեսանք Յիսուսին», Թովմասը ասաց. «Ես մինչեւ  
որ աշքովս ըստեսնեմ նրա ձեռքի միջի մեխի  
նշանը, ձեռովս էլ ըրբոնեմ. և ձեռքս ըլ կըպ-  
ցնեմ նրա կողքին՝ չեմ հաւատա»։

Արանից յետոյ մէկ անդամ էլ աշակերտները  
Տիրերիայ ծովի մօտ ձուկը բռնելու ժամանակը՝  
երկեցաւ նրանց Յիսուս և նրանք որ բոլոր դի-  
շերը աշխատել էին և ոչինչ չեին բռնել, Յի-  
սուս նրանց ծովի մէկ կողմը ցոյց տւաւ որ ուռ-  
կանը էնաեղ գձեն, երբոր էնպէս արին, շուտ հա-  
րիւր յիսունի շափ մեծ մեծ ձկներ դուս քա-  
շեցին. Ես հրաշքիս վրայ աշակերտները իմա-  
ցան որ ինքը Յիսուսն է, մօտ եկան և միասին  
նստան էն ձկները եփեցին կերան։

Արանից յետոյ տասնումէկ աշակերտները դը-  
նացին Գալիլեայի լեառը, ուր Յիսուս ժամադիր  
էլաւ նրանց, և երբ որ աեսան Յիսուսին երկը-  
պատութիւն տւին, և մէկ քանիսն էլ տարեկուսե-  
ցան: Յիսուս մօտ գնաց և ասաց նրանց. «Ամէն իշ-  
խանութիւնը տւաւ ինձ երկնքումը և երկրումն՝  
ինչպէս որ Հայրը ուղարկից ինձ էնպէս էլ ես

ուղարկում եմ ձեզ։ Գնացիք ամեն հեթանոս  
ներին սովորացրէք և նրանց միլտեցէք յանուն  
չօր և Որդւոյ և Հոգւոյն Արբոյ։ Սովորացրէք նրանց  
էն ամէնը պահելինչ որ պատուիրեցի ձեզ։ Եւ ահա  
ես էլ ձեզ հետեմ ամեն օր, մինչեւ աշխարհքիս  
վերջը։

Ով որ կըհաւասայ և կըմլլտի կ'ապրի,  
և ով որ չի հաւասայ՝ կըդառապարտի։ Նրանց  
նշաններն են որոնք կըհաւասան՝ նրանց ետևից  
կ'երթան։ Իմ անունով դեւք կըհանեն, լիզու-  
ներ կըխօսին, օձեր կըբռնեն ձեռներին, և եթէ  
մահաղեղ խմեն՝ նրանց ոչինչ վնաս չի տայ հի-  
ւանդների վրայ ձեռք կըդնեն և կըբժշկին։ —

Բացի ասածներից Յիսուս իր յարութիւնից  
յետոյ էն քառասուն օրւայ մէջ շատ անգամ  
երեւցաւ իր աշակերտներին և սովորացրեց նրանց  
երկնքի տրքայութեան ճանապարհը։ և հրամա-  
յեց որ սպասեն մինչեւ որ ինքը կ'ուղարկի Հոգին  
Սուրբ և կըւքցնի նրանց շնորհքով։ Արանից յե-  
տոյ Յիսուս հաւաքեց միասին իր աշակերտներին  
և տալու նրանց բեթանիայի մօտ Զիթենեաց  
յետուր, և էնոնեղ օրհնելով՝ նրանց աչքի առա-  
ջեր համարձաւ երկինքը Երբ ամակերի մէջ մտաւ  
անել եղի՛ ելաւ, էնոնեղ երկու հրեշտակ սպիտակ

շորերով երևեցան նրանց և ասացին ո Ով Գառ-  
լիեացիք, ի՞նչ էք զարմացած դեպի երկինքը մտիկ  
տալիս. Էս Յիսուսը որ Հիմա ձեզանից վերացաւ եր-  
կինքը գնաց, նոյնպէս մ.կ օր պիտի դայ փառքով ։  
Աշակերաներն էլ երկրպագութիւն տւին Յիսուսին  
և փառք տալով Առաջուն եղ եկան Երուսաղէմ։





15

3 2 3 2 4 3 3  
4 3 5 9 4 9 9 4

1558



63  
9881  
891

11:514  
58  
591  
81  
15.5

52  
15  
52

1558

